Էջմիածին

ՈՒՆԴ
ԺԲ. ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

V

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Հանուն խաղաղության 3

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— Կոչ, ուղղյալ հավատացյալ հայերին 6

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ.— Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին և խաղաղության պաշտպանությունը . . . 8

Երջանկահիշատակ Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցը 10

Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրությունը . . 13

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.—Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի մասնակցությունը խաղաղության կողմնակիցների համամիութենական հինգերորդ կոնֆերանսին . . 21

Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Մայր Տաճարի վերականգնման աշխատանքների բերքը 24

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ.— Նոր դիտողություններ հորենացու Պատմության բառապաշարի մասին 29

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Հայրենիքի գիտնականների կարծիքը հայ ժողովրդի կազմավորման մասին 38

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 46

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— Արվեստագետ Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովայի ծննդյան 70-ամյակը 48

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 52

Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյան նախագահեց էջրեֆիլի Ս. Հակոբ եկեղեցվո օծումին 54

Լանջախաչի տվչություն հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Անեմյանի . 54

Հյուսիսային ամերիկայի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան էվքնստոնի մեջ 54

Վարչական ընտրություններ և վավերացում Հարավային Ամերիկայի թեմերում 55

Ռ. Մ.— Արտմ երեմյան 56

Ս. ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց» 58

Հանգիստ արժանապատիվ Տ. Նիկոլ ավագ քահանա Թավեյանի . . 60

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաստանմանից ստացած նոր հրատարակությունները 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Տպված է 1955 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1955—1956 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը դիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գավակ եղող 18-ից 30 տարեկան ամուրի այն անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և մաթեմատիկայից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված թեմական խորհրդի կամ եկեղեցական վարչության հոգևոր պետի կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար:

Հայաստանի և միութենական երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն ոչ ուշ քան սույն թվի օգոստոսի 15-ը, իսկ արտասահմանյան երկրների թեկնածուները՝ ոչ ուշ քան հոկտեմբերի 1-ը:

Դիմումները պիտի տրվեն անձամբ կամ փոստով հետևյալ հասցեով՝

Հայկական ՍՍՌ, Էջմիածին, Հոգևոր Ճեմարանի Վերատեսչություն:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԴԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ապրիլ ամսի առաջին օրերին, հայ ժողովուրդը հայրենի Մաղամեռում, գյուղերում, ավաններում, ամենուրեք, սովետական եղբայրական ժողովուրդների և աշխարհում բարի կամքի տեր միլիոնավոր խաղաղասեր մարդկանց հետ, իր ստորագրությունը դնելով Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ, մի անգամ ևս արտահայտեց խաղաղությունը պաշտպանելու իր անհկուն կամքն ու անհահանջ պատրաստակամությունը, պահանջելով արգելել ատոմային, ջրածնային և մասսայական ոչնչացման բոլոր տեսակի զենքերը, դատապարտելով ատոմական պատերազմի նախապատրաստումը:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կոչը լայն արձագանք գտավ նաև հայ հավատացյալ ժողովրդի սրտում: Հայաստանյայց Առաքելական և Սուրբ Եկեղեցին, ինչպես միշտ, այս անգամ ևս, իր խաղաղասիրական ձայնը միացրեց աշխարհում խաղաղություն պահանջող բազմամիլիոն մարդկանց ձայնին:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից, իր գիտակից և դրական վերաբերմունքն է արտահայտել հոգուտ այդ շարժման, որովհետև ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՇՏ էլ ԽԱՂԱՂԱՍԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ է ԵՂԵԼ, իր պատմության ողջ ընթացքում:

Խաղաղության պաշտպանության ի նպաստ, 1949 թվականին, հնչեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տրժանընտիր և մեծագործ Հայրապետ Նորին Ս. Սծություն հոգելույս Տ. Տ. Գեորգ Զ. Կարողիկոսի ձայնը Մայր Արոռ Ս. Էջմիածնից. «Մենք այսօր իրավունք չունենք լռելու, երբ համայն մարդկության ապագա անվտանգությունն ու խաղաղ կյանքի խոստումը ենթակա է վտանգի և տևական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր բշվառության առաջ: Մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համայա ամբողջ մարդկության դավանած կրոնների սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին և շահերին...»:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու խաղաղասիրական ձգտումը բնական ու տրամաբանական հետևությունն է հայ հավատացյալ ժողովրդի դարավոր հավատքի. Հայ Եկեղեցու ժողովրդանվեր ոգու, հայ ժողովրդի հայրենասիրական, մարդասիրական վեհ իդեալների: Ահա թե ինչո՞ւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, «որ հնագույն եկեղեցիներից մեկն է աշխարհում, մշտապես աղոթել է աշխարհի խաղաղության և մարդկանց բարեկամության համար: Այսօր էլ Հայոց Եկեղեցին, հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում խաղաղության կողմնակիցների սուրբ գործին» (Գեորգ Զ.):

1955 թվականի մարտին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Գե-

ռագույն Հոգևոր Խորհրդի անունից հրատարակվեց մի կոչ, ուղղված հայ հավատացյալ ժողովրդին, որտեղ մի անգամ ևս դրսևորվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու խաղաղասիրական կամքը: «Մեր բազմադարյան պատմության ողջ ընթացքում, —ասվում է այդ կոչում,— ...բազում անգամներ տառապած և նահատակված հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին, անդադար փայփայել են անցյալում՝ ազատ և խաղաղ ապրելու նվիրական իղձը: Ս. Էջմիածնի Տերազույն Հոգևոր Խորհրդի սրտառուչ կոչը հրավիրում է յուրաքանչյուր հայ հավատացյալ մարդու բարձրացնելու իր հոգերուխ աղոթքը առ Աստված, որ իրոք աշխարհում հաղթահարեն խաղաղության բարի ուժերը, որ համայն մարդկությունը այլևս չտեսնի արտասուք ու տառապանք, կործանում ու մահ, որ փրկության ափին հասած մեր ժողովուրդը, մեր վերածնված Մայր Հայրենիքը, սովետական ազատ եղբայրակցության մեջ, շարունակի իր արդար վերելքը՝ ստեղծարար աշխատանքի ու շինարար կյանքի հանապարհով»:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրական կամարների տակ միշտ էլ հնչել են խաղաղության օրհներգերն ու աղերսները: Հայ հավատացյալ ժողովուրդը, դարեր շարունակ, իր պապերի լուսեղեն խրատների առաջ ծերադիր, ու մինչև այսօր էլ ամեն օր երկյուղածորեն և սրբությամբ աղոթում է «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», և ասվածառաք այդ խաղաղությունը ցանկանում է «ամենեցուն», այսինքն բոլոր ազգերին, կրոններին, լեզուներին: Ամբողջ 16 դար, ո՛չ հուրը, ո՛չ սուրը և ո՛չ էլ ժամանակը չեն կարողացել մարել հայ հավատացյալ ժողովրդի սրտում խաղաղության այդ սերը:

Հայ ժողովուրդը, աշխարհի ամենահին ու կուլտուրական ժողովուրդներից մեկը և առաջին քրիստոնյա ժողովուրդը աշխարհում, իր պատմության բովանդակ ընթացքում շատ քանկ է վճարել խաղաղության համար: Նա շատ է տառապել, աղոթել, պայքարել խաղաղության համար: Քրիստոնեական ո՛չ մի եկեղեցի, անցյալի ո՛չ մի ժողովուրդ, իր պատմության ընթացքում, այնքան բուռն սիրով չի ձգտել խաղաղության, չի պայքարել հանուն խաղաղության, որքան մեր ժողովուրդը: Մեր կրոնական սքանչելի պոեզիայի, հոգևոր բանաստեղծության ամենահիմնական թեմաներից մեկը եղել է խաղաղության թեման, որովհետև դարերով հայ ժողովուրդը զուրկ է մնացել խաղաղությունից: Միշտ սուր են բարձրացրել մեր երկրի ազատության և անկախության վրա, վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը, արհամարհել են մեր լեզուն ու եկեղեցին, ավերել ու ամայացրել են մեր ծաղկուն քաղաքները ու շեն ավանները, ոչնչացրել են հայ ժողովրդի ստեղծագործած նյութական և հոգևոր կուլտուրայի հուշարձանները, և մեր ժողովրդի անմեղ արյունով են ներկել հայրենի դաշտերն ու գետերը: Բայց հակառակ այս բոլոր արհավիրքներին, հայ հավատացյալ ժողովրդի հոգում չի մարել երբեք խաղաղության սերն ու ձգտումը. և վերջնական հաղթանակի ակամամբ պայծառ ու անբեկանելի հավատքը: Խաղաղությունը մեր ժողովրդի հոգու պայծառ ու տևական երազն է եղել:

Ցնորք չի եղել երբեք անցյալում հայ ժողովրդի մեծ վիշտն ու տառապանքը, անարև կյանքն ու անխաղաղ գոյությունը: Երեսուն դարեր տառապել է նա, իր կյանքի և պատմության վերջին երեսուն բախտավոր ու խաղաղավետ տարիների համար, երբ ի վերջո գտել է խաղաղության և ազգային-եկեղեցական վերածնության միակ ու փրկարար ուղին:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի Դիմումի տակ իր ստորագրությունն է դրել նաև հայ հավատացյալ ժողովուրդը, այն պայծառ գիտակցությամբ, որ պատերազմը չարիք է, որ պատերազմը ոնիր է երկնքի դեմ, Աստուծու դեմ, մարդկության վեհ իդեալների ու նվիրական զգացմունքների դեմ:

Հայ հավատացյալ ժողովուրդը, իր դարավոր բազմափորձ իմաստությամբ, հասկացել է խաղաղության արժեքն ու բարիքները, ուստի և կանգնել է խաղաղասեր ժողովուրդների ընտանիքում, խաղաղության համար մղվող պայքարի առաջին շարքերում:

Խաղաղության պահպանման հարցը մանու և կենաց հարց է այսօր աշխարհի բոլոր ժողովուրդների, կրոնների, ողջ մարդկության և քաղաքակրթության համար: Խաղաղության համար մղվող պայքարում մեծ դեր ունի կատարելիք Քրիստոնեական Ընդհանրական եկեղեցին, այսօր մանավանդ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին լրիվ հասկանում է վտանգի լրջությունը, և նա այն խորունկ համոզմունքն ունի, որ ժողովուրդների խաղաղասիրական ձգտումները, քրիստոնեական եկեղեցիների խաղաղասիրական իղձը, տարբեր կրոնական ու քաղաքական հայացքներ ունեցող ազնիվ մարդկանց համախմբվածությունն ու միասնությունը հանուն խաղաղության մղված աննկուն պայքարում, եկանխեն հոր պատերազմների ու արյունահեղությունների սարսափները:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ժողովուրդներին հասցրած վերքերը դեռևս

լիովին չեն ապաքինվել, երբ այսօր նորից վտանգված է խաղաղությունը, և վախ կա ա_ վելի անավար ոճիրների մեջ թաղելու այն լա_ վագույնն ու գեղեցիկը, ինչ ստեղծվել է սե_ ռունդների աշխատանքով, ճանճարով ու պայքարով: Եվ հենց դրա համար էլ, այսօր քան մի այլ ժամանակ, երկրագնդի բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց ուշա_ դրությունը սրտատրոփ կենտրոնացել է խա_ ղաղության մեծ գործի շուրջ, որովհետև, այ_ սօր ավելի քան երբեք, քրիստոնյա և ոչ քրիս_ տոնյա աշխարհը կարիքն ունի հանապազօր_ յա հացի, ջրի, արևի շափ, տևական խաղա_ դության, համերաշխության, փոխադարձ հասկացողության:

Աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, բոլոր կրոնները ու դա_ վանությունները, այդ թվում և Հայաստան_ յայց Առաքելական Սուրբ եկեղեցին, խաղա_ ղություն են պահանջում աշխարհի համար, մարդկանց համար, ներկա և գալիք մարդ_ կային սերունդների համար: Ահա թե ինչո՛ւ այսօր ժողովուրդները, որոնք տեսել ու ապ_ րել են պատերազմների սարսափները ու ար_ ճավիրքները, պատրաստ են իրենց սեփ_ական կյանքով փակելու ընդմիշտ պատե_ րազմների արյունոտ ճանապարհը և մեծագույն խաղաղություն նվաճելու:

Մյուս կողմից, մխիթարական է տեսնել, որ աշխարհի ողջ աշխատավորությունը, տարբեր պրոֆեսիայի և կրոնական համոզ_ մունքների տեր մարդիկ, ընտանիքի հայրեր, կոլտուրայի մշակներ, բարի հոգևորական_ներ, դեմ են պատերազմին և իրենց ջանքե_ րը միավորել են ազնիվ պայքարում, հանուն խաղաղության վերջնական հաղթանակի:

Խաղաղության աստվածաճառ գործը ամ_ բողջ աշխարհում վայելում է բոլոր խաղա_ դասեր և աշխատասեր ժողովուրդների ջերմ համակրանքը: Խաղաղության գործը իրենց սեփական ձեռքերի վրա են վերցրել ժողո_ վուրդները. նրանց շարքերում է կանգնել նաև հայ ժողովուրդը, որն իր անցյալի կենսա_ փորձի վրա ակտիվ պայքար է մղում հանուն խաղաղության:

Անմահ է ժողովուրդը և արդար է նրա սուրբ գործը: Խաղաղությունը կհաղթի պա_ տերազմին: Ցարերը, Կայսրները միշտ պատժվել ու պարավել են: Արդարությունը մնացել է և կմնա բարի և ազնիվ մարդկանց կողմը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին չի ունեցել և չունի այլ շահեր, քան հայ ժողո_ վրդի միասնական շահը, քան Հայրենիքի շահը:

Եվ այսօր մանավանդ, մեր ժողովուրդը, մեր եկեղեցին կարիքն ունեն խաղաղության, որից զուրկ են մնացել հազարամյակների ընթացքում:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը համոզված են, որ բարի կամքի առկայության և փոխադարձ հասկացողության պայմաններում, կարելի է լուծել բոլոր հարցերը և աշխարհում ապահովել բոլորի համար երկարաև խաղաղություն, երբ, ըստ Ավետարանի անսուտ վկայության, երկրի վրա կիրագործվի երկնքի արքայությունը, երբ առյուծն ու գառը միասին կճարակեն և կիրականանան նույն մարգարեի կրակե խոսքերը. «Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուինս իւրեանց ի մանգաղս, և ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր և ոչ ևս ուսանին տալ պատերազմ»:

Ինչպես միշտ, այս անգամ ևս, հայ հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, իր ուժերը կհամախմբի խաղաղության երկնա_ քաղաքի շուրջ և քրիստոսավանդ խաղաղության և մարդասիրական կրակով վառված կաղոթի Հայաստանյայց Առաքե_ լական եկեղեցու լուսեղեն խորանների առաջ սրտեռանդն՝ «զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք քշնամեաց, տրե_ կեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»:

Խաղաղությունը կհաղթի պատերազմին: Ա՛յս է հայ հավատացյալ ժողովրդի խորունկ համոզմունքը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԿՈՉ, ՈՒՂՂՅԱԼ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՅԵՐԻՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր սպասավորների և համայն հավատացյալ ժողովրդի անունից սրտի անհուն գոհունակությամբ ողջունում ենք Վիեննայի՝ խաղաղության Համաշխարհային խորհրդի ընդլայնված բյուրոյի որոշումները ու հայտարարությունը՝ ընդդեմ ատոմային պատերազմի պատրաստման, ընդդեմ մասսայական ոչնչացման ծառայող այդ աճարկու զենքի գործածման, որն ուղղված պիտի լինի բոլոր ժողովուրդների խաղաղ ու շինարար առաջընթաց կյանքի դեմ:

Մեր բազմադարյան պատմության ողջ ընթացքում բարբարոս արշավանքների ու ավերիչ պատերազմների հետևանքով բազում անգամներ տառապած և նահատակված հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին, անդադար փայփայել են անցյալում՝ ազատ և խաղաղ ապրելու նվիրական իղձը: Ահա թե ինչու խաղաղության և ամբողջ աշխարհի ժողովուրդների համերաշխ գոյակցության կողմնակիցների շարժումը այնքան խոր արձագանք է գտել մեր ժողովրդի գիտակցության մեջ, այդ շարժման ստեղծման առաջին իսկ օրից:

Այդ խոր արձագանքի արտահայտիչը հանդիսացավ մեր եկեղեցվո նորոգ հանգուցյալ մեծ Հովվապետ՝ Տ. Տ. Գեորգ Զ. Գատրիարք-Կաթողիկոսը, որ իր անմոռանալի կոչերից մեկում պատգամում էր մեզ բոլորիս՝ «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որ հնագույն եկեղեցիներից մեկն է աշխարհում, մշտապես աղոթել է աշխարհի խաղաղության և մարդկանց բարօրության համար: Այսօր էլ, Հայոց եկեղեցին, հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում է խաղաղության կողմնակիցների սուրբ գործին»:

Այս առաքելաշունչ խոսքերը կարդալիս ո՞ր հայ մարդու սիրտը չի լցվի ազնիվ ու ջերմ եռանդով, և ո՞ր հայ մարդը չի բարձրացնի իր հոգեբուխ աղոթքը առ Աստված, որ իրոք աշխարհում հաղթանարեն խաղաղության բարի ուժերը, որ համայն մարդկությունը այլևս չտեսնի արտասուք ու տառապանք, կործանում ու մահ, որ փրկության ափին հասած մեր ժողովուրդը, մեր վերածնված Մայր Հայրենիքը, սովետական ազատ եղբայրակցության մեջ, շարունակի իր արդար վերելքը՝ ստեղծարար աշխատանքի ու շինարար կյանքի հանապարհով:

Պատերազմը, իր բոլոր նոր տեսակի մահաստիպուտ զենքերով, իր վրա է հրավիրել բոլոր բարի կամքի մարդկանց, բոլոր ազգությունների լայն զանգվածների ամենախոր ատելությունն ու դատումը: Մարդկային բանականությունը

և բարոյական խիղճը չեն կարող ըմբռնել ու երբեք չեն կարող բարոյաբարել ատոմային պատերազմի սանձազերծում:

Այն ատոմային ուժը, որի խաղաղ նպատակների գործածումը— ինչպես այդ ցույց տվեց սովետական գիտությունը— մոտավոր ապագայի մեջ իսկ՝ անհախրնթաց բարգավաճության ու երջանկության դարաշրջան կարող է բանալ ճամայն մարդկության համար, չի կարելի հանդուրժել, որ այդ նույն ուժը ծառայեցվի մարդկային զանգվածային բնաջնջման և բազում սերունդների արդար հրիներով ու հանճարով ստեղծված՝ նյութական և մշակութային բարիքների ու արժեքների ոչնչացման:

Մենք հավատում ենք, թե բոլոր ժողովուրդների խիստ զգոնությամբ և բոլոր եկեղեցիների ու կրոնական դավանությունների գործակցությամբ, թույլ պիտի չտրվի, որ մարդկանց փոքրաթիվ մի խմբակ հանարձակվի իր հակամարդկային ծրագրերը իրագործել:

Կայենների թույլ պիտի չտրվի սպանել իրենց եղբայրներին: Սովետական աշխարհի և բոլոր երկրների հավատացյալ հայրենակիցնե՛ր, միացե՛ք բոլորդ անխտիր՝ խաղաղության երկնառաք գաղափարի շուրջը և լսեցե՛ք նվիրական ձայնը, որ հիմա վերստին հնչում է մեր հազարամյա Սրբության Սրբոց՝ Միածնեաէջ Մայր Տաճարից:

Քրիստոսավանդ խաղաղության և մարդասիրության կրակով վառված՝ եկե՛ք, միացե՛ք սուրբ վարանումի՝ խաղաղությունը դավանող և խաղաղության համար մարտնչող բոլոր ազնիվ մարդկանց հետ, սովետական խաղաղասեր ժողովուրդների կողքին, և պահանջեցե՛ք ատոմային ռումբի ու բոլոր տեսակի մասսայական բնաջնջման զենքերի արգելումը:

Եկե՛ք և օգնեցե՛ք հանուր մարդկության սրբազան գործին, քար քարի վրա չարեցե՛ք և կառուցեցե՛ք մարդկային պատմության բոլոր ժամանակների ամենաանառիկ պարիսպը, որի առաջ պիտի խորտակվեն ամեն տեսակի ռազմական չարաղետ նամանձնությունների և ատոմային ռումբերով սպառնացող անսիրտ աստիճների դժոխային ուժերը:

Մեր հայացքն ուղղելով դեպի պայծառ գալիքը, մենք տեսնում ենք այն օրը, երբ ժողովուրդները ձեռք-ձեռքի տված, և տոգորված խաղաղ ապրելու ու ստեղծագործելու ուխտով, ի պատասխան երկնային Տիրոջ պատգամին՝ հաղթական ձայնով մինչև երկինք պիտի բարձրացնեն իրենց մեծ և սքանչելի նոր ավետիսը՝ «Ցերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եվ պիտի իրականանան մեծ մարգարեի կրակե խոսքերը՝ «Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուինս իւրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, և ոչ ևս ուսանին տալ պատերազմ» (Եսայի, Բ 4):

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ՝
ՆԱԽԱԳԱՀՈՂ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ՝
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ՝
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ,
Երևան, 29 մարտի 1955 թ.)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ճառ՝ խոսված խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսում, 1966 թվականի մարտի 16-ին)

արգելի պատվիրակնե՛ր, թանկագի՛ն ազգայիններ.

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի անունից թույլ տվեցեք ողջունել ձեզ և հանձինս ձեզ՝ խաղաղության բոլոր կողմնակիցներին՝ խաղաղության պահպանման համար տարվող արդյունավետ և շնորհակալ աշխատանքների համար։

Այսօր ավելի, քան երբևէ, աշխարհը կարիքն ունի տևական խաղաղության։ Թանկանություն և խիղճ ունեցող ո՛չ մի անձնավորություն չի ցանկանում, որ այս գեղեցիկ աշխարհը նորից վերածվի հեծեծանքի, վրշտի, արյան ու արցունքների հովտի։

Մեզ խորապես մխիթարում և սփոփում է այն իրողությունը, որ աշխարհի աշխատավոր մարդկությունը, բարի կամքի միլիոնավոր մարդիկ, ընտանիքների հայրեր ու մայրեր, կուլտուրայի ու արվեստի աշխատողներ, կրոնական տարբեր դավանանքների հոգևոր սպասավորներ հանդես են գալիս պատերազմի դեմ և համատեղ ջանքերով աշխատում չեզոքացնել պատերազմի վտանգը աշխարհում։ Խաղաղության ձգտող այս կարգի մարդկանց մասին երանատուր խոսք ունի ասած Մատթեոս ավետարանիչը՝ «Երանի՞ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ., Ե 9)։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որպես Արևելքի հնագույն եկեղեցիներից մեկը, այսօր ինչպես միշտ, իր վճռական ձայնն է բարձրացնում հօգուտ խաղաղության, հօգուտ բարի դրացիական համակեցության և մարդկային բարօրության։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և բազմաչարչար հայ ժողովրդի համար անցյալում չի եղել ավելի վեհ ու նվիրական բաղձանք, քան տևական խաղաղությունը։ Գուցե ո՛չ մի ժողովուրդ իր բազմադարյան անցյալում այնքան չի երազել, այնքան չի տենչացել տևական խաղաղության, որքան բազմաչարչար հայ ժողովուրդը։

Խաղաղասեր հայ ժողովուրդը սրտի անսահման հրճվանքով է ողջունում խաղաղության պաշտպանների համատեղ բոլոր ջանքերը։ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նոր Կոչը լայն արձագանք է գտել ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների, այնպես և հայ հավատացյալ ժողովրդի սրտում։

Այսօր ևս մեր Եկեղեցին ու մեր հավատացյալ ժողովուրդը, հավատարիմ մնալով իրենց ավանդական սկզբունքներին, բարձրացնում են իրենց արդար ձայնը հանուն խաղաղության և անվերապահորեն միանում են Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի որոշումներին։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին խորապես համոզված է, որ ժողովուրդների խաղաղասիրական ցանկություններն ու իղձերը խաղաղության անկուն պայքարում կպսակվեն հաջողությամբ։

Աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, հավատացյալները, աշխարհի բոլոր կրոնները, այդ թվում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, պահանջում են խաղաղություն մարդկության համար, ներկա և ապագա բոլոր սերունդների համար։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին— ձգտումն է հայ ժողովրդի կրոնական համոզմունքների, համամարդկային գաղափարների, Հայոց Եկեղեցու հայրենասիրական ու ժողովրդասիրական ոգու։ Հայ հասարակական կյանքում խաղաղությանը այնքա՞ն մեծ նշանակություն է տրվել, որ մեր եկեղեցական ժամերգության մեջ խաղաղության համար հատուկ օրհներգներ և մաղթանքներ են սահմանվել։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ աղոթել է՝ ցանկանալով խաղաղություն բոլոր ազգերին, կրոններին և լեզուներին։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության մեջ կարմիր թելի նման անցնում է նրա խաղաղասիրական ձգտումը։ Օտարերկրյա նվաճողները անցյալում հաճախ են խուժել մեր երկիրը, ավերել մեր առևտրաշատ և արդյունաշատ քաղաքներն ու գյուղերը, կողոպտել են մեր ունեցվածքը և հազարներով մեր բնակիչներին քշել գերության։ Նրանք միկ անգամ չէ, որ խզել են մեր ժողովրդի զարգացման բնականոն ընթացքը, արհամարհել մեր լեզուն, մեր հավատքը և ոչնչացրել մեր հոգեկան կուլտուրայի օջախներն ու հուշարձանները։ Թայց հակառակ անցյալի այդ մղձավանջային իրողությանը, հայ ժողովուրդը միշտ ձգտել է խաղաղության ու արդարության վերոնական հաղթանակին և վրեժխնդրության ոգով լցված չի գնացել ուրիշի տունը քանդելու։

Այսօր, հավատացյալ հայ ժողովուրդը երկրագնդի միլիոնավոր մարդկանց շարքերում, խաղաղասեր ժողովուրդների ընտանիքում, աղոթում է հանուն խաղաղության ամբողջ աշխարհում՝ «զի լոեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տընկեսցի սէր և արդարութիւն ի յերկրիս։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, հավատացյալ հայ ժողովուրդը խորապես համոզված են, որ բարի կամքի և փոխըմբռնման առկայության դեպքում կարելի է լուծել բոլոր վիճելի հարցերը և ապահովել երկրում տևական և հաստատուն խաղաղությունը ժողովուրդների միջև։ Եվ այն ժամանակ մարդիկ «ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուիրս իւրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, և ոչ ևս ուսանին տալ պատերազմս» (Եսայի, Բ 4)։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին աղոթում է Աստուծուն, որպեսզի նա պարգևի աշխարհին խաղաղություն և բարօրություն։

Մենք ևս ողջունում ենք մեծ կամ փոքր պետությունների այն բոլոր քայլերը, որոնք որևէ չափով մեղմացնում են աշխարհի լարված վիճակը և ճանապարհ հարթում մեծ տերությունների փոխըմբռնման համար։

Որպես հոգևորական, Քրիստոնյա Եկեղեցու ներկայացուցիչ, պիտի հայտարարեմ, որ մեր Քրիստոնեական Եկեղեցին արել է և կանի իր կարելին՝ մարդկությանը պատերազմի նոր արհավիրքներից հեռու պահելու համար։

Մեր ամենօրյա բարեմաղթությունն ու աղոթքն է, որ սերը և խաղաղությունը թագավորեն աշխարհի վրա։ Ամեն։

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԸ

Մայիսի 8-ին լրացավ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցը։

Այդ օրն ևս, ոչ պակաս խորունկ քան անցյալ տարվա մայիսի 8-ը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը, ամեն տեղ, երախտագետ սրտի ամենախորունկ զգացմունքով և որդիական սրտառուչ ակնածանքով, նշեցին մեր օրերի մեծագույն և հայրենասեր Կաթողիկոսի՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. առաքելաշավիղ և աստվածարյալ Հայրապետի մահվան առաջին տարին՝ հանդիսավոր պատարագով, քարոզներով, նրա հիշատակի ոգեկոչումով։

Մի անգամ ևս մեր հավատացյալները, և՝ Մայր Հայրենիքում և՝ Սփյուռքում, վշտով, հարգալից մեծարանքով և նվիրվածությամբ, իրենց գլուխը խոնարհեցրին երանաշնորհ Հայրապետի թարմ հողակույտի և նրա նվիրական հիշատակի առաջ։

Սիրելի և պաշտելի Վեհափառի մահից մի տարի հետո ևս, դեռևս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը ողբում են իրենց Հոր, իրենց Հովվապետի, հայ հավատքի աննկուն պաշտպանի դառնակսկիծ մահը։

Եվ դա պատահականություն չէ երբեք, որովհետև երանաշնորհ հանգուցյալ Հայրապետը Իր հոգու բովանդակ անկեղծությամբ, Իր սրտի ամենաջերմ գուրգուրանքով կապված էր հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն և մեր պանծալի Հայրենիքին։ Նա Իր գիտակցական ողջ կյանքը, Իր մտքի ու հոգու անկրկնելի գանձերը, առանց մնացորդի, նվիրաբերել է հայ հավատքին ու Հայրենիքին, և դրանով նվաճել է Իրեն և Իր հայրապետական բարձրագույն իշխանության համար՝ ողջ հայության անխարդախ սերն ու անկեղծ համակրանքը։

Երանաշնորհ Հայրապետի անունը ոսկի տառերով է գրված մեր նորագույն ազգային-եկեղեցական պատմության մեջ և հայ ժողովրդի երախտագետ սրտում, որովհետև Վեհափառի անունն ու անմահ գործը սերտորեն կապված են եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակի ազգային-քաղաքական իրադարձությունների հետ, որոնց միջև նա, Իրեն հատուկ պայծառատեսությամբ, հոգեկան հստակ մտահայեցողությամբ, իմաստուն ազգային-եկեղեցական քաղաքականությամբ, կարողացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նավը առաջնորդել դեպի խաղաղ նավահանգիստ։

Ահա թե ինչո՞ւ այսօր ևս, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը արժանավոր և անկեղծ վշտով սգում են իրենց արթուն Հովվապետի, առաքինազարդ և անբասիր Հոր մահվան առաջին տարելիցը։

Այսօր ևս Վեհափառի խնկելի հիշատակը, նրա կիսավարտ սուրբ գործը, նրա պայծառ անունը ոգեշնչում են հայ հավատացյալ ժողովրդին՝ բարձր պահելու հայրենասիրության սրբազան դրոշը, անաղարտ պահպանելու հայ ազգային-եկեղեցական նվիրականությունը, անխարդախ սիրելու հայրենի հողն ու հարազատ ժողովրդին, միշտ բարձր ու վեհ պահած նրա ազգային-եկեղեցական միասնության սուրբ պատգամները։

Ավելի քան մխիթարական է տեսնել, որ Վեհափառի մահվան առաջին տարելիցի առթիվ արտահայտված վշտի ու տրտմության մեջ նաև դրսևորվում էր հայ ժողովրդի անկաշառ սերն ու նվիրվածությունը հանդեպ Ս. Էջմիածնի, հանդեպ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նախամեծար Մայր Աթոռի, որովհետև «Ամենայն Հայոց Հայրապետը»,— ինչպես գրել է Վեհափառը,— անձ չէ, այլ հայրապետական գաղափարի մարմնացումն։ Արդարև, Ս. Էջմիածինն ու նրա գահակալները հազարամյակներով հայ հավատացյալ ժողովրդի սրտառուչ հավատքի և վառ զգացմունքների առաջ հանդիսացել են

մի ներդաշնակ ամբողջություն, հայ ժողովրդի միասնության և գոյության խորհուրդը։ Չկա Գահակալը, բայց կա հավերժական Գահը, որին, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, կապված է ողջ հավատացյալ հայությունը իր հոգու բոլոր թելերով։

Կանգնեն Հայ Եկեղեցու սգի, վշտի, տրրտմության ծանր օրերը, սգի սև շղարշը կվերանա այրիացած Մայր Աթոռի վրայից ու հայոց կապույտ երկնակամարի վրա նորից կփայլի Ս. Լուսավորչի սուրբ կանթեղը, նորից կհրնչեն Ս. Էջմիածնի պատմական կամարների տակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հաղթական օրհներգությունները ու ալելուիաները։

«Միրեցե՛ք Էջմիածինը...»— ահա՛ հանգուցյալ Վեհափառի նվիրական կտակը, որը սրբությամբ պետք է պահի ամեն մի հավատացյալ ու հայրենասեր հայ, որովհետև Էջմիածինը, «Ամենայն Հայոց Հայրապետությունը,— գրել է Վեհափառը,— հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն վշտերով և սակավ ուրախությամբ... Հայոց Հայրապետությունը՝ հայի ստեղծող միտքն է եղել... վեհ գաղափարների մի փունջ, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով...»։

Մեզ հետ չէ ամենքից սիրված ու հարգված Հայրապետը, բայց մեզ հետ են նրա հոգին, նրա պատգամը, նրա շունչն ու խոհերը։

«Ս. Էջմիածինը աստվածային պարգև է մեզ համար դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքում» (Գեորգ Զ.)։

Երջանկամիշատակ Վեհափառ Հայրապետը աշխատանքի սեղանի առաջ

Սիրելի Վեհափառի մահվան առաջին տարելիցին հայ հավատացյալ ժողովրդի սրտագին բաղձանքն է՝ հավատարիմ մնալ հանգուցյալ Հայրապետի դավանած և պաշտած ազգային-եկեղեցական միության ու միասնության վեհ գաղափարներին։ Մեզանից հեռացավ մեր սիրելի Հայրն ու Հովվապետը, ավանդ թողնելով մեզ բոլորիս՝ շարունակել Իր գործը։ Հայ հավատացյալ ժողովուրդը, մեր հայրենասեր ու եկեղեցասեր հոգևորականները պատվով ու սրբությամբ կկատարեն Նրա սրբազան ավանդը։

Մի անգամ ևս ազգովին խոնարհվենք աստվածարյալ և երանաշնորհ Հայրապետի թարմ հողակույտի առաջ, սրտեռանդն աղոթենք Մայր Աթոռի պայծառության ու հավերժության և Մայր Հայրենիքի անսասանության և հզորության համար։

Խո՜նարհ ու աղո՜թք մեծագործ Հայրապետի անմահ ու նվիրական հիշատակին։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Ամեն։

❋❋❋

Մայիսի 8-ին, երեման Ս. Խաչի տոնի առթիվ, Ս. Հռիփսիմեի տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Այդ օրը երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցն էր։ Այդ տխուր առիթով Ս. Էջմիածին էին եկել ոչ միայն բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ, այլև հարևան ռեսպուբլիկաներից մի շարք հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ՝ մի անգամ ևս մեծարելու հայրենասեր մեծագործ Հայրապետի անմոռաց ու խնկելի հիշատակը։

Պաշտվում է հանդիսավոր հոգեհանգստյան սուրբ պատարագը, որը երգվում է քառաձայն։

Աղոթքի, խնկի միջից մի պահ տաճարում բոլորի մտքի առաջ կենդանանում է հանգուցյալ Հայրապետի լուսավոր ու հայրական դեմքը։ Սիրելի և անզուգական Հայրապետի դառն մահը տխուր հիշատակներ է զարթեցնում հավատացյալների սրտերում։ Տաճարը մեկ մարդու նման աղոթում է Նրա հոգու փրկության համար։ Պատարագիչ ու հավատացյալ աղոթում են սրտառուչ հավատքով Ս. Էջմիածնի պայծառության և հավերժության համար, որովհետև սդի քողը դեռ չի վերացել Մայր Աթոռից...

Սուրբ պատարագի ավարտից հետո միաբանները, Հոգևոր Ճեմարանի ուսանողներն ու հավատացյալ ժողովրդի հոծ բազմությունը Մայր Տաճարի բակում շրջապատում են երջանկահիշատակ Հայրապետի շիրիմը։

Հանգուցյալ Հայրապետի թարմ հողակույտը զարդարված է թարմ ու գեղեցիկ մայիսյան ծաղիկներով, վարդերով և պսակներով։ Արծաթյա պսակի մեջ է առնված հանգուցյալ Հայրապետի պատկերը, 4 հսկա կերոններ թախծորեն բոցկլտում են գերեզմանի շորս անկյուններում։ Ժողովուրդը խիտ կերպով շրջապատել է հանգուցյալ Հայրապետի շիրիմը, ներկա են թեմերից պաշտոնական ներկայացուցիչներ, եկել են Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամները, եկել է սիրելի Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը և ուրիշ շատ շատեր։

Խորհրդավոր լռության մեջ սկսվում է հոգեհանգստյան սրտառուչ արարողությունը։ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը հակիրճ, բայց բովանդակալից ու սրտազեղ բառերով վեր է հանում երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի կյանքն ու եռանդուն գործունեությունը, մեկ առ մեկ թվարկելով այն խոշոր և արդյունավետ գործերը, որ կատարել է Նա իր հայրապետության օրերին հոգատար Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի, և խոսում է Հայ Եկեղեցու մեծ կորստի մասին վեհափառի մահով։ Վերջում նա ասում է. «Ահա արդեն մեկ տարի է, որ չկա Հայ Եկեղեցու իմաստուն Հովվապետը, ընկել է Հայ Եկեղեցու հզոր կաղնին, 20-րդ դարի ամենաաչքի ընկնող հայ կաթողիկոսներից մեկը, բայց հայ ժողովուրդը երբեք ու հավիտյան չի մոռանա իր մեծ Հովվապետին։ Մայր Աթոռի միաբանությունը և ողջ հայ հոգևորականությունը, պայծառ ու սուրբ պահելով Գեորգ Զ. մեծագործ ու հայրենասեր Հայրապետի անջնջելի հիշատակը, կընթանա այն նույն ուղիով, որով ընթացել է հանգուցյալ Հայրապետը Իր կյանքի ընթացքում»։

Լսվում են վերջին աղոթքի բառերը՝ «Ցիշեա Տէր զհոգի ծառայիս քո Գէորգայ Զ.ի երջանկայիշատակ Կաթողիկոսի...»։

Կնքվում է գերեզմանը և դրանով վերջանում է տարելիցի կարգը։

Ժողովուրդը, մեկ առ մեկ, մոտենում է և համբուրում հանգուցյալ Կաթողիկոսի ծաղիկներով եղերված հողակույտ շիրիմը։

Երեկո է, ժողովրդի մի մասը ցրվել է, իսկ շատ շատերը դեռ հնագարյան վանքի բակում կանգնած զրուցում են. խոսակցության նյութն է հանգուցյալ Հայրապետը, շատերը սրտառուչ հուշեր են պատմում Նրա կյանքից ու մի անգամ էլ խորապես ապրում հայ ժողովրդի համազգային մեծ վիշտը։

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Գեորգ Զ. Վեհափառի կոչով և հորդորներով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ քրիստոնեական կրոնի խաղաղասիրական վեհ սկզբունքներին, իր ձայնը միացրեց ողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանողների, բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց ձայնին։

1950 թվականին «Էջմիածին» ամսագրում տպվեց հայրենասեր Հայրապետի ուղերձը խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի անունով։

1950 թվականի օգոստոսի 5-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Սովետական Միության երեք քրիստոնյա ինքնանկախ եկեղեցիների՝ Ռուսական Պրավոսլավ եկեղեցու, Վրացական Եկեղեցու և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հովվապետների հանդիպումը, որտեղ մշակվեց և հրապարակվեց քրիստոնյա աշխարհին և եկեղեցիներին ուղղված խաղաղության պահպանման սրբազան մի կոչ՝ միասնական ուժերով պաշտպանելու խաղաղության սրբազան գործը համայն աշխարհում, քրիստոնեական այն բարձր գիտակցությամբ, որ պատերազմը ոճիր է Աստուծու և մարդկության դեմ։

Ժողովից հետո Վեհափառ Հայրապետը քույր եկեղեցիների Պետերին՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատին հրավիրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Մայր Աթոռի միաբանության կողմից հյուրերը ընդունվեցին ջերմ, բարեկամական խանդավառությամբ. նրանք ծանոթացան Մայր Աթոռի կյանքին, համբուրեցին սրբությունները և մի քանի օր ևս լինելով Հայաստանի տեսարժան վայրերում՝ մեկնեցին իրենց Աթոռները։

1950 թվականի հուլիսի 1—2-ը Զնխոսլովակիայի Լուգաչովիցո ամառանոցում տեղի ունեցավ քրիստոնյա եկեղեցիների կոնֆերանսին Հայ Եկեղեցու մասնակցության մասին Վեհափառ Հայրապետը հեռագրով տվել էր Իր համաձայնությունը՝ նշանակելով պատգամավորությունն։ Հայ Եկեղեցու պատգամավորությունը Վեհափառ Հայրապետի անունից, ուրախությամբ մասնակցեց կոնֆերանսին, մուծելով Հայ Եկեղեցու և նրա Պետի խաղաղասիրական ավանդը ընդհանուր եկեղեցիների ձեռնարկած վեհ, մարդասիրական մեծ գործին։

Հետագայում, Մոսկվայում գումարված խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսում, Նորից հնչեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի խաղաղասիրական խոսքը՝ ի պաշտպանություն խաղաղության, ընդդեմ պատերազմի. «Պատերազմը չպիտի թույլատրվի նաև այն պատճառով, որ ցարդ մարդու արժանիքը

---

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № VII—VIII-ից, X-ից և 1955 թվականի № № III-ից և IV-ից։

չափազանց թերագնահատված է։ Քրիստոնեական կրոնը մարդուն համարում է տիեզերքի կատարելագույն էակը և տիեզերական կյանքի նպատակը. այդ տեսակետով է, որ Աստվածորդին ուղարկվում է աշխարհ, որպեսզի Իր անձի զոհաբերությամբ՝ փրկե մարդկությունը, ուրեմն մարդը կրոնական աշխարհայացքով՝ հանդիսանում է տիեզերական կյանքի կենտրոնական էակը, նորա նպատակը։

Վեհափառ Հայրապետի նկարագրի ամենաբնորոշ հատկանիշներից են Նրա հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը, որոնք անթառամ փայլով ու թարմությամբ գեղեցկացրել և ուսանելի են դարձրել մեր օրերի մեծագործ ու հայրենասեր Հովվապետի թանկագին կյանքն ու հանրօգուտ գործունեությունը։ Նրա գրած մեն-մի տողը, խոսած յուրաքանչյուր խոսքը հագեցված են եղել Հայրենիքի սիրով, հայ հավատքի կրակով։ Եվ Նա ցանկացել է հայրենասիրության և եկեղեցասիրության այդ հուրը տալ Իր հոտին։ Այդ իսկ պատճառով, 1950 թվականին, Նա Իր կոնդակով հրահանգեց մեծ շքով և հանդիսությամբ, արժանավայել կերպով և ազգային հպարտության անկեղծ զգացումով նշել Վարդանանց և Ղևոնդյանց հերոսամարտի 1500-ամյակը։

Վերլուծելով հայ ժողովրդի անցյալի նվիրական հերոսամարտի պատմությունը, Վեհափառը գրում է, որ Վարդանանց պատերազմը «Հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի բարձունքն է հանդիսանում՝ հերոսական արտահայտությունը Հայ Ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի։

«Ավարայրի հերոսամարտը հոգեզմայլանհասանելի բարձունքն էր ազատագրական մաքառման — ահա թե ինչո՞ւ նա եղել է, կա և կմնա առհավետ ազգապանծ էջը Հայոց պատմության, հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել և մխիթարել է հայազն սերունդներին և ազգային-քաղաքական առաքինության ուղիներն է պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղեցուն։

«Սրբանվեր այդ հերոսամարտի 1500-ամյակը պետք է ազգովին նվիրագործել և տոնակատարել հանուն վերջնական հաղթանակի այն անձնվեր զաղափարների, որոնց հաղթանակի համար իրենց առաքինի կյանքը զոհեցին Վարդանանք և նահատակվեցան Ղևոնդյանք։

Վեհափառը այս հիասքանչ կոնդակի յուրաքանչյուր տողի մեջ դրել է Իր հավատքի հուրը, հայրենասիրության վառ զգացմունքը, Իր մտքի գեղեցկությունն ու սրտի ամբողջ ջերմությունը։

Վեհափառ Հայրապետի կյանքի վերջին չորս տարիները եղել են նույնքան արդյունավոր ու բեղուն, որքան Նրա հոյակապ, փառքի ճամբա անցած կյանքի ուղին։ Հայրենասեր Հայրապետը այդ տարիներին ևս անձանձրույթ հետևում էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կազմակերպության, միասնականության, պայծառության նվիրված հարցերին, անդուլ, անդադար ծրագրում, խորհում էր Իր հոտի և Իր Եկեղեցու վերաբերյալ հարցերի շուրջը։

Ի մեծ մխիթարություն Վեհափառ Հայրապետի, 1951 թվականին կարգավորվեց Կոստանդնուպոլսի Պատրիարքության կենտրոն խնդիրը։ 1951 թվականի մարտի 12-ի սրբատառ կոնդակով Վեհափառը հաստատում է Կոստանդնուպոլսի նորընտիր Պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանին իր նոր պաշտոնում։ Նորընտիր Պատրիարքի բարեմասնությունները մեկառ մեկ դրվատելուց հետո, ծանր ու պատասխանատու պարտականություններ է դնում նրա վրա՝ հեռու պահել հայ ժողովրդին ուծացումից, վերացնել հայ ազգային-եկեղեցական միասնության դեմ սկսված պառակտիչ հանգամանքները և ամրացնել ամեն կերպ կապը Մայր Աթոռի հետ։

Ահա ինչ է գրում Նա Կոստանդնուպոլսի Պատրիարքին այդ առթիվ.

«Առաջիկա Ձեր ձեռնարկներից կարևորագույնը պիտի լինի՝ ա) Արհեստական եղանակով հանդես բերված հայ համայնքի միտումնավոր պառակտումը վերացնել և հաստատել եղբայրական միություն. բ) Անէացնել արհեստականորեն ստեղծված միտումնավոր ձգտումները, վերահաստատելով Եկեղեցու միասնականությունը և հաստատելով իր վաղեմի հավատարմությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայոց Հայրապետության. գ) Վերականգնել Եկեղեցուց ժամանակավորապես ուծացած պոլսահայ ժողովրդի զայթակղված հավատը դեպի իր Սրբությունները և ուսուցանել՝ ակնածել ու հարգել իր պատմական Եկեղեցու պաշտամունքը՝ խորհուրդները, ծեսերն ու արարողությունները։

Հայրենասեր Հայրապետը ապրում էր Իր հոտի ուրախություններով և վշտերով, հսկում էր մեր ազգային-եկեղեցական կյանքի վրա որպես սրատես արծիվ և բարեխնամ Հայր, աշխատելով կանխել ամեն տեսակ վերահաս վտանգ։

Այս շրջանում է նաև, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռների Գահակալների միջև

ստեղծված բարեկամական տնկեղծ, սերտ փոխհարաբերությունները ավելի ցայտուն և զգայուն են դառնում։ Գարեգին Ա. Վեհափառի ծանր հիվանդության շրջանում էլ նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ը հիվանդտես մի պատգամավորություն է ուղարկում Անթիլիաս՝ Իր հոգեհարազատ եղբորն ի տես և ի մխիթարություն։ Գարեգին Կաթողիկոսը մխիթարվում է այդ այցելությամբ, և խորապես հուզվում է Իր հոգևոր եղբոր այդ բացառիկ ուշադրությունից և զգացված սրտով մրմնջում. «Աստված կյանք տա, երկա՞ր կյանք մեր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ին, որ եղբայրական շնորհք, օրհնություն ցույց տվեց։ Նա Իր եղբորը հիվանդտես պատգամավոր է ուղարկել... ոա մեր պատմության մեջ չտեսնված երևույթ է»։

Վեհափառ Հայրապետը նրբանկատ էր, այդ բառի իսկական իմաստով. Նա դիտեր դեպքերն ու իրողությունները խորը և հիմնավոր վերլուծել, անցկացնելով նրանք Իր հոգու քննասեր և իմաստուն բովից։ Նրա ամեն մի քայլը երկար մտածված էր և ամեն մի խոսքը սրտի և հոգու խորքից բխած։

1951 թվականի հուլիսի 8-ին Վեհափառ Հայրապետը կատարում է եպիսկոպոսական Իր երկրորդ ձեռնադրությունը։ Սրուանդեմի Սրբոց Հակոբյանց Պատրիարքարանի Տնօրեն ժողովը էջմիածին էր ուղարկել Աթոռի միաբանությունից եպիսկոպոսության երեք թեկնածուների՝ Պատրիարքական տեղապահ Եղիշե ծայրագույն վարդապետ Տերտերյանին, Սուրեն վարդապետ Քեմմաճյանին և Նորայր վարդապետ Պողարյանին, որոնց միացան նաև Ռումինահայ թեմից Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանը և Մայր Աթոռի միաբան Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը։ Ձեռնադրության հանդեսը անցավ ժողովրդական բուռն խանդավառության մթնոլորտում։ Հրճվում էր ալեհեր Հայրապետը՝ ի տես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա պայծառացման և կազմակերպվածության նվիրված հուսադրող ձեռնարկներին, այն պարզ գիտակցությամբ, որ Իր հավատացյալ հոտը ունենում է նոր և արժանի հովիվներ։ Վեհափառը շատ բարձր գնահատելով նորընծա Եղիշե եպիսկոպոսի ազգային-եկեղեցական և գրական վաստակը, մի քանի օր հետո նրան արժանացրեց արքեպիսկոպոսության։

Վեհափառի ուշադրությունը նորից կենտրոնացել էր Հոգևոր Ճեմարանի շուրջ։ Ավատական շարադրությունների քննարկմանը ներկա էր Ինքը անձամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և ուրիշ բարձրատիճան եկեղեցականների հետ։

Ականատեսը միայն կարող է պատմել այն մեծ երջանկությունը, հոգեկան այն խանդավառ զգացումները, որ ունենում էր ուսումնասեր մեծ Հայրապետը այդ օրերին, լսելով Իր սիրասուն սաների խելացի ու հիմնավորված պատասխանները։ Մայր Աթոռի միաբանությունը համալրվում էր ճեմարանավարտ երիտասարդ թարմ ուժերով։ Սակայն Վեհափառի միշտ վեր, միշտ դեպի գերագանցը ձգտող խոհուն միտքը չէր կարող բավարարվել այդքանով. Նա մտածում էր ճեմարանավարտ Իր սաներին ավելի խորը գիտություն տալու մասին, ապահովելով նրանց բարձրագույն կրթությունով՝ հայագիտության, աստվածաբանության և եկեղեցական մատենագրության նյութերի խորացմամբ։ 1951 թվականի վերջում Վեհափառը Մայր Աթոռի միաբան 8 սարկավագների ուղարկում է Մոսկվա—Զագորսկ, Ռուսական Հոգևոր Ճեմարանը՝ մարզվելու ռուսաց լեզվի մեջ և ձեռք բերելու աստվածաբանական գիտելիքներ։

Վեհափառ Հայրապետի վերջին շրջանի գործունեության մեջ շարունակում է մեծ տեղ բռնել Նրա խաղաղության պաշտպանության գործում կատարած աշխատանքը։ Դեռևս 1951 թվականին, «В защиту мира» («Հանուն խաղաղության պաշտպանության») ամսագրում Վեհափառը հանդես եկավ խաղաղության պաշտպանությանը նվիրված գեղեցիկ մի հոդվածով, որտեղ Նա խաղաղությունը անվարան պաշտպանելու կոչ է ուղղում Իր սիրասուն զավակներին. «Իմ սիրելի վտարանդի զավակներս, ի սեր Հայ Ազգի և Հայրենիքի, ի սեր ազատության և անկախության՝ խաղաղություն պահանջեցեք և ձեր ստորագրություններով վավերացրեք ձեր արդար և իրավացի պահանջը»։

1951 թվականի նոյեմբերի 27-ին Մոսկվայում գումարվեց Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսը, որին մասնակցեց նաև Վեհափառ Հայրապետը, որը պատգամավոր էր ընտրվել Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսի կողմից։ Նոյեմբերի 29-ի առավոտյան նիստին ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը։ Այդ փայլուն ելույթը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալների հավաքական խոսքն էր հանուն խաղաղության պահպանմանը համայն աշխարհում։ Վեհափառը դրտնում էր, որ եկեղեցիները դեռ թույլ են պայքարում խաղաղության անհրաժեշտ և կարևոր գործի պաշտպանության համար։

«Մենք նպատակահարմար ենք գտնում,— գրում է Նա,— և համոզված ենք, որ եթե Կաթոլիկ, Բողոքական և Պրավոսլավ մեծ Եկեղեցիները և մնացյալ փոքր ազգերի ազգային քրիստոնեական եկեղեցիները, ինչպես նաև մյուս կրոնները համախմբվեն ու կազմա-

կերպվեն և խմբովին հանդես գան հոգուտ խաղաղության և ընդդեմ պատերազմի, ոչ միայն դրական արժեք կունենա և խաղաղության հաջողության կնպաստե, այլև կբարձրանա Եկեղեցու հեղինակությունը և կշեշտվի նորա անհրաժեշտությունը կյանքի համար։ Խաղաղության պայքարը մեր ժամանակի հզորագույն և անհաղթելի շարժումն է։ Թո՛ղ Տերն օրհնե ու հաջողությամբ պսակե այդ խոշոր ձեռնարկը,— այսպես է վերջացնում Վեհափառն Իր ազդու խոսքը։

1952 թվականի մայիսի 9—12-ը Մոսկվայից 75 կիլոմետր հեռու Զագորսկ քաղաքում, Ռուսական Եկեղեցու հոգևոր սրբավայրում, տեղի ունեցավ ՍՍՌՄ Քրիստոնյա Եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերենցիան՝ նվիրված խաղաղության պաշտպանության հարցերին։ Կոնֆերենցիային մասնակցեց նաև Հայոց Եկեղեցու ներկայացուցչությունը Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, որն այդ համագումարի անմիջական նախաձեռնողներից էր։

Զագորսկի համագումարին մասնակցում էին 18 ազգությունների և 34 կրոնական տարբեր համոզմունքների տեր համայնքների ներկայացուցիչների բազմաթիվ պատգամավորներ։ Ընտրված նախագահության կազմի մեջ մտնում էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ը, որն Իր ելույթում քրիստոնեական հավատքի տեսանկյունից հանգամանորեն վերլուծելով պատերազմի և խաղաղության պայքարի հրատապ հարցերը, հետևյալ խնդիրներն է դնում համագումարի առաջ. 1) Պարզել, թե ի՞նչ է արել կրոնն ու նրա գործադիր մարմինը՝ Եկեղեցին խաղաղության պայքարի գործում և 2) Ինչպիսի՞ պիտի լինեն նրա անելիքները հետագայում։

Վեհափառը, Ռուսաց Ալեքսի Պատրիարքը և Վրաց Կալիստրատ Պատրիարք-Կաթողիկոսը ելմիածնում՝ Գեորգույն Հոգևոր խորհրդի անդամներ Եվանգ. Շահազիզի և Ստ. Կամսարականի հետ։

Պատահականություն չէր այն հանգամանքը, որ մեր սիրելի Հայրապետը միշտ էլ գտնվել է խաղաղության համար պայքարողների առաջին շարքերում։ Վեհափառի խաղաղասիրական ամբողջ աշխատանքը բնական ու տրամաբանական հետևանքն էր նրա խորը համոզմունքների, հավատքի, հայրենասիրության, Հայ Եկեղեցու դարավոր ավանդությունների և ժողովրդական ոգու, հայ ժողովրդի իղձերի ու երազների։ Մեր ժողովուրդը կարիքն ունի խաղաղության, որից նա զուրկ է մնացել հազարամյակներ շարունակ։ Խաղաղասիրական այդ զգացմունքների սրտառուչ թարգմանն է հանդիսացել միշտ Վեհա-

փառը թե՛ Իր սրբատառ կոնդակներում, և թե՛ խաղաղության ի նպաստ մղված անխոնջ պայքարում։

«Բարոյական բարձր նորմաների զարգացման ապարատը մարդու խիղճն է,— գրում է Վեհափառը,— նա է որոշում բարին և չարը, լավն ու վատը, արդարն ու անարդարը, ճշմարիտն ու սուտը։ Եվ որպեսզի խղճի թելադրանքները անշեղ գործադրվեն՝ կարևոր է զորացնել նաև կամքը։ Երբ մարդու խիղճն ու կամքը դաստիարակվեն՝ մարդու հոգու մեջ կտիրապետեն մարդասիրության և եղբայրության զգացմունքները, ահա և այն ժամանակ կյանքը հարատև խաղաղ կընթանա և մարդը երջանիկ կապրի աշխարհում»։

Վեհափառ Հայրապետը մասնակցելով ՍՍՌՄ եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների Մոսկվայի (Զագորսկի) խաղաղության կոնֆերենցիային, մի անգամ ևս ապացուցեց Հայ Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի խաղաղասիրական և անխախտ համոզմունքը և հանուն խաղաղության պայքարելու անբեկանելի հավատքը, այն բարձր գիտակցությամբ, որ պատերազմը ոճիր է Աստուծու դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկության վեհ իդեալների դեմ։ Ահա թե ինչու Վեհափառը մինչև Իր կյանքի վերջը չդադարեց խաղաղության ջերմ պաշտպանը հանդիսանալուց։

Վեհափառի Հայրապետության տարիներին ավելի քան երեք բարելավվեցին և կանոնավորվեցին Մայր Աթոռի և մեր եկեղեցական թեմերի փոխհարաբերությունները։ Միշտ էլ մեծ ու պատասխանատու է եղել Մայր Աթոռի և նրան ենթակա մեր թեմերի դերը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում։ Դառն ու տխուր է եղել ճակատագիրը այն թեմերի, որոնք կտրվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և առհավետ կորել են հայ ժողովրդի համար։ Վեհափառ Հայրապետի սրտի ամենաջերմ ցանկությունն է եղել ամենօրյա հսկողությամբ և իմաստուն վարչագիտությամբ պաշտպան հանդիսանալով հայ ժողովրդի ազգային-եկեղեցական արժեքներին և իրավունքներին, կենդանի կապ հաստատել մեր բոլոր թեմերի հետ. «մի՛ իբրև տիրելով վիճակաց, այլ օրինակ լինել հոտին» (Պետր. Ա. Կթղ. Ե 3)։ Վեհափառի մշտական իղձն է եղել այն, որ բոլոր հարցերում հստակ ու վճռական հնչի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնական ձայնը, ելնելով մեր Եկեղեցու և ժողովրդի կենսական շահերից, և մեր թեմական առաջնորդները, թեմական խորհուրդները, հոգաբարձությունները, հավատարիմ մնալով մեր նախնյաց արյունով սրբագործված ավանդներին, աչքի լույսի պես պահեն մեր Եկեղեցու «Վեհհրավությունն ու գերիշխանությունը» արտաքին ու ներքին ամեն մի ոտնձգությունից, և իր կոչման, պատմական նշանակության բարձրագույն կետի վրա պահեն Ամենայն Հայոց Հայրապետության դերն ու նշանակությունը, և Ս. Էջմիածնի դեմ առնված մեն-մի դիտումնավոր քայլ համարեն ուղղակի հարված հայ ժողովրդի սրտի դեմ, Հայ Եկեղեցու միասնականության դեմ։ Վեհափառը այսպիսի լուրջ խնդիրներ էր դրել մեր թեմերի առաջ, խնդիրներ, որոնք շոշափում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա զարգացման ու զորացման կենսական հարցերը։

«Իմ սիրելի ժողովուրդ,— գրում է Վեհափառը,— ժամանակը շատ չար է։ Քո բարեկամներդ՝ քո ցեղակիցներդ ու հարազատներդ են։ Աչքդ միշտ դեպի Հայրենիք դարձրու, որովհետև միայն այնտեղ կգտնես ճշմարիտ բարեկամություն, եղբայրություն և անշահախնդիր օգնություն, միայն այնտեղ՝ քո Հայրենիքումդ, քո պաշտած Ս. Էջմիածնիդ, քո սիրած ազգիդ և հայրենի պետությանդ կողմից կգտնես հոգեկան մխիթարություն...»։ Արդարև, Հայ Եկեղեցու թեմերի համար չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր, քան հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու ընդհանրական շահերը։

Վեհափառի առջև կանգնած ամենալուրջ հարցերից մեկն էլ արտասահմանի հայ համայնքների ձուլման վտանգն էր, որի համար նա ուներ Իր կարևոր հորդորը՝ զարգացնել ազգային ինքնագիտակցությունը, հայ մշակույթի շնորհիվ պահպանել ընտանիքներում հայ լեզուն, ազգային-կրոնական սովորությունները ու ավանդությունները, կազմակերպել մատչելի հրապարակային դասախոսություններ։

Ազգընտիր Վեհափառ Հայրապետը Իր գահակալության բոլոր տարիներին ուշադիր հայացքով հետևում էր ամենուրեք ընկած հայ ազգային բեկորներին և իր քաջ հովիվ հետաքրքրվում, ծրագրում, տքնում և աշխատում էր Իր հոտի լավագույն ապագայի համար։

Այսպես, անկարելի է չդրել Վեհափառի հայրական խնամածու սերն ու գորովը հանդեպ իր հոտին՝ կարդալով 1952 թվականի հուլիս 1 թվակիր հայրապետական կոնդակը ուղղված Հարավային Ամերիկայի հայությանը՝ ի նպաստ Երուսաղեմի Ս. Հակոբյանց Աթոռին և Պաղեստինի աղետյալ հայության կատարվելիք հանգանակության մասին։

Այստեղ մեր աչքի առջև կանգնում է ժողովրդասեր Հայրապետը Իր հոգու ամբողջ ջերմությամբ և հոգածությամբ։ Օգնել հարազատ եղբորը նրա ամենածանր և դժվարին օրերին— ահա՛ Վեհափառի առաջ քաշած

նվիրական խնդիրը։ «Բարեգործությունը,— գրում է Վեհափառը,— քրիստոնյա հավատացյալ մարդու բարոյական պարտականությունն է, որ ծնունդ է կրոնական զգացմունքի և խղճի թելադրության, որ ըստ Պողոսի, աստվածային ձայնի համաձայն է և աստվածային հոգու կայծ, և տրված է մարդուն որպես շնորհք ու պարգև։

Վեհափառ Հայրապետի հայրական խոսքը իզուր չէր անցնում, հայ հավատացյալը անհուն սիրով էր ունկնդրում իր պաշտելի Հայրապետի խորիմաստ խոսքին և իր սրտաբուխ նվերներով մխիթարում հայրենասեր Հայրապետի մեծ սիրտը։

Վեհափառ Հայրապետը ամեն առիթով Իր հայրենասիրական քաջալերանքն ու հայրապետական օրհնություններն էր ուղարկում Սփյուռքի մեր թեմերին, թեմական խորհուրդներին, ամբողջ հավատացյալ հայ ժողովրդին, որոնք կատարում էին ազգօգուտ ձեռնարկներ։

Այդ սրբատառ կոնդակներում, որոնք գոհարներ են մեր կրոնական նոր մատենագրության գանձարանում, գեղեցիկ համեմատություններով, հայրենասիրական աննման շընչով բացատրված է այն մեծ նշանակությունը, որ ունեցել են և ունեն հայ դպրոցը իր հայ դաստիարակությամբ և Հայ Եկեղեցին իր կրոնաբարոյական կենդանի գաղափարախոսությամբ, հայ ընտանիքի անաղարտությունն և հայազն ոգու ու հայրենի ավանդությունների պահպանման գործում։ «Հայ Եկեղեցին՝ իր անձնվեր հովիվով, և հայ դպրոցը՝ իր անձնվեր ուսուցչով ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնուրույն գոյության սյուներն են։ Սոցա միացյալ ջանքերով է, որ հայությունը ամենուրեք, մանավանդ գաղութահայությունը օտար երկրներում և կոսմոպոլիտապես բարձր ազգերի մեջ կարող է անխաթար պահպանել իր ազգային ոգին և՝ իբրև Ազգ, անձուլ մնալ»,— գրում է Վեհափառը Իր կոնդակներից մեկում։

Վեհափառ Հայրապետը, որպես Իր հոտի արքուն դիտապետ, դիտեր նաև հարկ եղած դեպքում, հայրական խնամածու ձեռքով ուղղել, սաստել, անգամ պատժել այն շեղումներն ու թերությունները, որ առաջ էին գալիս մի քանի թեմերում, հեղհեղուկ քաղաքական բարդ իրադրության պայմաններում։

Վեհափառի ազգային-եկեղեցական իմաստուն քաղաքականության և եռանդուն ջանքերի շնորհիվ, Հայ Եկեղեցին և՝ Մայր Հայրենիքում և՝ թեմերում ապրում էր մի նոր ու հոգևոր զարթոնքի խոստումնալից շրջան, ի մեծ մխիթարություն Նրա հավատավոր սրտի և ի փառս հայ ժողովրդի, որովհետև Հոգևոր ճեմարանը շարունակում էր պատվով և սրբությամբ կատարել իր առաջ դրված պատասխանատու գործը հոգևորական սերնդի դաստիարակման ու կրթության հարցում. որովհետև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը իր կրոնաբարոյական, գրական-բանասիրական, հայրենասիրական ճոխ բովանդակությամբ, հոգևոր սնունդ էր մատակարարում հայ հավատացյալ ժողովրդին, լինելով Վեհափառի կենդանի խոսքը ուղղված Իր սիրելի հոտին. որովհետև Մայր Աթոռի և թեմերի միջև ստեղծվել էին փոխադարձ վստահություն և լավագույն փոխհարաբերություններ. որովհետև Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու միությունն և հայ ժողովրդի միասնականության ցանկալի գաղափարները արդեն կյանքի էին վերածվում. որովհետև Ս. Էջմիածնի արժանընտիր Գահակալը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը հենց Ինքը դարձավ այն ոսկեղեն անքակտելի կապը, որը միացնում էր Ս. Էջմիածինն ու Մայր Հայրենիքը՝ Սփյուռքի հայության և թեմերին։

Կային, սակայն, դեռ չլուծված շատ հրատապ ու կարևոր խնդիրներ, որոնք միշտ Վեհափառի ուշադրության կենտրոնումն էին։ Դրանցից առաջինն էր մեր ազգային-եկեղեցական սահմանադրությունը։ Վեհափառը վաղուց արդեն մշակել և կազմել էր հայ ազգային-եկեղեցական սահմանադրությունը, որը ազգային-եկեղեցական ժողովի հավանությունից հետո պիտի գործադրության մեջ դրվեր։ Վեհափառը միակ և իրավասու անձնավորությունն էր այդ հարցում. և Նա մշակել էր ազգային-եկեղեցական սահմանադրությունն՝ հավատարիմ մնալով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու դարավոր իրավունքներին, առաքելահատատ կանոններին և հայրապետահիմն որոշումներին։

Վեհափառը ավարտել էր նաև Հայ Եկեղեցու բարեկարգության հոյակապ ծրագիրը։

Շատ հաճախ է գրվել և խոսվել այն մասին, որ Վեհափառ Հայրապետի սրտի ամենասիրելի հարցերից գլխավորն է եղել նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարի՝ հայության այդ անվրկնելի ու գեղեցիկ պատմական հուշարձան-կոթողի վերանորոգման և վերակառուցման խնդիրը։ Դեռևս Իր կաթողիկոսության առաջին իսկ օրերից այդ հարցը զբաղեցնում էր Վեհափառի միտքը, Հայրենի կառավարության բարեխնամ կարգադրությամբ և սրտառուչ առատաձեռնությամբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության հարցը, «համայն հայ ժողովրդի պատվի և ազգային արժանապատվության այդ հարցը» արդեն լուծված է։— Վերանորոգվում է Մայր Տաճարը։

1954 թվականի սեպտեմբերի 26-ը պիտի լիներ մեծ Հայրապետի գահակալության ան-

մոռանալի ու պատմական օրերից մեկը. այդ օրը Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնում Սրբալույս Մեռոնի օրհնություն պիտի կատարեր։

1954 թվականի ապրիլի 21-ին Վեհափառը գրեց Իր նախավերջին կոնդակը՝ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, Ս. Էջմիածնում Ս. Մեռոնի օրհնություն կատարելու մասին, որով և հայրապետական հրավեր էր ուղարկվում բոլոր թեմերին, առաջնորդներին՝ գալու Ս. Էջմիածին և մասնակցելու համազգային մեծ հանդեսին։ Ողջույն արքեպիսկոպոս Տերտերյանին նշանակել էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ։

Վեհափառ հիվանդի ընդհանուր դրությունը գնալով վատանում էր։ Եվ ահա 1954 թվականի մայիսի 9-ին, ժամը 7-ն անց 40 րոպեին, ի Տեր հանգչավ մեր ժամանակի մեծագույն հոգևորականներից ու հայրենասերներից մեկը՝ նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց աստվածարյալ Հայրապետը։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսի կրոնական պատվիրակները

սին։ Բայց... տեղի ունեցավ անակնկալը... անագորույն մահը կտրեց առաքելաշավիղ մեծ Հայրապետի թանկագին կյանքի թելը։

Իր մահվանից մի քանի ամիս առաջ Վեհափառի առողջական վիճակը վատացել էր, նա գտնվում էր մասնագետ բժիշկ պրոֆեսորների խնամքի տակ։ Օրերի հետ ծանրանում էր Վեհափառի առողջական վիճակը, բայց նա պահում էր Իր բովանդակ գիտակցությունը, մտքի պայծառատեսությունը, և այդ վիճակում նույնիսկ մտածում էր Ս. Էջմիածնի մասին, Հայ Եկեղեցու և Իր հոտի մասին։

1954 թվականի ապրիլի 30-ի սրբատառ վերջին կոնդակով, Իր մահվանից ընդամենը 9 օր առաջ, Վեհափառ Հայրապետը Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ գերաշնորհ

Ընկա՞վ Հայ Եկեղեցու հզոր կաղնին։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին սգի սև քող հագավ։ Հայ ժողովուրդը, երկրի բոլոր ծայրերում, սգաց Իր մեծագործ և հայրենասեր Հայրապետի կորուստը, որի ամբողջ գիտակցական կյանքը նվիրված էր Հայրենիքին, ժողովրդին և Ս. Եկեղեցուն։

«Էջմիածինը տառապալից ու փշոտ ճանապարհ է անցել, բայց կենդանի է մնացել ու կմնա...։ Սիրեցեք Էջմիածինը...»։

Ահա՛ մեծ Հանգուցյալի հրեղեն կտակը, սրտառուչ կոչը՝ ուղղված Իր շնչով ու ոգով դաստիարակված Իր սիրասուն սաներին և Իր սիրեցյալ հոտին, Իր ժողովրդին։

Մահը է՛լ ավելի գեղեցկացրեց և անմահացրեց Նրան Իր մահվան դադարի մեջ...։

1954 թվականի մայիսի 27-ին տեղի ունեցավ երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի հանդիսավոր հուղարկավորությունն ու թաղումը։

Աշխարհի բոլոր ծայրերից հայ ժողովուրդը ուղարկել էր Մայր Աթոռ իր աշխարհիկ և եկեղեցական ներկայացուցիչներին՝ բաժանելու համազգային սուգը և մասնակցելու թաղմանական տխուր արարողություններին։

Ողջ հայությունը, ամենախորին զգացմունքներով և որդիական երախտագիտությամբ խոնարհվեց Նրա դագաղի և թարմ հողակույտի առաջ։ Հայ ժողովրդի մեծ վիշտը հավասար չափով բաժանում էին նաև Քրիստոնեական ընդհանուր եկեղեցին, խաղաղությունը սիրող և պաշտպանող բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ։

Եվ այդ օրվանից Մ. Էջմիածնի հողը, աստվածաշնչյան Արարատի հովանու տակ, պահում է իր ծոցում ամենքից սիրված ու պաշտված անզուգական մեծ Հայրապետի, Հայրենիքի անձնվեր զավակի թանկագին աճյունը։

Ամփոփելով երջանկահիշատակ մեծ Հայրապետի անցած կյանքի նշանակալից ուրվագծերը, ավելորդ չէր լինի, եթե մեջ բերենք մեր օրերի ակնառու եկեղեցական դեմքերից մեկի՝ Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի բարձր գնահատականը, որը նա տվել է Վեհափառի անձնավորությանը, դեռևս Նրա կենդանության ժամանակ. «Ամենայն Հայոց Հայրապետը մեր անցյալ և ներկա անվանի և մեծ եկեղեցականներեն է, մին այն բացառիկ դեմքերեն, որ մեր վերջին հարյուրամյակի ընթացքին մատներու վրա միայն կրնան համրվիլ։ Իմաստուն, գիտուն, և ժամանակն ու ճշմարտությունը իրարու հետ հաշտեցնել կրցող պատմական դեմք մըն է Վեհափառը»։

Հայրենասեր ու մեծագործ Հայրապետի՝ Գեորգ Զ.ի անմահ հիշատակը միշտ վառ կմնա հայ հավատացյալ և երախտագետ ժողովրդի սրտում։

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Մայիսի 10—12-ը Մոսկվայում, Միությունների Տան սյունազարդ դահլիճում, կայացավ Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսը։

Կոնֆերանսին ներկա էին ՍՍՌՄ տերիտորիայում բնակվող 48 ազգություններ ներկայացնող 1.019 դելեգատներ։ Դելեգատների թվում կային Սովետական Միության հերոսներ, հայրենական պատերազմի վետերաններ, սոցիալիստական աշխատանքի և ժողովրդական տնտեսության առաջավորներ, գրողներ, կոմպոզիտորներ, ակադեմիկոսներ, կրոնական տարբեր համոզմունքների տեր հոգևորականներ, արտասահմանյան հյուրեր։

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար Հայոց եկեղեցու կողմից լիազորված էր Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Գերաշնորհ սրբազանը մայիսի 5-ին մեկնեց Մոսկվա մասնակցելու կոնֆերանսին։ Սրբազանին ուղեկցում էր բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Մայիսի 10-ին սկսվեցին կոնֆերանսի աշխատանքները։ Նրեկոյան նիստում ընտրվում է 88 հոգուց բաղկացած նախագահություն։ Նախագահության կազմում, ի թիվս այլոց, ընտրվում են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին, Հայ եկեղեցու ներկայացուցիչ՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, Կրուտիցկու և Կոլոմենայի միտրոպոլիտ Նիկոլայը, Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը, Ռիգայի Կաթոլիկական միտրոպոլիտի տեղակալ Գյոտոր Ստրոդս եպիսկոպոսը, Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահի տեղակալը և ուրիշներ։ Կոնֆերանսին մասնակցում էր նաև Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկը։

Կոնֆերանսի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

1. Ժամանակակից միջազգային դրությունը և ժողովուրդների պայքարը խաղաղության պաշտպանության համար։

2. Հելսինկիի Խաղաղության համաշխարհային ասամբլեայի սովետական դելեգացիայի ընտրությունների հարցը։

3. Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կազմի նոր ընտրությունը։

Մայիսի 11-ի առավոտյան նիստին խոսք է տրվում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին, որի ճառը լսվում է մեծ ուշադրությամբ։ «Ռուսական Ուղղափառ Եկեղեցին,— ասում է Ալեքսի Պատրիարքը,— մեր Միության ժողովուրդների հետ միասին ձգտում է երկարատև խաղաղության և երջանիկ ուրախ կյանքի։ Նա ամբողջովին պաշտպանում է մեր պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը։

Խոսք է տրվում նաև ՍՍՌՄ Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահին։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսը իր աշխատանքները հաջողությամբ ավարտեց մայիսի 12-ին։ Ընտրվեց 37 մարդուց բաղկացած սովետական դելեգացիա, որը պիտի մասնակցի Հելսինկիում կայանալիք Խաղաղության համաշխարհային ասամբլեային։ Կոնֆերանսը միահամուռ կերպով հաստատեց Խաղաղության համաշխարհային ասամբլեային ուղարկվելիք դիմումն ու կոչը։ Ընտրվեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նոր կազմ։

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսին Հայ Եկեղեցին ուղարկելով իր ներկայացուցիչը, մի անգամ ևս ապացուցեց, որ ինքը ամուր կանգնած է ժողովուրդների համար այնքան բաղձալի խաղաղության գործի պաշտպանության առաջավոր դիրքերում։ Հայ Եկեղեցին, հանձին իր ներկայացուցչի՝ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի, այս անգամ ևս իր ձայնը միացրեց Սովետական Միության խաղաղասեր ժողովուրդների և ազգությունների միասնական հավատավոր ձայնին՝ հանուն ժողովուրդների երջանիկ և բարօր կյանքի։

ցում։ Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը առանձին տեսակցություններ ունեցավ կոնֆերանսի աչքի ընկնող դելեգատների հետ։

❁❁❁

Մոսկվայից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձին գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը կանգ առավ Թբիլիսիում։ Սրբազանը, չնայած Մայր Աթոռում կատարած ծանր պարտականություններին, միաժամանակ Թբիլիսիի թեմակալ առաջնորդն է։

Երկրորդ դաղկազարդին, կիրակի օր, մայիսի 22-ին, Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ և

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսի Հայկական ՍՍՌ պատվիրակությունը

Մոսկվայում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը և բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը վայելեցին խաղաղության կողմնակիցների Համամիութենական հինգերորդ կոնֆերանսի դելեգատների սրտագին բարեկամությունը և լավագույն հյուրընկալությունը Մոսկվայի ավենինդրադ հյուրանոցում։ Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը առանձին տեսակցություններ ունեցավ կոնֆերանսի աչքի ընկնող դելեգատների հետ։

սրբազանը խոսեց հոգեշունչ քարոզ՝ խաղաղության գաղափարի շուրջ, շեշտելով, որ այսօր ավելի քան երբեք, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ ժողովուրդը, որ հազարամյակներով զուրկ էին մնացել խաղաղությունից, կարիքն ունեն մնայուն խաղաղության։ Միաժամանակ սրբազանը մատնանշեց և եղեցիկ ոճով բնորոշեց խաղա-

ղությանն սրբազան նշանակությունը բոլոր ժողովուրդների համար, և հրավիրեց հավատացյալներին՝ սրտեռանդն աղոթել խաղաղության հաղթանակի համար ամբողջ աշխարհում և ժողովուրդների սրտում, որովհետև «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության մեջ կարմիր թելի նման անցնում է նրա խաղաղասիրական ձգտումը,— ասաց սրբազանը։

«Այսօր,— շարունակեց սրբազանը,— հավատացյալ հայ ժողովուրդը կանգնած է աշխարհի միլիոնավոր բարի կամքի տեր մարդկանց շարքերում, խաղաղասեր ժողովուրդների ընտանիքում, խաղաղության համար պայքարի առաջին շարքերում, աղոթելով ողջ աշխարհի խաղաղության համար, որպեսզի գլուխցին պատերազմունք, դադարեսցին բարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրիս։

Սրբազանի սրտից, խորը համոզմունքներից բխած այս դեղեցիկ խաղաղասիրական քարոզը լսվեց մեծ ոգևորությամբ և հոգեկան բավարարությամբ։

Մայիսի 23-ին գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը բարեհաջող վերադարձավ Մայր աթոռ Ս. Էջմիածին։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Նեմանաչելի է այս օրերին Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։ Չեն հընչում զանգերը, չեն լսվում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու քաղցրահնչյուն շարականները։ Եկեղեցական արարողությունները ժամանակավորապես դադարեցված են նորոգման կապակցությամբ։ Առավոտյան և երեկոյան ժամասացությունները, ինչպես և կիրակնօրյա պատարագները տեղի են ունենում Ս. Հռիփսիմեի եկեղեցում։

Մայր Տաճարն արտասովոր տեսք է ընդունել։ Այն նման է այժմ մի մեծ նորակառույցի։ Վանքը վերածվել է շինարարական եռուն հրապարակի։ Ներսում, աշխատողների դյուրության համար, վերից մինչև ներքև կառուցված են փայտամածներ։ Ամրակուռ երկաթյա գոտի են կապել մույթերը և կամարները։ Փայտամածների արանքից մերթ ընդ մերթ փայլատակում են շլացուցիչ կայծեր, որոնք առաջանում են մույթերն ամրացնող երկաթեղենի զոդումից։ Վեհաշուք կամարների տակ մի ուրույն արձագանքով հնչում է աշխատանքային աղմուկը։

Հպարտության և պարտքի բարձր զգացումով են տոգորված վանքի նորոգման գործով զբաղվող բանվորները, ինժեներները, նկարիչները։ Նրանց հետ միասին այդ զգացումը կիսում են բոլոր նրանք, ովքեր այս օրերին առիթ են ունենում լինելու Էջմիածնում, տեսնելու շինարարական այդ հոյակապ աշխատանքը։

Այո, ամեն ոք այժմ հոգեպես ուրախանում է և ներքուստ հպարտանում, տեսնելով Մայր Տաճարի վերականգնումը։ Այն, ինչի մասին երկար տասնամյակներ երազել են շատերը՝ դառնում է իրականություն։ Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությունը ձեռնամուխ է եղել քրիստոնեական հնագույն ճարտարապետական հուշարձանի վերականգնման պատվաբեր գործին և դա չի կարող հպարտությամբ չհամակել յուրաքանչյուր հայի։

***

Մեր ամսագրի նախորդ համարում մանրամասնորեն խոսեցինք Մայր Տաճարի և նրա հարակից շենքերի նորոգման ու վերականգնման աշխատանքների նախագծումների վրա։ Այս անգամ մենք մանրամասն կանգ կառնենք շինարարական բուն աշխատանքների ընթացքի վրա։

Ավելի պարզ պատկերացում ունենալու համար սահմանենք մեր դիտողությունների որոշ հերթականություն և սկսենք Տաճարի բակի մուտքից։

... Էջմիածնի քաղաքային զբոսայգուց մտնում ենք վանքի ընդարձակ բակը։

Մեր ուշադրությունն անմիջապես գրաւում է նորակառույց պարիսպը։ Այն գրեթե ամբողջովին ավարտված է։ Պարիսպն ունի ավելի քան 3 մետր բարձրություն և կառուցված է տեղական մուգ դեղնավուն, սրբատաշ քարով։ Շինարարները ներկայումս զբաղված են պարսպի զսպդաքանդակների ձևավորման աշխատանքներով։ Պարսպի կենտրոնում կառուցված է մի գեղեցիկ կամար, ուր լինելու է աղբյուրը։ Պարսպի ողջ երկարությամբ կլինեն բարեկարգ մայթեր։

Բակը մաքրվում է շինարարությունից գոյացած հողից ու խճից, որից հետո կսկսվի

Արվեստագիտության Դուռնովան Մայր Տաճարի մանրանկարչական աշխատանքները ղեկավարելիս

բարեկարգումը։ Կպատրաստվեն ծաղկանոցներ, կբարեկարգվեն անցուղիները։

Ինչպես հայտնի է, Տաճարի չորս բոլորը վաղուց ի վեր կային սալահատակյա մայթեր։ Ժամանակի ընթացքում սալաքարերը մաշվել էին, առաջացնելով խորդուբորդություններ։ Մի խումբ բանվորներ, քարտաշ Հակոբ Տլիկյանի անմիջական ղեկավարությամբ, զբաղված են այդ մայթերի նորոգման աշխատանքներով։ Բոլոր սալաքարերը հանվում, մեքենայի օգնությամբ հղկվում ու հարթեցվում և նորից դրվում են իրենց տեղը, սակայն ավելի գեղեցիկ շարվածքով։

Վարպետ Հ. Տլիկյանը Հայրենիք է վերադարձել Բելգիայից։ 20 տարուց ավելի է, ինչ նա քարտաշություն է անում։ Պետք է տեսնել, թե նա ինչպիսի խանդքով է կատարում իր աշխատանքը։ Յուրաքանչյուր սալաքար տեղադրելիս, նա մի քանի անգամ ձեռքով շոյում է քարը, ստուգում հարթությունը, ամրացնում տեղում, ապա քարերի կարները լցնում ցեմենտից պատրաստված շաղախը։

Շինարարական աշխատանքները ղեկավարող ինժեներ Ալեքսանդր Մոսայելյանը և Ջավեն Մելտերյանը մեզ հրավիրում են բարձրանալ Տաճարի կտուրը։

Այստեղ նույնպես մեծ աշխատանք է կատարվում։ Կտուրի ծածկի սալաքարերի կարերը ամրացվում են անջրանցիկ շաղախով։ Սալերի վրա ձգվում են փայտյա հաստ ձողեր, իսկ վերջիններիս վրա գամվում է ցինկապատ, արծաթագույն թիթեղը, որը կրկնակի չափով հաստ է սովորական թիթեղից։

Կենտրոնական գմբեթը պողպատյա խողանակներով ամբողջովին մաքրված է փոշուց ու մամուռից և այժմ այն ընդունել է ավելի բաց գույն, կարծեք թարմացել է։ Այս, ինչպես և մյուս գմբեթները, չեն թիթեղապատվում, նկատի ունենալով, որ նրանց խիստ թեքությունը ոչ մի վտանգ չի ստեղծում խոնավության համար։ Սակայն դրանց ծածկի սալաքարերի կարերը նույնպես լցվում են շաղախով։

Հուլիսի առաջին կեսին կտուրի հետ կապված բոլոր տեսակի աշխատանքները պետք է ամբողջովին ավարտված լինեն։

Հաջողությամբ առաջ են ընթանում Վեհարանի նորոգման աշխատանքները։ Շենքի կտուրն ամբողջովին փոխված է, պատած թիթեղով։ Նորոգված է պխավոր ճակատը։

Հունիսի կեսերից սկսվել է Սաղկյա դահլիճի նորոգումը։ Վերականգնվում են բոլոր մանրանկարները։ Նորոգման են ենթարկվելու նաև ընդունելության դահլիճը և հարակից սենյակները։ Ենթադրվում է առաջիկա մեկ ամսում ամբողջովին ավարտել Վեհարանի նորոգումը։

Իսկ ինչպե՞ս է վիճակը Մայր Տաճարի ներսում։

Մենք կփորձենք նկարագրել այն ավելի մանրամասն, սակայն նախքան ներս մտնելը, մի պահ կանգ առնենք պխավոր մուտքի մոտ, զանգակատան կամարների տակ։

Հայկական զարդաքանդակների և մանրանկարչության մի բացառիկ նմուշ է այս հոյակերտ զանգակատունը, որն ունի ավելի քան 200 տարվա պատմություն։ Ժամանակն իր կնիքն է դրել այդ մանրանկարների ու քանդակների վրա։ Նրանք խունացել են, գունաթափվել։ Եվ ահա փայտամածների վրա տեղավորված մի քանի երիտասարդ նկարիչներ, զինված վրձիններով ու բազմագույն յուղաներկերով, ամենայն մանրակրկիտությամբ մաքրում են այդ նուրբ զարդաքանդակները, պատում ներկերով։ Խստիվ կերպով պահպանվում է նկարների նախկին ոճը։ Այս ձևով նորոգվելու են զանգակատան, ինչպես և պխավոր մուտքի բոլոր զարդանկարները։

Մայր Տաճարի դուռը պատրաստված է կաղնու փայտից և ամբողջովին պատված նուրբ փորագրություններով։ Այն ևս կորցրել է իր վաղեմի տեսքը։ Վարպետ ատաղձագործները հատուկ գործիքներով մաքրելու են դուռը, որից հետո այն կընդունի բոլորովին նոր տեսք։

Սակայն մտնենք ներս։

Խիտ փայտամածներից Տաճարի խորհրդավոր կիսախավարը ավելի է թանձրացել։ Տախտակների արանքից երևում են էլեկտրական մեծ լամպեր, որոնք ժամանակավորապես դրված են աշխատողների համար։

Փայտամածներն ընդգրկել են մույթերը, բարձրացել մինչև կամարները, մինչև գմբեթի տակը, փակել են պխավոր սեղանը։ Վերևում, տախտակամածների վրա աշխատում են բանվորները, նկարիչները։ Շինարարական նյութերը վեր բարձրացնելու համար դրված են ամբարձիչ սարքեր։

Ահա դմբեթակիր չորս հիմնական մույթերը (սյուները), որոնք իրենց վրա պահում են Տաճարի ողջ կտուրը և կենտրոնական գմբեթը։ Այդ մույթերը, ինչպես և դրանք իրար միացնող կամարները ունեին լուրջ ճեղքվածքներ, որոնք առաջացել էին ժամանակից ու խոնավությունից և սպառնում Տաճարի ամբողջականությանը։

Նոկու ամիս առաջ շինարարները ամբողջովին բերեցին մույթերի ու կամարների ծեփի հաստ շերտը։ Մնաց քարե կմախքը։ Փորեցին նաև մույթերի հիմքերը։ Այժմ այդ

մույթերը բոլորովին այլ տեսք են ընդունել։ Քարե կմախքը վերևից մինչև ներքև առնված է երկաթե ամուր կապերի մեջ։ Այնուհետև ավելի բարակ երկաթաձողերից պատրաստված է ցանցաձև շապիկ և այդ բոլորը պատվում է ցեմենտի շաղախով։

Այս ձևով ամրացվում են բոլոր չորս մույթերը և դրանք իրար միացնող կամարները։

Ռոմանկարիչները Մայր Տաճարում աշխատելիս

Մույթերի բետոնապատման աշխատանքները Տաճարի վերանորոգման գործում հիմնական օղակ են հանդիսանում։ Ներկայումս այդ աշխատանքները կատարվում են արագ թափով։ Բետոնապատումից հետո մույթերն ու կամարները կծեփվեն գաջով, որից հետո կսկսվի դրանց վերևի հատվածների նկարազարդումը։

Մետաղագործական բոլոր տեսակի մոնտաժային աշխատանքները կատարում են մի խումբ հայ մասնագետ բանվորներ, ուստա ինժեներ Նիկոլայ Բիագովի անմիջական ցուցումներով։ Մեծ եռանդով ու խնամքով են կատարում իրենց բարդ և պատասխանատու գործը մետաղագործ բանվորներ Սարգիս Աբրաբյանը, Վարազդատ Շահինյանը, հայրենադարձ Խաչիկ Կարագանյանը, ինչպես և խմբի մյուս անդամները։

Փայտամածներին ամրացված ելարանով մագլցում ենք վերև, դեպի գմբեթը և կամարները, ուր աշխատում են նկարիչները։ Այստեղ արդեն «տեր ու տնօրենն» է պատվարժան ուստա արվեստագետ, հայկական հին մանրանկարչության ճանաչված մասնագետ Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովան, որի ծննդյան 70-ամյակը վերջերս նշվեց Երևանի նկարչական հասարակայնության կողմից։

Պատվարժան արվեստագետի անմիջական ղեկավարությամբ աշխատում են 21 նկարիչներ, որոնք բոլորն էլ վերջին տարիներին ավարտել են Երևանի Գեղարվեստական ինստիտուտը։ Նրանցից հատկապես հիշատակության արժանի են Լևոն Բաղդասարյանը, Հրանտ Հակոբյանը, Քնարիկ Հովսեփյանը, Գևորգ Շահբազյանը, Գևորգ Խանազյանը և ուրիշներ։

Պետք է տեսնել, թե այդ երիտասարդները ինչպիսի՞ սիրով ու ակնածանքով են աշխատում առավոտից մինչև երեկո։ Ինչպիսի՞ ուշադրություն, մանրակրկիտ աշխատանք և

հոգատար վերաբերմունք է պետք, որպեսզի դարերի ընթացքում իրենց գույնը կորցրած մանրանկարների պատառները կամ քե ամբողջովին մերկ կամարներն ու առաստաղները կրկին կենդանանան, վառ գույներ ստանան, ժպտան նոր փայլով։

Եվ նկարիչների վարժ վրձինների հպումով իրոք կենդանանում, կյանք է առնում հայ մանրանկարչության լավագույն վարպետների՝ Հովնաթանյանների անգնահատելի աշխատանքը։

Ահա նայեք գլխավոր սեղանի կատարին։ Ժամանակի ավերիչ ազդեցությունը ամենից շատ արտահայտվել էր այստեղ։ Այն ամբողջովին զրկվել էր իր զարդարանքներից։ Մնացել էր մերկ ծեփ։ Իսկ ա՞յժմ։ Գրե՞ով դժվար է նկարագրել այն, ինչ կատարված է վրձինով։ Գույների ինչպիսի՞ բազմազանություն, ինչպիսի՞ ճարտար աշխատանք։

Նույնը կարելի է ասել հարավային, հյուսիսային, արևմտյան կիսակամարների, կենտրոնական գմբեթի կամարի և շրջանակի մասին։ Դրանց բոլորի նկարազարդումը հիմնականում արդեն ավարտված է։

Մայր Տաճարի ներսում նկարչական աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի ավելի քան 2.000 քառակուսի մետր։ Այդ տարածության մոտ 70 տոկոսի վրա աշխատանքներն արդեն ավարտված են։ Ենթադրվում է հուլիսի և օգոստոսի ընթացքում ամբողջովին ավարտել մանրանկարչական աշխատանքները։

Վերականգնվելու են նաև սեղանի մարմարյա ճակատի սրբապատկերները և դրանք առնվելու են ապակյա շրջանակի մեջ։

Շինարարների լուրջ մտահոգության առարկա է դարձել Տաճարի հատակի նորոգման հարցը։ Ինչպես հայտնի է, Տաճարի հատակը պատված է սալաքարերով, որոնք մաշվել են և Տաճարի վերանորոգումից հետո չեն կարող լրացնել նրա գեղարվեստական ամբողջականությունն ու տեսքը։ Հատակի քարերը պետք է հանվեն, մեքենայի միջոցով հղկվեն ու հարթեցվեն և նորից դրվեն իրենց տեղը։ Իշման սեղանի շուրջը, շորս մույթերի միջև ընկած տարածության վրա, տուֆե սալաքարերը փոխվելու են հայկական գեղեցիկ մարմարի սալիկներով։

***

Անհուն գոհունակությամբ մենք հեռանում ենք վանքից։ Կանգնի շատ կարճ ժամանակ և նորոգման աշխատանքները կավարտվեն ամբողջովին։ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը կդառնա ավելի հոյակապ, ավելի ամրակուռ, որպեսզի կանգուն մնա նա բազմաթիվ հարյուրամյակներ՝ ի փառս հայոց բազմադարյան ճարտարապետական կուլտուրայի, ի փառս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆՏՅԱՆ

ՆՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

Ազար ինը հարյուր երեսունչորս թվին լույս էր տեսել իմ «Խորենացու առեղծվածի լուծումը» ուսումնասիրությունը, որի վերջում, հատուկ հավելվածում, քննության էր առնված Խորենացու Պատմության լեզուն։ Այդ հավելվածում մանրամասն ցույց էր տրված, որ Խորենացու բառապաշարի մեջ պարզ նկատելի են ոչ միայն Պիտոյից Փիլոնյան խմբի և հունական մյուս երկու խմբերի՝ 6-րդ և 7-րդ դարերի թարգմանությունների՝ հատուկ բառերը, այլ մինչև իսկ այնպիսի հետևագույն բառեր, որոնք սովորական էին 8-րդ և 9-րդ դարերի մատենագրական երկերում։

Թեև այս նոր լեզվական դիտողությունները վերջնականապես հաստատում էին, որ Խորենացու հունական լեզուն անկարելի է իջեցնել 5-րդ դար, այնուամենայնիվ, մի քանի բանասերներ համոզիչ չհամարեցին իմ բերած ապացույցները։ Մասնավորապես, Մտ. Մալխասյանցը, առանց մտնելու ըստ էության առանձին բառերի քննության մեջ, Խորենացու «լեզվի ընդհանուր նկարագրից» եզրակացրեց, որ նրա «հունաբանության չափավորությունն ըստ քանակի և որակի ապացույց է, թե Հայոց Պատմությունը գրված է հունաբանության սկզբնական շրջանում, այն է՝ 5-րդ դարի վերջերում»[1]։

Ապացուցելու համար, որ Խորենացին ծանոթ է եղել Արիստոտելյան երկերին ու նրանց մեկնություններին, որոնք թարգմանված էին 6—7-րդ դարերում, ես մեջ էի բերել, իբրև օրինակ, Խորենացու Պատմության հայտնի հատվածը «աստեղաբաշխության», «թուականության», «երկրաչափության և «երաժշտության» գյուտերի մասին, որին աղբյուր էր ծառայել Դավթի «Սահմանը իմաստասիրության» երկի համապատասխան մի վկայությունը, ու նաև Խորենացու խոսքերը՝ «առաքինությիւն բնականին է խոհականությիւն», որ առնված են դարձյալ 7-րդ դարի հունաբան թարգմանություններից։

Մալխասյանցը սխալ է համարում նաև իմ այս ցուցումը և կարծում, որ այդ հատվածներից առաջինը Խորենացու Պատմության մեջ մի սովորական ընդմիջարկություն է, իսկ երկրորդ հատվածը Խորենացին, որ հունական փիլիսոփայությանը ծանոթացել էր Աղեքսանդրիայում, մեջ է բերել իր սեփական թարգմանությամբ[2]։

Իմ նպատակը չէ այստեղ քննել Մալխասյանցի վերոհիշյալ առարկությունները, որ ես համարում եմ սխալ։ Առայժմ ես միայն կուզենայի հիմնավորել ու հաստատել իմ նախորդ եզրակացությունները կարևոր նոր դիտողություններով, որ թվում են ինձ ուշադրության արժանի։

Ի լրացումն իմ նախորդ ապացույցների, որ Խորենացու Պատմության մեջ դրած է ածված հունաբան ուշ շրջանի երկերի հետնադարյան բառապաշարը՝ ես կարևոր եմ համարում այժմ նաև մանրամասն ցույց տալ, որ 6—7-դարերի հունաբան թարգմանություններից Խորենացին օգտվել է ավելի մեծ չափով, քան այդ սովորաբար ենթադրում են։

1. Մ ա ր. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. «Խորենացու առեղծվածի շուրջը», Երևան, 1940 թ., էջ 77, 81 և 84։

2. Նույն տեղում, էջ 84—86։

Ներքև մենք բերում ենք Խորենացու Պատմությունից տասներկու հատված, որոնք պարզ կերպով ապացուցում են Խորենացու կախումը 6—7-րդ դարերի հունարան թարգմանություններից.

1) Խորենացի[1], Ա 1, էջ 6.— «Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ Առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարեա զբանն»

Համեմատե՝ Սահմ. իմաստ., Վենետիկ, 1833, էջ 173.— «Վասն զի պարտ է զիւրաքանչիւր մասն հոգւոյ՝ իւրականն զարդարել առաքինութեամբ. ուստի բան խոհականութեամբ զարդարեալ գոյ»

Նույնն ունի նաև Արիստոտելի Ցաղ. առաք., Վենետիկ, 1833, էջ 629.— «Բանականին առաքինութիւն խոհեմութիւն է»

2) Խորենացի, Ա 1, էջ 6.— «Ի ձեռն որոյ և զայսոսիկ զսկզբնատիպն ասիս ուրախագուշանել, գեղեցիկ և շափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ»

Համեմատե՝ Սահմ. իմաստ., Վենետիկ, 1833, էջ 120.— «Ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին»

3) Խորենացի, Ա 1, էջ 6.— «Ցանմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց են ազգք»

Համեմատե՝ Սահմ. իմաստ., տե՛ս Н. Марр, «К критике истории Моисея Хоренского», СПБ, *1898, էջ 13, ծան. 1. «Զի կացէ և մնացէ անջնջելի յիշատակ զկնի ազգաց եկելոցն»*

4) Խորենացի, Ա 1, էջ 27.— «Եւ ընդէ՞ր սա (Հեփեստոս.— Հ. Մ.) գտակ հրոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զհուր և շնորհեալ մարդկան,— որ է այլաբանութիւն,— ոչ բերէ ասել կարդ բանիսս»

Համեմատե՝ Սահմ. իմաստ., Բ, էջ 134.— «Եւ պարտ է գիտել՝ եթէ որք առասպելաբանեն ասեն, թէ Պրոմիթեոս գողացաւ երբեմն յաստուածոցն հուր՝ և շնորհեաց մարդկան. որ է այլաբանութիւն։ Քանզի նախ և առաջին Պրոմիթեոս եգիպտ զրաժանողական հնարս. քանզի բաժանողական հնարն համեմատի հրոյ. վասն այսորիկ ասեն զնմանէ շնորհել հուր մարդկանս»

Տե՛ս նաև Նոննոս, IV, 19, էջ 77.— «Պրոմեթեոս այս ասի, թէ գողացաւ զհուր յաստուածոցն և շնորհեաց մարդկանս»

Մեջ բերված այս չորս հատվածը մատնացույց է արել Ն. Մառը[2], որը իրավացի կերպով ենթադրում է, որ Դավթի «Սահմանք իմաստասիրութեանն» երկը, որի հայերեն թարգմանության ժամանակը, ինչպես մենք ցույց ենք տվել[3], պետք է դրվի 7-րդ դարում կամ ամենավաղը՝ 6-րդ դարի երկրորդ կիսում՝ անպայման, աղբյուր է ծառայել Խորենացու Պատմության։

5) Խորենացի, Ա 2, էջ 9.— «Եւ ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ (=զաստեղաբաշխութիւն) առ Ք (=Քաղդէացիս) և զԲ (=զթուականութիւն) առ Փ (=Փիւնիկեցիս) և զԿ (=զերկրաչափութիւն առ Ե (=Եգիպտացիս) և զՇ (=զերաժշտութիւն) առ Թ (=Թրակացիս)։ Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանսն հաւաստի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացւոց աշխարհին»

Համեմատե՝ Սահմ. իմաստ., գլ. ԺԷ, էջ 199.— «Եւ պարտ է գիտել, եթէ զթուականն Փիւնիկեցիք գտին, որպէս վաճառականք գոլով և թուականութեան պէտս ունելով առ ի համարել. իսկ զերաժշտականն Թրակացիք. վասն զի անտի էր Արփեայ, զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականն. իսկ զաստեղաբաշխականն Քաղդէացիք. վասն զի անամպ և մանապար չինչ գոլով օդոցն՝ դիտաւ կարացին ըմբռնել զշարժմունս աստեղաց. իսկ զերկրաչափականն Եգիպտացիք ի հարկէն»

Խորենացու այս հատվածն առաջին անգամ ուղիղ մեկնել էր Սավալանյանցը[4], Պրոֆ. Լևոն Մաթևոսյանցի ենթադրությունը[5], որ այս հատվածը կարող է քաղված լինել Եվսեբիոս Կեսարացու «Praeparatio evangelica» աշխատությունից՝ դժվար է ընդունել, որովհետև «Praeparatio evangelica»-ի մեջ չեն հիշատակված «թուականությունը» և «երաժշտությունը»։

---

1. «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս, 1913 թ.։

2. Տե՛ս Н. Марр, «К критике истории М. Хоренского», СПБ, *1898 թ., էջ 12—13։*

3. Տե՛ս իմ աշխատությունը՝ «Հունական դպրոցը ի նրա զարգացման շրջաններում», Վիեննա, *1928 թ., էջ 143։*

4. Տե՛ս «Արշալույս Արարատեան», *29 ապրիլի 1878 թ., № 1091։*

5. Տե՛ս „Ученые записки" II, Москва, 1930 г., *էջ 156—168։*

6) Խորենացի, Ա 6, էջ 22 (վերնագիր).— «Յաղագս Ոլիմպիոդորայ փիլիսոփայի անգիր հին զրուցացն»։

Նույնը, Ա 6, էջ 25.— «Իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա, Ոլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Պատմեցից ձեզ, ասէ, և զրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս և բազումք ի զեղջկաց զրուցեն մինչև ցայժմ»։

Նույնը, Բ 74, էջ 212.— «Եւ ասա ասեմ զրոյց զսքանչելի ծերոյն որ ասէր, եթէ «Ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի ի հորէ առնելով զյիշատակ զրուցացս այսոցիկս», որպէս Ոլիմպիոդորայն յաղագս Տարօնոյ և Սիմն կոչեցեալ լերինն»։

Մեջ բերված այս վկայությունների մեջ հիշատակված Օլիմպիոդորոսը, որն անվանված է «փիլիսոփայ», ինչպես մատնանշել եմ իմ «Հունաբան դպրոցը» աշխատության մեջ[1], 5-րդ դարի պատմագիր Օլիմպիոդորոսը չէ, այլ, ամենայն հավանականությամբ, 6-րդ դարի նոր-պղատոնական մեկնիչ կրտսեր Օլիմպիոդորոս փիլիսոփան է։ Սա է այն «կատարելագոյն» փիլիսոփան, որ մեծ հրուչակ ուներ Հայաստանում։ Փիլիսոփայության պատմությունից հայտնի է, որ զանազան ազգերի զրույցները հավաքում և այլարանորեն մեկնում էին, հատկապես նոր-պղատոնական իմաստասերները։

7) Խորենացի, Ա 21, էջ 65.— «Վասն որոյ արժան է մեզ աստանոր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից. զորոց մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի շորս հագներգութիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոց իմաստնագունին»։

Այս վկայության մեջ հիշատակված «Զորս հագներգութիւնք» բանաստեղծական երկի հեղինակը, ինչպես մասնացույց եմ արել դարձյալ «Հունաբան դպրոցը» իմ աշխատության մեջ[2], ամենայն հավանականությամբ, 7-րդ դարի Պողոս մեկնիչի ուսուցիչ «Եռամեծ Դաւիթ փիլիսոփայն է, որի երկից Խորենացին քաղել է Երվանդյան Տիգրանի և Աժդահակի պատմությունը։

Մալխասյանցի կարծիքը[3], որ այդ հայ հեղինակը Դավիթ Անհաղթ փիլիսոփան էր, Մովսես Խորենացու քրոջ որդին, պարզապես սխալ է։

8) Խորենացի, Ա 22, էջ 69.— «Քանզի և զվերջին Երուանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեօք. ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեաց ոք զանուանս զայսոսիկ»։

Համեմատե՝ Մեկն. ստորոգ. Արիստ. (տե՛ս «Հունաբան դպրոցը», էջ 290).—«Հոմանունութիւն լինի ըստ երկուս յեղանակս՝ ըստ պատահման կամ մտածութեան. մտածութիւն՝ ըստ պատուոյ, ըստ յիշատակի, ըստ յուսոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութեան»։

Տե՛ս նաև Մեկն. ստորոգ. Արիստ. ընծայեալ Ելիասի, Ս. Պետր., 1911 թ., էջ 49.— «Իսկ ոմանք՝ ըստ յուսում, որպէս յոյժամ ոք անուանիցէ զիւր որդի Պղատոն, յուսալով լինել այնպիսի»։

Մեջ բերված Խորենացու այս վկայությունը, որին աղբյուր են ծառայել Արիստոտելյան մեկնությունները, Մալխասյանցը համարում է մութ և անհասկանալի[4]։ Ըստ իս, Խորենացու վկայությունը միանգամայն պարզ է։ Նա ուզում է ասել, որ Երվանդ վերջինին և մյուս Տիգրանին անվանել են այդպես, հույս ունենալով, որ նրանք ևս կլինեն մեծ թագավորներ, ինչպես Երվանդ Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը։

9) Խորենացի, Ա 1, էջ 7.— «Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուատն և զզիարդն յայտնելով համառօտ և հաւաստի, որպէս ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս»։

Նույնը, Ա 6, էջ 22.— «Զհաւաստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանիցս»։

Նույնը, Բ 13, էջ 126.— «Արդ՝ ես հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս»։

Նույնը, Բ 70, էջ 207.— «Այլ մեք ասացուք միայն զտոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն»։

Տե՛ս նաև Ա 5, էջ 17, 20. 6, էջ 24. 22, էջ 68. 31, էջ 85. 32, էջ 87. Բ 7, էջ 109. 59, էջ 188. 64, էջ 198. 68, էջ 205. 82, էջ 224 և այլն։

Համեմատե՝ Թեոն, էջ 70.— «Եւ առաքինութիւնք պատմութեան երեք՝ հաւատութիւն, համառօտութիւն, հաւանութիւն»։

Մենք արդեն Թեոնի հրատարակության առաջաբանում (Երևան, 1938 թ., էջ ԼԷ—ԼԸ)

1. «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928 թ., էջ 41—42։

2. Տե՛ս նույնը, էջ 9—10 և 220—222։

3. Տե՛ս «Մովսես Խորենացի, աշխարհաբար թարգմանություն», Երևան, 1940 թ., էջ 270, ծան. 69։

4. Տե՛ս նույնը, էջ 44 և 271, ծան. 74։

պարզել ենք, որ Խորենացին ունեցել է իր ձեռքի տակ 6-րդ դարի երկրորդ կեսի Թեոնի հայերեն թարգմանությունը, որի ճարտասանական ցուցումները առաջնորդող ուղեցույցներ են եղել հռետորական ուղղությամբ գրված նրա պատմության։ Խորենացին իր Պատմության մեջ, ինչպես տեսնում ենք, շարունակ շեշտում է, որ պատմության ու պատմական նկարագրությունների գլխավոր արժանիքներն են նրանց «հաւաստիութիւնը, «համառօտութիւնը և «հաւանութիւնը։

10) Խորենացի, Բ 2, էջ 104.— «Եւ Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զբոլոր երկիրս յերիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Լիբիէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արշակ։

Համեմատե՝ Թեոն, էջ 20.— «Եւ յիրականացն պատմութեանց են ինչ, զորս և ի Հերոդոտայ առնուլ, որպէս զայն որ ի չորրորդէն յաղագս բաժանելոյն զբոլոր երկիր յերիս մասունս և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Ասիա և զոմն Լիբիաս։

11) Խորենացի, Բ 92, էջ 247.— «Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արքումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն։

Համեմատե՝ Նոնոս, III, ԺԳ, էջ 30.— «Յաղագս մոլեխնդին Սոկրատայ։ Սոկրատէսս այս էր ազգաւ աթենացի իմաստասէր հրահանգաւ Զեսա, իբր դն ինչ մուծանող ի քաղաքավարութիւն՝ Անիտոս և Մելիտոս հայեցին ի սպանդ. և դատապարտեալ եղև վասն ապականելոյ զհամբակսն մեռանիլ, ըմպելով կոնիոն. և արբեալ մահացաւ։

12) Խորենացի, Գ 19, էջ 278.— «Քաջ և սրի երևեալ (Արշակ։ — Հ. Մ.) քան զԱքիլլևս, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ։

Համեմատե՝ Թեոն, էջ 116.— «Եւ զյաղագս Թերսիտեայն.— Լեպեշտի էր և սրագլուխ և կաղ ի միոջէ ոտանէն։

Տե՛ս նաև Նոնոս, IV, ի և ԻԱ, էջ 72.— «Հոմերոս ի ներքս մուծանէ զայր ոմն Թէրսիտէս, որ էր կաղ, և խեղ աչաւք, կորով և լեպեշտի, լերկ և սրագլուխ, և յառաջախաւաս։

Մովսես Խորենացին, ինչպես ցույց է տրված իմ Թեոնի առաջաբանում[1], օգտված է

1. Տես «Բէոնիա», Յաղագս ճարտասանական կրթութեանցն, աշխատությամբ պրոֆ. Հ. Մանանդյանի, Երևան, 1938 թ., էջ Լե—ԼԶ։

եղել ոչ թե Թեոնի հունարեն բնագրից, ինչպես այդ ենթադրել էր գերմանական գիտնական Ադոլֆ Բաումգարտներ[2], այլ հայերեն թարգմանությունից։ Հակառակ Բաումգարտների ենթադրության, խալաթյանցը Խորենացու Պատմության աղբյուր է համարում Նոնոսի հատվածը[3]։ Խորենացուն, ինչպես երևում է մեր այս ուսումնասիրությունից, հայտնի են եղել հայերեն թարգմանությունները թե՛ Թեոնի և թե՛ Նոնոսի։

Ինչպես տեսնում ենք, մեջ բերված տասներկու այս համեմատությունները պարզ ու վերջնական կերպով ապացուցում են, որ Խորենացին, բացի Պիտոյից—Փիլոնյան երկերից, ծանոթ է եղել նաև 6—7-րդ դարերի հունարեն թարգմանություններին։ Միանգամայն հասկանալի է, ուրեմն, թե ինչու նրա բառապաշարի մեջ հանդիպում են բառեր հունարեն երեք խումբ թարգմանություններից։

Մյուս իմ նոր դիտողությունը վերաբերում է Խորենացու Պատմության բառապաշարի այն շերտին, որը թեև հունարեն չէ, սակայն ուշ շրջանի է և գործ է ածվել կամ 6-րդ ու 7-րդ դարերի երկերում և կամ, առավելապես, 8-րդ և 9-րդ դարերի Բագրատունյաց շրջանի մատենագրության մեջ։

Դեռևս 1934 թվի նոյեմբերի 9-ին Խորենացու լեզվի վերոհիշյալ իմ ուսումնասիրության առթիվ հատուկ զեկուցում էր կարդացել ՀՍԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտում Թ. Ավդալբեկյանը։ Նրա զեկուցման հիմնական եզրակացությունները, որ մեքենագրված ու հրապարակված էին, հետևյալն են.

«Բերված բառապաշարի 9/10-ը ճիշտ ընդունվելու դեպքում անգամ՝ կարող էր մաքսիմում լոկ այն ապացուցված լինել, որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ չէ, այլ 6—7-րդ դարերի։

Խորենացու 9-րդ դարի մատենագիր լինելու դրույթը պաշտպանելու համար բերված բառացանկը հազիվ մեկ-երկու տասնյակ բառից է կազմված։ Բայց այս բառապաշարը մեր կողմից բանասիրական և ժամանակագրական ճշգրտումների և ուղղումների ենթարկվելուց հետո մնում է մի տասնյակ բառ միայն, որոնցից ոչ մեկը լեզվա-պատմական ու իդեոլոգիական տեսակետից հատկանշական չէ՝ համոզելու,

2. Adolf Baumgartner, „Ueber das Buch „die Chrie", Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft", 13 d. 40, Leipzig, էջ 513—514.

3. Տե՛ս Գ. Խալաթյանց, „Армянские Аршакиды", Москва, 1903 г., էջ 238.

թե Խորենացու առեղծվածը լուծված է նաև բառապաշարի տվյալներով։

Ավդալբեկյանի քննադատությունը, դրժբախտաբար, հնարավոր չէ մանրամասն քննել, որովհետև նրա զեկուցումը տպագրված չէ։ Նրա գլխավոր առարկությունը, ինչպես երևում է վերև մեջ բերված նրա թեզիսներից, այն է, որ Խորենացու բառապաշարի մեջ իմ մատնանշած հետին բառերը քիչ են ըստ քանակի։

Ցույց տալու համար, որ նրա այս առարկությունը հիմնավոր ու համոզիչ չէ՝ ես այժմ կարող եմ բերել Խորենացու Պատմության մեջ գործածված ոչ թե 34, այլ 105 բառ, որոնք պատահում են հետին շրջանի երկերում, նաև 60 այլ կասկածելի բառ, որ կարող են հատուկ քննության։

Ես ընդունում եմ, իհարկե, որ ներքև նշանակված բառերի մի մասը կարող են թերևս հին լինել և գտնվել 5-րդ դարի երկերում, բայց խորապես համոզված եմ, որ նրանց մեծագույն մասը համարվելու են ուշ շրջանի բառեր, որոնցից որոշ մասը սովորական էին ու ընդհանուր Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում։

Այդպիսի հետին բառեր են թվում ինձ, օրինակ՝

1) Աթոռակալ, աթոռակալութիւն.— «Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Վռամայ այլ աթոռակալս» Խոր., Գ 64, տե՛ս նաև Խոր., Գ. 65., Ցովհ. կաթ., Նար. և այլն.

«Ցաղագս աթոռակալութեան Սահակայ», Խոր., Գ 39, տե՛ս նաև Ցովհ. կաթ., էջ 93 (1912 թ.), Թովմ. Արծր., I ԺԱ, II Բ, Նար. և այլն. կարող են լինել ուշ շրջանի բառեր։

2) Ախտարմող, ախտարմաղ կամ ախտարմախ.— «Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն... և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քատեալք» Խոր., Բ 70. «Ոմանք ի հեթանոսաց պարուց ընդ մեզ վիճին՝ եթէ զոն մարդիկ ախտարմախք որ ղլուխն իջուցանեն յերկիր դիւթեալ վհկաւ» Ան. Շիր. Տիեզ. Ե, էջ 22 (1940 թ.). ունեն վերոհիշյալ երկու հեղինակը. Խորենացու վկայությունը կարող է քաղված լինել Շիրակացու աշխատությունից։

3) Աղեբեկ.— «Աղեբեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան» Խոր., Ա 24, էջ 72. «Զաղէբեկ ծաղկեալ մօրուան ոսկեփունջ կազմեալ» Ցովհ. կաթ., էջ 102։ Մատենագրական հնագույն երկերում, այս բառը չի հանդիպում։

4) Այրասիրտ.— «Այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ» Խոր., Ա 16, էջ 52. Արծր., Գ 29, էջ 428՝ «Մինչև տացէ ինձ Աստուած յորդւոց իմոց այրասիրտ նման հօր իւրոյ». կան միայն վերոհիշյալ երկերում։

5) Այրեցած.— «Ցայրեցածէն մինչև ցքիմիտոն» Խոր., Ա 30, էջ 84. «Ի վերայ այրեցածին ասին երկոտասան աստեղատունքն» Շիր. «Քանզի որ ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակքն» Խոր., Աշխ., էջ 586 (Վենետիկ, 1843 թ.) և էջ 5 (Վենետիկ, 1881 թ.). «այրեցական գոտի», «այրեցանող գոտի» Շիր., էջ 39, 65, 66 (Ս. Պետր., 1877 թ.). Հանդիպում են միայն Շիրակացու և Խորենացու երկերում։

6) Անդառնալի.— «Զմիանդակն անդառնալի» Խոր., Բ 8, էջ 116. «Իբրև եռես բրոնաւորն զանդառնալի միտսն» Արծր., Գ 2, էջ 217. «Անդառնալի գնային ի կամս անձանց» Ցովհ. կաթ., էջ 219, Մեսր. երէց. Լաստիվ. և այլն. այս բառը ինձ չի հանդիպել դասական հին երկերում։

7) Անխոնարհելի.— «Ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածսն» Խոր., Գ 37, էջ 304. «Շարժեալ յիւրմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն» Ղևոնդ, գլ. 34, էջ 142. «Համբարձեալ զսուրբ ձեռս իւր յերկինս անխոնարհելի յաղօթս կայր առ Աստուած» Մեսր. երէց, ԺԱ, էջ 73. «պարանոցն անխոնարհելի» Մեսր. երէց, ԺԴ, էջ 113, «անխոնարհելի մնացեալ» Արծր., Գ 20, էջ 365. հավանորեն ուշ շրջանի բառ է. համեմատե Ակինյան, Մատեն. հետազ., III, էջ 139։

8) Անձնագեղ.— «Ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղացն Պարսից» Խոր., Գ. 65, էջ 351, «Զանձնագեղս և զերեսաւորս և զգունեանս արտաքոյ այսոսն տոհեալս» Ցովհ. կաթ., էջ 119. «զանձնագեղ և զբարեվայելուչ երիտասարդն զԱշոտ» Ցովհ. կաթ., էջ 194. այս բառը չի պատահում հնագույն երկերում։

9) Անձնեայ.— «Այժմ իսկ է տեսանել ի զարմս Ամատունեաց, քանզի անձնեայք և բարեձևք» Խոր., Բ. 57, էջ 187. «Վարագդատ էր տիրոջ մանուկ, սրտեալ, անձնեայ, ուժեղ» Խոր., Գ 40, էջ 308. «Ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեայ է» Շիր., Տիեզ., էջ 20. «Քաջաքաջասան Էռ նա և անձնեայ և թիկնամէտ և զուարթերեսս» Ցովհ. կաթ., էջ 137. «Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ

անձնեայս և գեղեցիկս» Արծր., Գ 6, էջ 256. հնագույն երկերն ունեն «անձնեղս»։

10) Աշխոյժ.— «Ոչ զհոգւոյն խափանէր աշխոյժս» Խոր. Գ 8, էջ 265, Ցովհ. իմաստ. Պապ. Պիտ., էջ 485 (նորագույն վարժութիւններից մեկում). «աշխոյժութիւն» Պատմ. Աղեքս., 25. «աշխոյժաշնեալք» Մովս. Կաղան., Բ 36, էջ 263. 5-րդ դարի երկերում չի հանդիպում։

11) Աշտանակեմ.— «նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ» Խոր., Բ 79, էջ 217. «արիաբար աշտանակէր» Խոր., Բ 82, էջ 225. «յերիվարս ահիպարանոցս աշտանակեալք» Ցովհ. կաթ., էջ 160. «աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին» Արծր., Գ 16, էջ 342. համեմատե նաև Պատմ. Աղեքս., էջ 16, Ցովհ. կաթ., էջ 236 և 357. Մովս. Կաղան., Բ 1, էջ 124. «աշտանակել», որ այս հատվածներում նշանակում է «ցատքել և նստել ուղղաձիգ ձիու վրա» իր այս նոր իմաստով թվում է ինձ Բագրատունյաց շրջանի բառ։

12) Ապրսամ.— «բալասանն, «բաղսամոնս, տես Խոր., Բ 15, էջ 130. Նիս. Կազմ. հերձ. 129 և այլն. թեև ըստ իր ձևի այս բառը թվում է հին փոխառություն ասորերենից, սակայն հայ մատենագրական երկերում, որքան ինձ հայտնի է, նա հանդիպում է 7-րդ դարից հետո։

13) Աչակցեմ.— «Որ և կիւրոսի աչակցեալ» Խոր., Ա. 24, էջ 71. «Որ և աչակցեալ իսկ եղբօր իւրում Աշոտոյ» Ցովհ. կաթ., էջ 135. «Եւ ապա այլոցն ևս մարտակցացն աչակցեալ Գէորգայ» Ցովհ. կաթ., էջ 357. «աչակից» ունի նաև Սամ. երէց. «աչակցեալ» բառը, ըստ երևույթին, միջին շրջանի բառ է։

14) Ասպազէն.— «Հանեալ յասպազինէն զներդեալ քեմխտապատ պարանն» Խոր. Բ 85. այս բառը, որ պատահում է նաև Ագաթանգեղոսի Պատմության մեջ՝ սովորական է Բագրատունյաց շրջանի հեղինակների երկերում. տե՛ս Ցովհ. կաթ., էջ 296. 356. Արծր., Ա 6, էջ 79, Բ 2, էջ 146. Գ 9, էջ 284. 14, էջ 335. 17, էջ 344. 20, էջ 358. 28, էջ 395. Դ 7, էջ 483. 9, էջ 492 և այլն. «ասպազինեալ» Արծր., 8 5, էջ 76. Ա. 10, էջ 118 և այլն։

15) Արագաբանութիւն.— Ունեն Խոր., Ա. 32, էջ 87 և Ցովհ. կաթ., էջ 23. կարող են լինել ուշ շրջանի բառեր։

16) Արտաճառեմ.— «զրնդրդիմաբանել անմիտ հայհոյութեանցն արտաճառելոց» Խոր., Գ 65, էջ 351. տե՛ս նաև Պատմ. վարուց Սեղբ., էջ 691, Զաք. կաթ. Ան. եկեղ. այս բառը կարող է կազմված լինել ուշ շրջանում։

17) Արտափայլեմ.— «մարմնով արտափայլեալ, սարսափիւք անճառս» Խոր., Գ 67, էջ 357. «Մարմնով արտափայլեալ, սարսափիւք անճառս» Պատմ վարուց Սեղբ., էջ 699. տե՛ս նաև Ցովհ. կաթ. էջ 39 և 255. Զաքր. կաթ և այլն։ Խորենացու համապատասխան հատվածը, ինչպես հայտնի է, քաղված է Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից։

18) Բազէակիր, բազէակալ.— «Ասեմ... ե զՀաւուսիսդ՝ բազէակիրս և բազէակալս» Խոր., Բ 7, էջ 111. «Եւ ապա մատուռակս և արծուէակիրս և բազէակիրս» Ցովհ. կաթ., էջ 26։

19) Բազմաբիւրաւոր.— «Հայկազինն բազմաբիւրաւորի» Խոր., Ա 25, էջ 74. համեմատե նաև Խոր., Բ 8, էջ 113. «Բազմաբիւր զանձիւքս» Արծր., Դ 3, էջ 470։ Այս բառը ևս չի հանդիպում հնագույն երկերում։

20) Բազմախողխող.— «զբազմախողխող երդիքն» Խոր., Գ 28, էջ 290. Ցովհ. կաթ., էջ 8, 110, 223, 226, 241, 276. Պատմ Աղեքս., 65. «կիսախողխող»— «Մուտերս հանեալ կիսախողխող զքարշողսն առնէին» Խոր., Գ 32, էջ 296. Պատմ. Աղեքս., 28, 105. Ասող., Գ 7, էջ 172. թվում են հետին բառեր։

21) Բարձրագագաթ.— «Ի բարձրագագաթանց պարսպեալ լերանցս» Խոր., Ա 12, էջ 38. «Պարսպեալ իմն է բարձրագագաթն սպիտակափառ լերամբքս» Ցովհ. կաթ., էջ 16. «Զմեծ լեառն Մասիս կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառս» Արծր., Ա 8, էջ 97. «զբարձրագագաթոնս լերանցն, Արծր., Դ 3, էջ 458։ Այս բառը, որքան ինձ հայտնի է, հանդիպում է Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում։

22) Բարձրայօնութիւն.— «Ինութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւնս» Խոր., Բ 92, էջ 246. «արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն», Արծր., Գ 26, էջ 391. «բարձրայօն»— «ամբարտաւան և բարձրայօնս փքայրս» Ցովհ. կաթ., էջ 300. «բարձրայան նեղանացն» Մովս. քերթողահայր, Թուղթ, էջ 27. ունեն նաև Նար. և Արգ. «բարձրայօնական»— «զոչինչ բարձրայօնական վարժից ներհոնեալք Սիսն. առ. ջերմ. նաև Գր. Տղայ առ Տուտ.։ Վերոհիշյալ բառերը հանդիպում են սկսած 7-րդ դարից։

23) Բեմասացութիւն.— «Ի բեմասացութեան ձեւի» Խոր., Գ 65, էջ 351. «Ճառեալն ի նմանէ բեմասացութեամբ» Սոկր., Զ 5, էջ 502. Նաև Խոսր. պտգ., Շնորհ. և այլն։ Այս բառը, հավանորեն, առաջին անգամ գործ է ածված Սոկր. Սկոլ. մոտ։

24) Բերեմ.— «Ո՞ր պէս զախտս հանդուրժեցից բերելոյ» Խոր., Գ 68, էջ 360. «Ապրդ ո՞վ ոք առանց արասասուց բերիցէ զանհարին աղէտսն» Ղևոնդ, է, էջ 21. «գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն» Ղևոնդ, ԽԲ, էջ 168։ «Բերելոյ— «համբերել, տոկալ» իմաստով, հավանորեն ուշ շրջանի բառ է։ Տե՛ս Ակինյան, Մատեն. հետազ., Գ, էջ 190։

25) Բոցակնագոյն.— «Մա հրաշեալ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ» Խոր., Ա 22, էջ 68. «Եւ բոցակնագոյն նա տեսողացն թրթիռս» Ցովհ. կաթ., էջ 20։

26) Գեղաւոր.— «Տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիքս» Խոր., Ա 24, էջ 72. «գեղաւոր կոսիցս» Խոր., Բ 42, էջ 167, ունի նաև Շնորհ. «Գեղաւորացն արուեստսն» Ոսկ. Եփ. Մէ (իմաստը տարբեր է)։

27) Գեղեցկադիմակ, գեղեցկադիտակ.— «Բայց կոյս մի գեղեցկադիմակ (գեղեցկադիտակ)» Խոր., Բ 78, էջ 217. «զուարթագին երեսոք էին և գեղեցկագիտակք» Ցովհ. կաթ., էջ 123։

28) Գերապայծառ.— «Գերապայծառս իմն առնելով շինուածս» Խոր., Բ 88, էջ 238։ Ունեն նաև Վարք Սեղբ., Ե, էջ 715. Խոր., Հռիփս. շար., Շնորհ. Եղես. և այլն։ «Գերապայծառաբարս— Վարք Սեղբ., Զ, էջ 720։ Այս բառը կազմված է, ըստ երևույթին, հայոց մատենագրության ուշ շրջաններում։

29) Գլխանոց.— «Եւ՝ ինքն գլխանոց ագուցեալ երկաթիս» Խոր., Ա 11, էջ 35. «զագուցեալ գլխանոցն երկաթի վաղերբ դիպեցուցեալ» Ցովհ. կաթ., էջ 303։ «Գլխապանս— Արծր., Ա 5, էջ 76։ Չի հանդիպում հնագույն երկերում։

30) Գոնեան.— «Երեսոք գունեան և մեղուակնս» Խոր., Ա 24, էջ 73. «Գոնեան այլն և թիկնատ առ ամփոփատն մտանէր» Ցովհ. կաթ., էջ 102. «զանձնագեղս, զերեսաւորս և զգունեանս» Ցովհ. կաթ., էջ 119։ Ըստ երևույթին ուշ շրջանի բառ է։

31) Դառնահոտ.— «Ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ» Խոր., Բ 39, էջ 165։ Այս բառը գործ է ածված ուշ շրջանի երկերում՝ Կլիմ., Շար.։

32) Դեղձան.— «Վտրեալ զդեղձան հերանս» Խոր., Գ 63, էջ 195. Նաև Ախտարգ, Ոսկեփորիկ և այլն։ Թվում է, որ ուշ շրջանի բառ է։

33) Դժուարամոտ.— «Դժուարամոտս ոմանս և դժոխելանելիս ի նմա յորինել շինուածս արքայանիստս» Խոր., Ա 16, էջ 54. «զժուարամուտ դրամտքս» Ցովհ. կաթ., էջ 286։

34) Դիպաձգութիւն, դիպաղեղն.— «Դիպաձգութեամբ նետից կորովիս» Խոր., Ա 12, էջ 42. «Պարսաւորքն առհասարակ դիպաղեղունքս» Խոր., Ա 24, էջ 72. «Աւրք քաջք, կորովազէնք և գիպաղեղունքս» «Աւրծր., Ա 8, էջ 100։ Թվում են հետին բառեր։

35) Դիւրամուտ.— «Դիւրամուտ ի հայս լնալ Արշակ Մեծս» Խոր., Ա 31, էջ 87. «Դիւրամուտ եղև յաշխարհս Շապուհ» Խոր., Գ 55, էջ 330. «Դիւրամոտս զստորածինն ի բնակութիւն իւրանց առնէին» Ցովհ. կաթ., էջ 23. ունեն նաև Խոսր., Դիոն., Երկն. և այլն։ Չի հանդիպում հնագույն երկերում։

36) Դրակոնտիկոն.— «Որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկւոյ» Խոր., Բ 52, էջ 181. «Որպէս դրակոնտիկոն շարամանաբար մակ ոսկւոյ մածեալ» Մագ. Թղթ., էջ 203. Նաև տե՛ս Պղատ. Տիմ., էջ 89։ Ըստ երևույթին, ուշ շրջանի բառ է։

37) Եկաւորութիւն.— «Զկարենեացն կարծեցեալ եկաւորութիւնս» Խոր., Բ 74, էջ 211. ունեն նաև Զքր. կաթ., Նար., Սկևռ. և այլն. «Եկաւորեալ»— Վարք Սեղբ., էջ 694, 724. «Եկք— Խոր. Աշխ., էջ 25 (Սուքր.), Մովս. Կաղան., Ա 1, էջ 11։ Բոլոր այս բառերը հանդիպում են ուշ շրջանի երկերում։

38) Եղեփանդական.— «Ինքն եղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ» Խոր., Բ 83, էջ 226. «Ինքն ապա եղեփանտական բորոտութիւն ըստ բոլորն ընկալեալ մարմնոյ վիրաւորեցաւ» Վարք Սեղբ., էջ 722. «Ցայնժամ եղեփանտական բորոտութիւն զբոլոր մարմին թագաւորին Կոստանդինոսի ապականէր» Վարք Սեղբ., էջ 722 (գլ. Ը)։ Խորենացուն, անտարակույս, աղբյուր է ծառայել Սեղբեստրոսի Վարքը։

(Շարունակելի)



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Հայ ժողովրդի կազմավորումը— մեր պատմության ամենաբարդ և կընճռոտ հարցերից մեկն է։ Դժվար է այդ թեմայով դասախոսություն կարդալ այսպիսի խայտաբղետ լսարանում. այստեղ ներկա են բեյրութահայ մեր տարբեր շրջանակների ներկայացուցիչները— մասնագետ հայագետներ, հայ ժողովրդի պատմության դասախոսներ, պատմության ուսանողներ, իսկ սրանց կողքին՝ մեր պատմության հետ քիչ ծանոթ անձինք։ Դժվար է մեզ համար գոհացում տալ միաժամանակ բոլորին— եթե մենք սկսելու լինենք նեղ մասնագիտական դասախոսություն, դժգոհ պիտի մնան ոչ մասնագետները, իսկ եթե սկսելու լինենք հանրամատչելի, պարզեցված դասախոսություն — դժգոհ պիտի մնան նեղ մասնագետները։ Ուստի և որոշել ենք ընտրել նեղ մասնագիտականի և հանրամատչելիի միջինը— via media-ն. գուցե այդ միջոցով հաջողվի մեզ դժգոհության տեղիք չտալ։

Բարդ և վիճելի այսպիսի հարցի մասին խոսելիս անհրաժեշտ է պատմական կոնկրետ փաստեր բերել և համոզել։ Դժբախտաբար, մենք ձեռքի տակ չունենք հայագիտական այն հարուստ գրականությունը, որը հրատարակվել է հայրենի երկրում և վերաբերում է մեր ժողովրդի ծագմանը։ Գրականության բացակայության պատճառով, մենք հարկադրված պիտի լինենք մեջբերումներն անել հիշողության հիման վրա, ուստի և ներողամիտ պիտի գտնվենք, եթե որոշ դեպքում հիշողությամբ չկարողանանք բառացի վերարտադրել սկզբնաղբյուրներից և ուսումնասիրողներից վերցրած քաղվածքները։

Նախապես ուզում ենք հայտնել նաև, որ մեր ներկա դասախոսությամբ հավակնություն չունենք, ինչպես ասում են, մի հարվածով լուծել հայ ժողովրդի կազմավորման հարցում եղած կնճռոտ և շլուսաբանված առեղծվածները. մեր խնդիրն է ներկայացնել ձեզ «Հայրենիքի գիտնականների կարծիքը հայ ժողովրդի կազմավորման մասին», ինչպես պարզ ձևակերպված է մեր թեմայի խորագրում։ Բայց թող միաժամանակ սխալ տպավորություն չստեղծվի, որ մենք հենվելով Հայրենիքի գիտնականների կարծիքի վրա, ուզում ենք խույս տալ մեր սեփական տեսակետն արտահայտելու պատասխանատվությունից։ —Մենք զբաղվել ենք հայ ժողովրդի կազմավորման հարցով և ունենք մեր հաստատուն տեսակետը, որը և պարզորոշ կարտահայտենք դասախոսության ընթացքում։

Հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ գոյություն ունեն մի շարք ավանդություններ և տեսակետներ։ Մենք ուզում ենք համառոտակի կանգ առնել այդ ավանդությունների և տեսակետների վրա առանձին-առանձին և տալ նրանց մասին մեր գնահատականը։

---

* Տպագրում ենք պրոֆ. Ա. Աբրահամյանի Անթիլիասի Կյուլպենկյան սրահում սույն թվականի փետրվար ամսի 4-ին կարդացած դասախոսությունը։—ԽՄԲ.։

***

Հայ ժողովրդի ծագման մասին հնագույն շրջանից մեզ է հասել երեք ավանդություն՝ տեղական, վրացական և հունական։

Տեղական ավանդությունը, Մար Աբասից վերցնելով, գրի է առել պատմահայր Մովսես Խորենացին, իսկ հետագայում՝ նաև 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը։ Անշուշտ դուք ծանոթ եք այդ ավանդության հետ։— Նրա համառոտ բովանդակությունը հետևյալն է. Բաբելոնում իշխում է բռնակալ Բելը, որի մոտ ստրկական ծառայության մեջ են շատերը, որոնց թվում և Հայկ նահապետը, որ «էր գեղապատշաճ և անձնեայ, քաջագանդուր, խայտակն և հաստարաղուկ»։ Վերջինս չի ցանկանում ստրկական ծառայության մեջ մնալ Բելի մոտ, ուստի և թողնում է Բաբելոնը և իր ընտանիքով ու ազգականներով դալիս Հայաստան։ Բելը մարդ է ուղարկում և հետ կանչում նրան։ Հայկը չի համաձայնվում։ Բելը հավաքում է իր զորքը և գալիս Հայաստան՝ Հայկին պատժելու համար։ Տեղի է ունենում մենամարտ Հայկի և Բելի միջև. Հայկն իր նետը խրում է բռնակալի ողահապատ կուրծքը և գետին տապալում նրան։— Ըստ այդ ավանդության, Հայկի սերունդն է, որ աճում, տարածվում է Հայաստանում, նրա անունով է, որ մեր ժողովուրդը կոչվում է հայ, իսկ մեր երկիրը՝ Հայաստան։

Մեր նախահայրը, ըստ այս ավանդության, հանդես է գալիս որպես ազատությունը սիրող, չարի, բռնության դեմ ծառացող մի անձնավորություն. նշանակալից է, որ ազատասեր մեր ժողովուրդը իր ծագման ավանդությունը ստեղծել է իր նկարագրի, իր պատկերի համաձայն։

Հին մատենագրության մեջ հայ ժողովրդի ծագման մասին մի այլ ավանդություն գրի է առել վրացական անանուն պատմիչը «Քարթլիս ցխովրեբա»յում («Վրաց պատմության» մեջ), ըստ որի վրացիները, հայերը, աղվանները և կովկասյան մյուս ժողովուրդները մի հոր՝ Թորգոմի զավակներն են՝ հարազատ, արյունակից եղբայրներ — հայերը՝ Հայկի սերունդն են կազմում, իսկ վրացիները՝ Քարթլոսի։

Եվ, վերջապես, հայերի ծագման երրորդ ավանդությունը՝ այդ հունականն է, որը գրի են առել մի քանի հույն պատմիչներ՝ Հերոդոտոսը (488—425 թ. թ. մ. թ. ա.), Եվդոքսոսը (408 — 355 թ. թ. մ. թ. ա.), Դիոնիսիոս Հալիկարնացին (1-ին դար մ. թ. ա.) և ուրիշները։

Հայերը, ըստ հունական ավանդության, ծագումով փրյուգիացիներ են. նախապես նրանք ապրելիս են եղել Եվրոպայում, մակեդոնացիների հարևանության մեջ, իսկ հետագայում գաղթել են Փոքր Ասիա և բնակություն հաստատել Հայաստանում։

Առաջին դարի հույն պատմիչ Ստրաբոնը հայկական Արմենիա անունը կապում է հույն առասպելաբանության հերոսներից մեկի՝ արգոնավորդ Արմենիոսի հետ, որը իբր թե Թեսալիայի Արմենիոն քաղաքից է եղել, միացել է դեպի Կոլխիդա նավարկող Յասոնի խմբին, եկել է Կոլխիդա, իսկ այնտեղից անցել Հայաստանի եկեղյաց գավառը, ապա՝ Սպեր և հաստատվել այնտեղ։ Ստրաբոնի տեղեկության համաձայն, այս Արմենիոսի անունով է, որ երկիրը կոչվել է Արմենիա, իսկ ժողովուրդը՝ արմենեներ։

Հունական այս առասպելի ստեղծման նպատակը լիովին հասկանալի է մեզ. հույները այդ շրջանում գաղութների լայն ցանց էին ստեղծել Արևելքում, փնտրում էին «երբեմնի հարևան և ազգակից» ժողովուրդներ՝ նրանց բարյացակամությունը շահելու և նրանց վրա հիմնվելու համար. նրանց աչքից ահա չի վրիպել հայ ժողովուրդը։ Այդ նույն նպատակով, ի դեպ, հունական ավանդությունները Հունաստանից դուրս եկած են համարում ո՛չ միայն արմենների, այլև պարսիկների և մարերի։

***

Բոլոր դեպքում, բերված երեք վկայությունն էլ, ինչպես հայկականը և վրացականը, այնպես և հունականը— առասպելներ են, զուրկ պատմական ճուրջ հիմքից։ Ժամանակակից հասարակական գիտությունը, բնական է, չէր կարող խարխափել առասպելների այս նեղ շրջանակների մեջ և փորձեր պիտի աներ նոր և համոզեցուցիչ բացատրություններ տալու ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես և հայ ժողովրդի կազմավորմանը։

19-րդ դարում հանդես է գալիս ահա լեզուների և ժողովուրդների ծագումը նոր ձևով բացատրող տեսություն՝ պատմա-համեմատական լեզվաբանության տեսությունը, որը հիմնվում է լեզուների համեմատական ուսումնասիրության վրա և այդ հիման վրա խմբավորում ժողովուրդները ըստ ազգությունների։

Ժողովուրդների ծագումը համեմատական լեզվաբանությամբ բացատրող այս դպրոցի ներկայացուցիչներից հայ ժողովրդի կազմավորման հարցով զբաղվեց լեզվաբանության հնդեվրոպական խումբը (Բոպը, Պետերմանը և ուրիշները)։ Նոր տեսության հետևողները գտան, որ հայ ժողովուրդը պատկանում է լեզուների հնդեվրոպական խմբին։

Հնդեվրոպական այս տեսության էությունը հետևյալն է. հնուց ի վեր մի նախահայրենիքում — ոմանք այդ նախահայրենիքը ենթադրում են Միջին Ասիան, ոմանք՝ Ռուսաստանի տափաստանները, ոմանք՝ Միդիան և այլն — ապրելիս է եղել հնդեվրոպական մի նախացեղ, մի նախաժողովուրդ, որը հետագայում կոտորակվել, ճյուղավորվել և տարածվել է Եվրոպայում և Ասիայում՝ Բրիտանական կղզիներից սկսած մինչև Հնդկաստան։ — Այս խմբին պատկանող ժողովուրդները պահել են իրենց նախկին լեզվից բազմաթիվ բառեր և քերականական ձևեր, որոնք և ապացուցում են նրանց ազգակցությունը։ Ըստ այս տեսության, հայերն ահա հնդեվրոպական այս ընտանիքի անդամ են հանդիսանում և մոտիկ ազգակցության մեջ են սլավոնական և գերմանական խմբի հետ։ (Հնդեվրոպական լեզվաբանները հայկական լեզուն ներկայումս տեղադրում են արիական և սլավոնա-լիտվական խմբերի միջև)։ Ըստ այդ տեսության, հայերը նախապես ապրելիս են եղել Փրյուգիայում. 12-րդ դարում մ. թ. ա. Հելլեսպոնտոսի վրայով նրանք գաղթել են Փոքր Ասիա, երկար ժամանակ թնակվել են Հալիս գետի վրա և ապա 7-րդ դարում մ. թ. ա. շարժվել Հայաստան և մշտական բնակություն հաստատել այստեղ։

Ժողովուրդների ծագումը տեղաշարժերով բացատրող տեսությունը գիտության մեջ կոչվում է նաև միգրացիոն (գաղթային) տեսություն։ Հայ ժողովուրդը, ըստ միգրացիոն այդ տեսության, տեղաբնակ ժողովուրդ չէ, այլ եկել է Թրակիայից և բնակություն հաստատել Հայաստանում։

Այս է, ընդհանուր գծերով, հայ ժողովրդի ծագման մասին հնդեվրոպական այն տեսությունը, որը պաշտպանել են հայագիտության մեջ պրոֆ. Պատկանյանը, պրոֆ. Խալաթյանցը, պրոֆ. Մարկվարտը, պրոֆ. Լեոն, ակադ. Հ. Մանանդյանը և ուրիշները։ Ջենք ուզում նրանց առաջադրած թեզերի վրա ծանրանալ առանձին-առանձին, որովհետև նրանց բոլորի հիմքը, ըստ էության, նույնն է — միգրացիան, գաղթը։

Ըստ որում, հայ ժողովրդի ծագումը միգրացիայով բացատրող հնդեվրոպական տեսության հետևող հայագետները բաժանվում են երկու խմբի. ոմանք պնդում են, թե Թրակիայից եկող արմենները երկրից դուրս են քշել նախաբնիկներին և ոչ ոքի հետ չեն ձուլվել, ուստի և հայերը զտարյուն հնդեվրոպական ժողովուրդ են, պատկանում են այսպես կոչված մնորդական («հյուսիսային») խմբին, իսկ ոմանք պնդում են, թե ներգաղթող արմենները ո՛չ թե երկրից դուրս են քշել տեղացիներին կամ ոչնչացրել, այլ խառնվել, ձուլվել են նրանց հետ և այդ խառնուրդից է, որ ձևավորվել է հայ ժողովուրդը, ուրեմն՝ հայ ժողովուրդը խառնածին ժողովուրդ է։

Վերջին խմբի հայագետները վիճում են իրար հետ նաև այն մասին, թե այս ձուլման մեջ առաջնակարգ տարրը ո՞րն է հանդիսացել՝ եկվո՞ր տարրը, թե՞ տեղացին։ Ակադ. Ն. Մառի կարծիքով, գերիշխող տարրը հանդիսացել է տեղականը։ Նա իր «Կովկասի կուլտուրական աշխարհը և Հայաստանը» աշխատության մեջ, վերլուծելով հայկական լեզվաշերտերը, եկել է այն եզրակացության, որ այն բոլոր բառերը, որոնք կապված են երկրագործության, ճարտարարվեստի, մի խոսքով՝ կուլտուրական երևույթների հետ, տեղական ծագում ունեն, իսկ այն, ինչ որ ռազմավարության հետ է կապված և հետամնաց լեզվաշերտ է, եկվոր արմեններն են բերել իրենց հետ, և եզրակացնում է, որ հայ ժողովրդի կազմում գլխավորը, առաջնակարգը — տեղականն է հանդիսացել։

Այժմ անցնենք հայ ժողովրդի ծագման մասին Հայրենիքի մեր պատմաբանների տեսակետներին և ծանոթանանք նրանց տվյալ լուսաբանությունների հետ։

***

Հայ ժողովրդի ծագման հարցով Հայրենիքի մեր գիտնականներից զբաղվել են հետևյալ անձինք.—

ա) Պրոֆ. Ա. Ղարիբյանը՝ իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» խորագրով աշխատության մեջ 1937 թվականին։

բ) Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին՝ իր «Հայ ժողովրդի ծագման ճարցի շուրջը» վերնագրով հոդվածում, որ հրատարակվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրիս» 1945 թվականի № 6-ում։

գ) Պրոֆ. Գ. Ղափանցյանը՝ իր «Հայաստան՝ հայերի բնօրան» խորագրով ուսումնասիրության մեջ, որը լույս է տեսել ռուսերեն լեզվով 1947 թվականին։

դ) Պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը՝ իր «Միգրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման ճարցը» վերնագրով գրքույկում, որ հրատարակվել է 1947 թվականին։

ե) Պատմական գիտությունների թեկնածու Ս. Երեմյանը՝ իր «Հայերի ծագման ճարցի շուրջը» վերնագրով հոդվածում, որ լույս է տե-

սել ոուսերեն լեզվով «Պատմության հարցերը» ամսագրի 1952 թվականի № 7-ում։

գ) Եվ, վերջապես, մենք՝ մեր «Հայ ժողովրդի էթնիկական կազմավորումը» վերնագրով մի փոքրիկ ուսումնասիրության մեջ, որը դեռ չի հրատարակված։

Խոսելով հայ ժողովրդի ծագման հարցում մեր գիտնականների պաշտպանած տեսության մասին, նախ պետք է հայտնենք, որ մենք ազատ ենք այն նախապաշարումներից և կաշկանդումներից, որ ունեք դուք՝ արտասահմանյան գիտնականներդ։ Այստեղ ձեզ մոտ ընդունված է և քաղաքացիություն ունի ազնիվ և անազնիվ, ընդունակ և անընդունակ ժողովուրդների ռասայական տեսությունը։

Մենք, Հայրենիքի պատմաբաններս, շատ հեռու ենք որևէ ժողովրդի նախապատվություն տալու սկզբունքից. մեր կարծիքով, բոլոր ժողովուրդները, ինչպես ճիշտ նկատեց պրոֆ. Բյուզանդն իր ներածական խոսքում, ընդունակ են ստեղծագործելու. չկան աշխարհում ընդունակ և անընդունակ ժողովուրդներ։ Ժողովուրդների ստեղծագործական ունակությունները կապված են տնտեսական, սոցիալական և քաղաքական այն պայմանների հետ, որի մեջ նրանք աշխատում են։ Ուստի և մենք հարցի ուսումնասիրությանը մոտենում ենք առանց կողմնակալության, առանց որևէ նախապաշարման և միտումի։

Այնուհետև, հարցի ուսումնասիրությանը մենք չենք մոտենում միակողմանիորեն — մենք, օրինակ, չենք վերցնում լեզվական, պատմական, հնագիտական, ազգագրական և մարդաբանական տվյալներն առանձին-առանձին և նրանց վրա կառուցում մեր եզրակացությունները, այլ օգտագործում ենք և համադրում գիտության բոլոր տվյալները։ Ուստի և պատահական չէ, որ հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրությամբ մեզ մոտ համատեղ զբաղվում են տարբեր գիտությունների ներկայացուցիչները՝ և՛ պատմաբանը, և՛ լեզվաբանը, և՛ ազգագրագետը, և՛ հնաբանը, և՛ մարդաբանը։

Նկատի ունեցեք, որ բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի կազմավորման մասին մեր ունեցած տվյալները շատ կցկտուր են, շատ պատահական և դժվար են ենթարկվում գիտական ընդհանրացման։ Նկատի ունեցեք նաև, որ ոչ մի ժողովուրդ, այդ թվում և հայ ժողովուրդը, չի հիշում իր ծագումը, և ինքն ավելի հին է, քան իր մասին ստեղծված առասպելները։ Ուստի և մենք պիտի օգտագործենք մեզ մատչելի բոլոր տվյալները, որպեսզի կարողանանք հարցին ճիշտ լուծում տալ։

Մարդկային հասարակության նախնական շրջանի մասին ամենից վստահելի սկզբնաղբյուրները, համեմատաբար, հանդիսանում են հնագիտությունը և ազգագրությունը—նրանք են մեզ հնարավորություն տալիս շատ ու քիչ պարզաբանելու դարերի խորը հնություն կրող և մշուշով պատած մեր անցյալը, մեր ժողովրդի ծագումը։

Հենվելով ահա այդ գիտությունների տվյալների վրա, մենք ժողովուրդների առաջացումը միանգամայն այլ ձևով ենք բացատրում, քան ընդունված է ձեզ մոտ։ Ձեզ մոտ ժողովուրդների կազմավորումը, ինչպես ասացինք, ներկայացվում է հետևյալ ձևով. գոյություն ունի մի նախացեղ ժողովուրդ, որը կոտորակվում է առանձին մասերի, այդ մասերը՝ առանձին ենթամասերի, որոնք և առանձին-առանձին ժողովուրդներ են կազմում։ Մենք հակառակ կարծիքի ենք. մեր տեսակետով, ժողովուրդները կազմավորվում են ո՛չ թե կոտորակվելու, այլ միավորվելու ճանապարհով — առանձին մասեր տոհմերի և ցեղերի միավորումից է, որ կազմավորվում են ժողովուրդները և ոչ հակառակը։

Ապացուցված է, որ աշխարհի բոլոր ժողովուրդները, առանց բացառության, իրենց պատմության արշալույսին հանդես են գալիս ոչ թե մի միասնական ժողովրդի ձևով, այլ առանձին տոհմերով, ցեղերով և կամ ցեղային միություններով։ Այդ մասին փաստեր որքա՜ն ուզեք եառեւե է բերել։ Վերցրեք, օրինակ, հենց Ամերիկայի նախաբնիկները, որոնց առաջորությունը մանրամասն ուսումնասիրված է։ Ես նկատի ունեմ առանձնապես Լուիս Մորգանի հավաքած ազգագրական անգնահատելի նյութերը։ Առաջին անգամ եվրոպացիները երբ մտան Ամերիկա, ի՞նչ տեսան այնտեղ։— Ոչ թե միատարր ժողովուրդներ, այլ ցեղեր, տոհմեր՝ իրարից անջատ, յուրաքանչյուրն իր նեռոին սահմանափակ կյանքով և սովորություններով։ Կամ վերցնենք ներկայիս Աֆրիկայի հետամնաց ժողովուրդները։ Ի՞նչ ենք տեսնում։— Նրանցից ոմանք ներկա իմաստով դեռ ժողովրդի որակ չունեն, ապրում են իրարից անջատ, առանձին տոհմերով և ցեղերով։ Կամ վերցնենք փաստեր մեր պատմությունից։ Ուրարտական Ռուսա թագավորը (730—714 թ. թ. մ. թ. ա.) Սևանում թողած մի արձանագրության մեջ Սևանի լճի հարավային ավազանում թվարկում է 24 երկիր, որոնց «թագավորներին ինքը հնազանդեցրել է։ Միծաղելի կլիներ մտածել, թե Սևանից հարավ փոքրիկ տարածության վրա ապրելիս են եղել 24 ժողովուրդներ կամ գոյություն են ունեցել 24 պետություններ՝ իրենց թագավորներով։ Խոսքը,

անվիճելի, վերաբերում է տոհմա-ցեղային միությունների և նրանց տոհմապետների։ Կամ վերցնենք ասորական 10—13-րդ դարերի այն արձանագրությունները, որոնց մեջ Վանի շուրջը հիշվում է 23-ից մինչև 60 թագավորություն։ Այստեղ ևս, անվիճելի, խոսքը վերաբերում է տոհմա-ցեղային միություններին։

Պատմական այս փաստերը, ինչպես և հնագիտական բազմաթիվ տվյալներ, անվիճելի, ապացուցում են, որ աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, կազմավորվել են տոհմերի և ցեղերի միավորումից, և ոչ հակառակը։ Այս՝ շատ համոզեցուցիչ ձևով ապացուցել են պրոֆ. Սամվելյանը իր «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության և Ս. Սարգսյանը իր վերջերս լույս տեսած «Палеолит в Армении» աշխատության մեջ։

Ընդունելով հայ ժողովրդի մանր տոհմերից և ցեղերից առաջանալու այս տեսությունը, մենք այսուհետև խնդիր ենք դնում մեր առջև պարզելու՝ թե հայ ժողովրդի կազմում ի՞նչ ի՞նչ տոհմեր և ցեղեր են մտել։

Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների մասին մեր ունեցած ամենահնագույն տեղեկությունները վերաբերում են 3000—1500 թվականներին մ. թ. ա.։ Եգիպտոսի Տել-Ամրանի և Բողազ-քոյի հիերոգլիֆ արձանագրությունների մեջ Հայաստանի հարավ-արևմտյան մասում, դանդաղ կապակցությամբ, առաջին անգամ հիշվում են սուբարիները կամ խուրրիները և միտանիները։ Այս մասին շատ ուշագրավ է պրոֆ. Ա. Խաչատրյանի «Հայաստանի սեպագրական շրջանի էնեական պատմությունը» վերնագրով ուսումնասիրությունը, որը հիմնված է արձանագրական տվյալների վրա՝ շուրջ 3000—600 մ. թ. ա. (հրատարակված է Երևանում 1933 թվականին)։ Պրոֆ. Ա. Խաչատրյանի սկզբնաղբյուրներից հավաքած տեղեկություններից պարզ երևում է, որ մենք այստեղ գործ ունենք ո՛չ թե կազմակերպված էթնոսի, այլ ցեղատոհմային միությունների հետ. դրսի հարձակումներից պաշտպանվելու համար, մի շարք ցեղեր միավորվում են մի անկայուն դաշնակցության մեջ, հանդես են գալիս մի հավաքական անվան տակ և դատ շուտ կազմալուծվում և հեռանում պատմության ասպարեզից։ Այդ երևույթը, ընդհանրապես, հատուկ է պատմության արշալույսին հանդես եկող բոլոր ժողովուրդներին։

Հնամենի այդ ժամանակներում դեռ հնարավոր չէր հայ ժողովրդի կազմակերպումը, որովհետև ժողովուրդների կազմակերպման համար, համեմատաբար, զարգացման բարձր աստիճան էր հարկավոր։ Պարզված է, որ էթնոսի կազմավորումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ նախնադարյան տոհմատիրական հասարակությունը այնքան է զարգանում, որ սկսում է քայքայվել և իր տեղը զիջել նոր ծնվող դասակարգային հասարակությանը, այսինքն՝ այն ժամանակ, երբ առաջանում է պետությունը։

Մեր ձեռքի տակ եղած տվյալներից երևում է, որ Հայաստանի նախաբնիկները հավասարաչափ, համընթաց զարգացում չեն ունեցել— այն ժամանակ, երբ դաշտավայրում տոհմատիրական հասարակությունը այնքան է զարգացել, որ սկսել է քայքայվել, լեռնային մասերում մնացել է այն գրեթե անփոփոխ։ Եվ այդ է պատճառը, որ հայ ժողովրդի կազմավորման ընթացքը խիստ ձգձգվել է,— ձգձգվել է ավելի քան երկու և կես հազարամյակ։

Հայ ժողովրդի էթնիկ կազմավորման իրական պրոցեսը, մեր գիտնականների կարծիքով, սկսել է 15-րդ դարից մ. թ. ա. և կապված է եղել Հայասայի ցեղային միությունների հետ։ Այդ առանձնապես հաջող ապացուցել է պրոֆ. Գ. Ղափանցյանն իր «Հայասան՝ հայերի բնօրան» խորագրով աշխատության մեջ։

Պատմական և լեզվական մի շարք փաստերի հիման վրա այժմ ապացուցված կարելի է համարել, որ հայ ժողովրդի էթնիկական կորիզը կազմող Հայասայի ցեղախմբերը պատմության բեմում հանդես են եկել 15-րդ դարում մ. թ. ա.։ Նրանց բնակավայրն է հանդիսացել Վանից հյուսիս-արևելք գտնվող հայկական միջնաշխարհը— մոտավորապես Եփրատ, Ճորոխ և Արաքս գետերի միջև ընկած շրջանները— արևմուտքից՝ Կարա-Հիսար— Զիմարան, արևելքից՝ մինչև Էրզրումի ճահիճները, հյուսիսից՝ Պարխարյան լեռները, իսկ հարավում՝ Կարա-սուն։ Հայասայի ցեղախմբերը ստեղծել են քաղաքական իրենց հետաքրքիր պատմությունը, ունեցել են բանակ և գործոն փոխհարաբերությունների մեջ գտնվել հիթիթների հետ։ Երկար ժամանակ նրանք պայքարել են հիթիթների դեմ և պահպանել իրենց անկախությունը։ Հիթիթական աղբյուրները, սոսնձ հայտնաբերվեցին Բողազ-քոյում և վերծանվեցին չեխ գիտնական Հրոզնու ջանքերով, բավականաչափ հարուստ նյութ են տալիս մեզ այդ մասին։

Պրոֆ. Գ. Ղափանցյանը պաշտպանում է այն կարծիքը, որ «Հայասա» անունը ժողովրդի անունը չէ, այլ՝ երկրի, բնակության վայրի։ Հայասա բառի սա վերջածանցը համապատասխանում է հետագայի ստան վերջածանցին՝ երկիր, բնակության վայր իմաստով, ինչպես Պարսկաստան նշանակում է պարսիկների երկիր, Մարաստան՝ մարերի

երկիր, Հնդկաստան՝ հնդիկների երկիր, այնպես էլ Հայաստա՝ հայերի երկիր, հայ ցեղերի բնակավայր։ Այդ նույն լեզվական օրենքով՝ Ջազդիսա նշանակում է զազզերի երկիր, Նինասա՝ նիների երկիր, Դատտասա՝ դատտերի երկիր և այլն։

Պրոֆ. Գ. Ղափանցյանը քննության առնելով Հայաստանի մեջ հասած բառապաշարը, որոշ նմանություններ է գտնում հայկականի հետ։ Այսպես՝

Հայաստերեն	Հայերեն
hatt	հատանել
hassika	հասկ
hsbatis	հպատակ
han	հանել
spend	սպանդ
spard	սպրդել
isha	իշխել
tuk(k)	տոկալ և այլն։

Նա նմանություն է տեսնում նաև հիթիթական, հայասական և հին հայկական ատվածների պանթեոնների միջև։

Նա ապացուցում է, որ Հայաստանի լեռում՝ հնդեվրոպական սիստեմի լեզու է հանդիսացել և հնդեվրոպական ժողովուրդները Փոքր Ասիայում գտնվելիս են եղել ավելի վաղ, քան ընդունված է նրանց բերել դրսից։

Հնդեվրոպական սիստեմի լեզվով խոսող հայասդի ցեղախմբի լեռում, ինչպես պարոել են հին արևելյան լեզուներով դրաոող մեր լեզվաբանները, նման է եղել հիթիթական լեզվին։ Նրանք նման են եղել այնքան, որ ուշ շրջանում ուրարտական աղբյուրները հայասդիներին չեն տարբերել հիթիթներից և անվանել են «խաատինա», այսինքն՝ հիթիթներ։

Հայասդիները հիթիթներին նման են եղել և իրենց արտաքինով այն աստիճան, որ հիթիթների գանգերը ուսումնասիրող մարդաբաններն հիթիթական տիպատոր համարել են «armenoïd» (հայկական)։ Ռուս գիտնական Վերխովի մանրամասն ուսումնասիրելով հիթիթական գանգերը, նույնիսկ հակաճառում է ամերիկացիներին, որոնք ուզում են, թե հիթիթական տիպը նախահայկական է, նա գտնում է, որ հիթիթների տիպը ո՛չ թե նախահայկական է, այլ ուղղակի հայկական է։ Այդ նմանությունը հիմք է տվել նույնիսկ եվրոպացի գիտնականներից Ենսենին՝ հայ ժողովրդի ծագումը կապել հիթիթների հետ, ինչ անուն ստացավ։ Իսկ անունով և անհայտ տոհմեր անել հիթիթանան արձանագրությունները կարդալու հայտնեն։

Հայասայի ցեղախմբերի արևելյան հարևանները են հանդիսացել մուշական և տարալական ցեղախմբերը՝ վրացական ժողովրդի նախացեղերը, որոնք սերտ շփման մեջ են գտնվել հայասդի ցեղախմբերի հետ։

Հայագետներից ոմանց կարծիքով, Հայասայի ցեղախմբերի էթնոգենիկ այս պրոցեսը շարունակել է մինչև Նաիրյան և ուրարտական ցեղախմբերի հանդես գալը՝ 13—12-րդ դարեր մ. թ. ա., այնուհետև դանդաղել է։ Մենք հակառակ կարծիք ունենք— մենք գտնում ենք, որ հայ ժողովրդի կազմավորման ընթացքում ամե՛նից մեծ, ամենից գործուն դերը պատկանել է հենց Ուրարտուին։ Սկսած 9-րդ դարից մ. թ. ա., երբ Ուրարտուն քաղաքական միավորիդացիա (կազմավորում) ապրեց, երբ ստեղծեց իր պետությունը, հայ ժողովրդի կազմավորման ընթացքը ո՛չ թե դանդաղեց, այլ ավելի արագացավ։ Ուրարտական թագավորները, ինչպես հայտնի է. միավորեցին Հայկական լեռնաշխարհը։ Ուրարտուի պետության սահմանները Արգիշտիի (810—778 թ. թ.), Մենուայի (788—750 թ. թ.), Սարդուրի (750—730 թ. թ.) և Ռուսայի (730—714 թ. թ.) օրոք այնքան ընդարձակվեցին, որ ուրարտական պետությունն իր սահմանների մեջ գրեթե ընդգրկեց Հայկական լեռնաշխարհը, նա քանդեց միջտոհմային այն բոլոր պատվարները, մեկուսիչ միջնորմները, որ գոյություն ունեին իրենից առաջ, իր սահմաններում գտնվող ահագին թվով ցեղախմբեր մի տեղից մյուսը տեղափոխեց, խթանեց լեռնային հեռավոր վայրերի դանդաղաշարժ տոհմերի զարգացմանը՝ դուրս հանելով նրանց նախնադարյան հետամնացությունից և մեկուսացած վիճակից և, վերջապես, ընդարձակածավալ պետության կազմավորումով, նա հնարավորություն ստեղծեց ցեղերի և տոհմերի տնտեսական, մշակութային և լեզվական սերտ համագործակցության համար։ Իսկ այս ամենը բարենպաստ հող ստեղծեց հայ ժողովրդի վերջնական կազմավորման համար։

Ուրարտական շրջանում հայասդի ցեղախմբերը դուրս են գալիս իրենց բնակության նախկին շրջանակներից և տարածվում հայկական ողջ միջնաշխարհում։ Դոկտ. Երեմյանը գտնում է, որ հայկական մի ցեղախումբ գտնվելիս է եղել Վանից հարավ Խոշաբ գետի մոտիկ և այդ ցեղախմբի անունով է, որ այդ ձորը նույնն է Հայոց ձոր։ Նա աստուածաբանություն չի համարում, որ հայկական հին առասպելը հայ ժողովրդի ծագման մասին կապված է հենց Հայոց ձորի հետ։

***

Հայ ժողովրդի էթնոսի մեջ գործուն դեր է ունեցել նաև արմեն կամ արմին կամ ուրմին ցեղատոհմային դաշնակցությունը, որը հին արևելյան աղբյուրներում հիշվում է Տիգրիսի վերին հոսանքում, Եփրատից դեպի արևելք։

Արմենների մասին մեր ունեցած տեղեկությունը շատ ավելի հին է, քան հնդեվրոպական տեսաբանների ենթադրած փրյուգիական արմենների գաղթը դեպի Փոքր Ասիա։ Պրոֆ. Հրոզնու վերծանած արձանագրության մեջ, որը վերաբերում է 19-րդ դարին մ. թ. ա., հիշվում է արդեն Արմենիան։ Այդ արձանագրության մեջ, հիթիթների Անտաշ թագավորը խոսելով իր հաղթանակների մասին, նշում է, որ «ես հաղթեցի Մանդակունուն՝ Արմենիայի թագավորին և իրեն գերի բերեցի իմ երկիրը...»։

Արմենները հետագայում հիշվում են ասորական արձանագրությունների մեջ a-ri-me ձևով։

Համեմատաբար ավելի շատ են հիշված արմենները ուրարտական արձանագրությունների մեջ ur-me կամ ar-me ձևով։ Այսպես, ուրարտական Մենուա թագավորը (810—778 թ. թ.) իր Մուշում թողած մի արձանագրության մեջ հայտարարում է. «...Արշավեցի դեպքեմ Ուրմե երկրի, նվաճեցի Ուրմե երկիրը, կանգնեցի այս արձանագրությունը»։ Մենուայի որդին, Արգիշտի թագավորը (778—750 թ. թ.) Վանի քարաժայռի վրա փորագրել տված իր արձանագրության մեջ հայտնում է. «Արշավեցի Ուրմե երկրի վրա, նվաճեցի Ուրմե երկիրը [և] բանդեցի այն...»։ Արգիշտիի որդու, Սարդուր թագավորի (750—730 թ. թ.) Վանի արձանագրության մեջ կարդում ենք. «Հայդ աստվածը արշավանքի դուրս եկավ. մեծ ողորմածությամբ նվաճեց Մուրինիին, Ոելիկախի երկրի թագավորին. նա նվաճեց Ցինիլաբիին, Լուեխուի որդուն, Տուլեխու քաղաքի և երկրի թագավորին. նա նվաճեց Աշուր-Նիտարիին, Ադադ-Նիտարիի որդուն, Ասորեստան երկրի թագավորին. նա նվաճեց Արմե երկիրը, երկրի թագավորական քաղաք Նիխերիանին։ Նրանք խոնարհվեցին Սարդուրի, Արգիշտիի որդու առաջ»։

Ուսումնասիրողներից ոմանց կարծիքով, Արմեն տեղանվան ընթերցումը սխալ է, ճիշտը պիտի լինի Արմենի կամ Արմինի։

Ենթադրվում է նաև, որ եթե Արմեն երկրի մայրաքաղաք Նիխերիանի անվան վերջից դեն նետվի ի վերջածանցը, կարելի է այն նույնացնել հայկական Նիրկերտ քաղաքի անվան հետ, որը հին հայկական քաղաքական կյանքում գործուն դեր է ունեցել։

Թե՛ մեր, թե՛ արտասահմանի արևելագետները վերջին տարիներս լույս ընծայած իրենց ուսումնասիրությունների մեջ ընդունում են, որ ուրարտական արձանագրությունների հիշած «armen»ները, իրոք, հետագայում էթնիկ որակ տվող արմեններն են, միայն վիճում են նրանց ծագման հարցում։ Պրոֆ. Գ. Ղափանցյանի կարծիքով, արմենները խուրիտական ծագում ունեն։ Նրա հետ համակարծիք է Մելիքիշվիլին իր «Наири—Урарту» աշխատության մեջ, որ լույս է տեսել անցյալ տարի։ Իսկ Ֆ. Կոնիգը «Հանդէս ամսօրեայ»-ում նորերս հրատարակած հոդվածում վճռական այն տեսակետն է պաշտպանում, որ արմենները՝ փրյուգիացիներ էին, որպես ռազմական ցեղեր նրանք ապրում էին Մուշից հարավ-արևմուտք. ուրարտական թագավորները իրենց ռազմական ուժը հզորացնելու նպատակով այդ ցեղերի մեծ մասը վերաբնակեցրեցին երկրի կենտրոնական մասերում, իսկ 7-րդ դարում, արմենական այդ ցեղերը, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, միացան տապալեցին Ուրարտուն և հանդես եկան «Արմինիա» անունով։ Տվյալ վեճում, մեր կարծիքով, արդարությունը պրոֆ. Գ. Ղափանցյանի և պրոֆ. Մելիքիշվիլիի կողմն է։

Ուշադրության արժանի է, որ Ուրարտուի պատմության վերջին շրջանում «Արմինիա» անունը հոմանիշ է հանդիսացել «Ուրարտուին»։ Դարեհի Բեհիստունում 520 թվականին թողած երեքլեզվյան արձանագրության հին պարսկական և էլամական տեքստերում հիշված Արմինա անունը բաբելական թարգմանության մեջ փոխարինված է Ուրաշտու (Ուրարտու) անունով, որից պարզ երևում է, որ այդ ժամանակ Արմինա և Ուրարտու տեղանունները կամ ցեղանունները նույնացվում էին— Արմինա ասելով հասկանում էին Ուրարտու, Ուրարտու ասելով՝ Արմինա։

Հայ ժողովրդի կազմավորումը ավելի գործուն հունի մեջ մտավ 7—5-րդ դարերում մ. թ. ա.։ 7-րդ դարը նոր դարագլուխ է նշանավորում մարդկության պատմության մեջ։ Սեմականությունը, որ դարերից ի վեր պատմության ասպարեզում առաջնակարգ տեղ էր ապահովել իր համար, իր տեղը զիջում է, երբ Առաջավոր Ասիա են թափանցում հյուսիսից արշավող խմբերը և սկսում են էթնիկ նոր իմպավորումներ։

Մեզ հայտնի է հյուսիսից Առաջավոր Արևելք իջնող դաղթաշարժի երեք ալիք՝ կիմմերականը 8-րդ դարում մ. թ. ա., սկյութականը 7-րդ դարում մ. թ. ա. և սարմատականը 4-րդ դարում մ. թ. ա.։ Եկեղ այս հոսանքները ցնցեցին Առաջավոր Արևելքը և մեծապես խթանեցին էթնիկ կազմավորումների արագացմանը։

Այս ամենը, բնական է, չէր կարող իր ազդեցությունը չթողնել կազմավորված, բայց դեռ այնքան էլ չկարծրացած հայկական էթնոսի վրա։ Ընդհանրապես, Հայաստանը հանդիսացել է հարավից, արևմուտքից և հյուսիսից եկող տարբեր էթնիկ հոսանքների անցուդարձին, որոնք այս կամ այն չափով իրենց

ազդեցությունն են թողել կազմակերպված էթնոսի վրա։

Հայ ժողովրդի կազմավորումը, հիմնականում, տեղի ունեցավ 7—4-րդ դարերում։ Հայ ժողովրդի մեջ ձուլվեցին ո՛չ միայն հայասական և արմենական ցեղախմբերը, այլև բազմաթիվ ցեղային այլ միություններ, դաշնակցություններ, որոնցից մի մասի անունները պահել են գրավոր հուշարձանները, իսկ շատերինը մոռացության տվել։

Այդ տեսակետից բացառիկ արժեք ունեն Քսենոֆոնի «Կիրոպեդիա» աշխատության մեջ հիշած այն ցեղերը և ցեղախմբային միությունները, որոնց նա տեսել է արմենների հարևանության մեջ։ Նա հիշում է խալդայներին, մարդերին, խալյուբներին, տաոխներին, սկյութացիներին, տիբարիներին, մաինալիկներին, հեսպերիտներին, փասիաներին, ուդիներին, պակտիներին և տասնյակ այլ ցեղերի և ցեղատոհմային միություններ, որոնց մեծ մասը հետագայում ձուլվեց հայ ժողովրդի մեջ։

Նկատի ունենք, որ ժողովուրդների կազմավորման ընթացքում բոլոր ցեղախմբերը չէ, որ գործուն դեր են ունենում, այլ նրանցից մեկն է միայն վերցնում կազմակերպչական նախաձեռնությունը — քաղաքականապես ավելի ուժեղ ցեղատոհմը, որը և իր անունն է տալիս կազմավորված էթնոսին ամբողջությամբ առած։ Հայ ժողովրդի կազմավորման առաջին շրջանում միջնաշխարհի՝ Հայասայի ցեղախմբերն են վերցրել կազմակերպչական նախաձեռնությունը, նրանք են գլուխ կանգնել առաջին խմբավորմանը և իրենց անունը տվել նրան։ Իսկ հետագա շրջանում, այդ նախաձեռնությունը անցել է արմեն կամ արմին կոչվող խմբին։ Եվ քանի որ այդ ցեղը բնակվելիս է եղել Հայաստանի հարավային մասում՝ գրականություն ունեցող և համեմատաբար, զարգացած մշակույթի տեր ժողովուրդների՝ բաբելացիների, պարթևների և եգիպտացիների հարևանության մեջ, ուստի և Հայասայի բնակիչներին ճանաչում էին իրենց հարևան արմեն ցեղախմբի անունով և անվանում արմենեներ։ Ինչպես որ հույները ծանոթ լինելով հյուսիսում իրենց սահմանակից սկյութացիներին, ենթադրել են, որ հյուսիսում գտնվող բոլոր ժողովուրդները սկյութացիներ են, այնպես էլ մեր հարավային հարևանների համար, մեր երկրի բնակիչները դիտվել են որպես արմենեներ։ Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու ուսումնասիրությունից պարզվում է, որ 7-րդ դարում գոյություն ունեցող ցեղային միավորումներից մեկն էր Արմենիա—Շուպրիան, որի գլուխ էր կանգնած հայկական ծագումով մի ցեղային դինաստիա (հարստություն)։ Այդ միավորման էտնարխն (նահապետ) է հիշվում Պարույր անունով մեկը՝ հայկական առաջին թագավորը, որը 612 թվին, վերև հիշված քաղաքական միավորման գլուխ կանգնած և դաշնակցած մեդիական Կիակսարի հետ գրոհով վերցրին և կործանեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, իսկ հետո՝ նաև ասորական պետությունը։

Ի դեպ, հիթիթական պետության անկումից հետո Հայասայի ցեղախմբերի ճակատագրի մասին ոչինչ չգիտենք, միայն նրանց ապրած վայրում հիշվում են ասոխմիա կամ ասոխմիս ցեղախմբերը, որոնք, անշուշտ, նույն ցեղախմբերն են, բայց այլ անվան տակ։ Մենք գիտենք, որ Հայասայի ցեղախմբերի անմիջական հարևանները վրացական ցեղախմբերն էին, որոնք ճանաչում էին «ասոխմիխներին կամ ասոխմիսներին և այդ անունով անվանում ամբողջ հայ ժողովրդին։ Ի դեպ, ասոխմիս ցեղախմբերը ասորական արձանագրությունների մեջ ասուխմիա կամ ազուխմիա ձևով հիշվում են ուրարտական շրջանից առաջ։

Այսպիսով, բուն Հայաստանում, մենք մեր անունը պահել և հիշում ենք մեր բնակչության հիմնական կորիզը հանդիսացող հայասցի ցեղատոհմերի անունով, իսկ մեր հարևանները իրենց սահմանակից, բայց մեր ժողովրդի մեջ ձուլված արմեն կամ սոմեխ ցեղախմբի անունով։

Հայկական էթնոսը իր որակական կարծրացումը ստացավ հելլենիստական դարաշրջանում, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, երբ փշրվեցին միջցեղային և միջէթնիկ արգելակող բոլոր պատվարները և հնարավորություն ստեղծվեց անարգել զարգացման համար։ 3-րդ դարում արդեն Արմավիրը հիշվում է որպես «Հայաստանի գեղեցիկ քաղաք»։

Քսենոֆոնը արմենեներին համախմբված է տեսել քաղաքական երկու օջախների շուրջ՝ արևմտյան, որի սատրապն է եղել Տիրիբազը, արևելյան, որի սատրապն է եղել Օրոնտը, այսինքն՝ Երվանդը։

Արտաշիսյան հարստության շրջանում միավորվում են Հայաստանի անջատ մասերը և ստեղծվում է մի միասնական ժողովուրդ՝ բոլորից ընդունված մի լեզվով։ Ստրաբոնն արդեն վկայում է, որ Արտաշես թագավորի կողմից հայկական բաժանված նահանգների միավորումից հետո հայերը «բոլորը միալեզու եղան»։

Հարց կարող է առաջանալ, թե հայ ժողովուրդը կազմավորումից հետո լեզվական, կուլտուրական կամ այլ փոխազդեցության մեջ գտնվե՞լ է իր հարևանների հետ, թե ոչ։ Անպայման գտնվել է։ Պիտի նկատի ունենալ, որ հայ ժողովուրդը կազմավորվել է Առաջավոր Արևելքում ժողովուրդների շարժուն խառնարանի մեջ, նա չինական պարսպով

անչատված չի եղել իր հարևաններից, այլ ձևավորվել ու զարգացել է իր հարևանների հետ ունեցած գործուն փոխազդեցության պայմաններում։ Հայ ժողովուրդն իր հարևաններից ընդունել է որոշ ազդեցություններ, ինչպես և ինքը ազդել է հարևանների վրա։ Հակագիտական է, սխալ է ռասամնասիրության ա՛յն մեթոդը, երբ առանձին բառերի նմանության հիման վրա փորձում են ընդհանրացնող եզրակացություններ անել։ Պրոֆ. Գ. Ղափանցյանը իրավացի անդրադառնալով այդ հարցին, նկատել է, որ առանձին անունների, բառերի նմանությունները գիտության համար արժեք չունեն, եթե նրանք չեն կապվում այս կամ այն ժողովրդի կազմավորման ընթացքի հետ։ Այսպես, եթե մենք մոտենանք բառերի ձևական նմանություններով, ապա պիտի ասենք, որ հայերն ապրել են նաև Իտալիայում, որովհետև այնտեղ հնում հիշվում է Armenite անունով գետ և Arimínium անունով քաղաք, հայերը գտնվել են Աֆրիկայում, որովհետև այնտեղ հիշվում է Armanaca անունով քաղաքը,— իսկ այս ամենը բացահայտ անհեթեթություն է։

Մտե՞լ են արդյոք հայ ժողովրդի մեջ դրրսից եկող ցեղախմբեր եւ։ Անպայման մտել են։ Կասկած լինել չի կարող, որ կիմմերական, սկյութական և սարմատական ցեղերը եկվորներ էին և նրանց որոշ մասը ձուլվեց հայ ժողովրդի մեջ։ Էթնոգենիկ պրոցեսը բարդ և երկարատև պրոցես է,— որոշ ցեղեր կարող են ներս գալ, որոշ ցեղեր կարող են ներսից դուրս գնալ։ Բայց երբ մենք խոսում ենք հայ ժողովրդի կազմավորման մասին ամբողջությամբ առած, անվիճելի է այն, որ հայ ժողովուրդը, հիմնականում, կազմավորվել է որպես տեղաբնակ ժողովուրդ, որ նրա կորիզը կազմող երկու ցեղախմբերը՝ հայասցիները և արմենները, եղել են տեղացի և հիշվում են շատ ավելի առաջ, քան փրյուգիական արմենների ենթադրական գաղթը։

Հայ ժողովրդին համարելով տեղաբնակ ցեղախմբերից առաջացած ժողովուրդ, մեր գիտնականներն արդարացի քննադատության են ենթարկում միգրացիոն ռատալական տեսությունը։

«...Հայերը ո՛չ մի տեղից չեն եկել և ո՛չ մի հզոր ռասայի ճյուղ չեն կազմում,— գրում է պրոֆ. Ա. Ղարիբյանը «Ներածություն հայոց լեզվի» աշխատության մեջ,— այլ տեղական տոհմական կեցությամբ ապրող հասարակությունների փոխադարձ ներձուլման, սոցիալ-քաղաքական և տնտեսական ներթափանցման և արտադրական ուժերի զարգացման հետևանքով առաջ եկած նոր էթնիկական գոյացում են...» (էջ 66)։

«Հայ ժողովրդի առաջացման միգրացիոն տեսության հիմնական արատն է,— գրում է գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը «Միգրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման հարցը» աշխատության մեջ,— որ նա հայ ժողովրդի կազմավորումը կտրում է պատմական հողից, այն չի դիտում որպես ժողովուրդների կազմավորման համապատմական օրինաչափություններով առաջ ընթացող մի տեսական պատմական պրոցես, կտրելով պատմական միջավայրից, անտեսում է այդ պատմական պրոցեսի զարգացումը բացահայտող ապդեն բավականաչափ առատ փաստական նյութը» (էջ 45)։

Մերժելով հայ ժողովրդին դրսից բերելու միգրացիոն արատավոր «տեսությունը» և հայ ժողովրդին համարելով հիմնականում տեղաբնակ ցեղային միություններից կազմակերպված ժողովուրդ, մենք հանգում ենք այն կարևոր եզրակացության, որ հայ ժողովուրդը օրինական ժառանգն է հնագույն այն մշակույթի, որ ստեղծել են իր երկրի նախաբնիկները։ Հայ էթնոսի մեջ ձուլվող տոհմերը և ցեղերը, հասկանալի է, որ իրենց հետ տարել են նաև իրենց մշակույթը, որից և սկիզբ են առնում հայ մշակույթի ստեղծագործական ակունքները։ Ահա թե ինչո՛ւ հայ ժողովրդի պատմության դասընթացը, մեր կարծիքով, պիտի սկսել ո՛չ թե հնդեվրոպական արմենների ենթադրական ներդաղթից, ինչպես վարվում են ձեզ մոտ դասագրքեր հրատարակող որոշ հեղինակներ, այլ մեր երկրի նախաբնիկների պատմությունից։

Ամփոփելով մեր դասախոսությունը հայ ժողովրդի կազմավորման մասին, մեր եզրակացությունը հետևյալն է.

ա) Հայ ժողովուրդը կազմավորվել է, հիմնականում, տեղաբնակ տոհմա-ցեղային միություններից։

բ) Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում գործուն դեր են ունեցել հայասցի ցեղախմբերը՝ Հայաստանի միջնաշխարհում և արմեն կամ արմին ցեղախմբերը՝ հայկական բարձրավանդակի հարավում, որոնք և իրենց անունները տվել են նոր կազմակերպված էթնոսին։

գ) Հայ ժողովրդի լեզուն ազգակից է հնդեվրոպական լեզվախմբին, բայց հայ ժողովրդի մեջ ձուլվել են նաև որոշ թվով սումերական-խուրրիտական տարրեր։

դ) Հայ ժողովուրդը ո՛չ թե դրսից է ներդաղթել, այլ հիմնականում, տեղաբնակ ժողովուրդ է։

ե) Հայ ժողովուրդն օրինական ժառանգն է այն պատմության և մշակույթին, որն ստեղծել են նրա նախաբնիկները։

***

Ուզում եմ պատասխանել մի հարցի և վերջացնել. ի՞նչն է բնորոշ մեր ժողովրդին որպես էթնիկական որակ, ինչո՞վ, օրինակ, բացատրել, որ հայ ժողովրդի հետ իրենց պատմությունը ստեղծած հարևան մի շարք ուրիշ ժողովուրդներ հեռացել են պատմության բեմից, իսկ մենք կարողացել ենք այսքան երկար գոյատևել։

Մեր ժողովրդի ամենաբնորոշ հատկությունը, սկսած իր կազմավորման օրից, մեր կարծիքով, հանդիսացել է ազատասիրությունը— ազատ, անկախ ապրելու ձգտումը։ Մեր պատմության առաջին էջը սկսում է ազատության պայքարով։ Ըստ մեր ժողովրդական ավանդության, Հայկ նահապետը կռվում է բռնակալ Բելի դեմ և ազատություն ձեռք բերում։ Արմենիայի ամենահին հիշատակությունը պահող Բեհիստունի արձանագրությունից երևում է, որ արմենները, հանուն իրենց ազատության և անկախության, կռվում են Դարեհի կազմակերպված բանակների դեմ և պաշտպանում իրենց Հայրենիքը։ Ուշագրավ է առանձնապես Քսենոֆոնի «Կիրոպեդիա»-ում հիշած այն տեղեկությունը, որ Արմենիայի ձերբակալված թագավորը երբ հարցաքննության է ենթարկվում Կյուրոսի կողմից՝ թե ինչո՞ւ է նա խախտել Միդիայի հետ կնքած պայմանագիրը և ապստամբվել, Արմենիայի թագավորը համարձակ պատասխանում է. «Որովհետև ուզում էի ինքս ազատ ապրել և ազատություն թողնել իմ որդիներին» (Քսենոֆոն, Կիրոպեդիա, III, 2, 17—24)։

Նման օրինակներ որքա՞ն ուզեք կարելի է բերել պատմությունից։ Մեր ժողովրդի ազատասիրությունը, մեր համոզմամբ, մեր գոյատևման գլխավոր ազդակներից մեկն է հանդիսացել։

Մեր ժողովրդի մյուս բնորոշ հատկություններից մեկն է եղել խաղաղասիրությունը, խաղաղ համակեցությունն իր հարևանների հետ։ Մեր ժողովուրդը աչք չի ունեցել ուրիշի հողին և աշխատել է ապրել իր հարևանների հետ հաշտ և խաղաղ կյանքով։ Մեր ժողովրդի բնավորության հումանիստական այդ գիծը շատ ցայտուն արտահայտված է մեր ժողովրդական էպոս «Սասունցի Դավիթ»-ում։ Սասունցի Դավիթն սպանելով Հայաստան խուժած Մսրա Մելիքին, չի կոտորում նրա զինվորներին, այլ դիմում է նրանց խրատական խոսքերով՝ թե դուք աշխատավոր մարդիկ եք, երեխաների տեր, գնացեք ձեր հալալ վար ու ցանքի հետևից և մի՛ վրդովեք ուրիշի խաղաղ կյանքը։

Եվ, վերջապես, հայ ժողովուրդը աշխատասեր ժողովուրդ է, համառ ժողովուրդ է։ Այդ մասին փաստեր բերելու կարիք չկա։ Այդպիսի փաստեր դուք կարող եք վերցնել ձեր անձնական կյանքից։— Հիշեցեք համաշխարհային առաջին պատերազմի դաղթի ծանր, մղձավանջային տարիները, հիշեցեք՝ թե ինչ վիճակում գաղթեցիք արարատյան այս հյուրասեր աշխարհը։— Դուք գաղթեցիք կոտորված, մերկ, սոված, ջարդված սրտով... իսկ այսօր կարողացել եք ո՛չ միայն ոտքի կանգնել, այլև շատ ու քիչ բարեկեցիկ կյանք ստեղծել ձեզ համար։

Եվ, վերջապես, իմ սիրելի ազգակիցնե՛ր, իմ հարազատնե՛ր. մեր ժողովրդի խաղաղասիրության և աշխատասիրության լավագույն ապացույցը տվել և տալիս է մեր սիրելի, մեր նվիրական Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, ուր հրաշագործ մեր նոր սերունդը, ազատ ամեն տեսակ կաշկանդումներից, նորանոր հաջողություններ է արձանագրում իր տարեգրության ոսկյա մատյանում։

Թույլ տվեք սրանով վերջացնել այսօրվա դասախոսությունս։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 1-ին (Կարմիր կիրակէ) Ս. Հռիփսիմեի վանքում տեղի ունեցավ հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր նորընծա հոգեշնորհ Տ. Մուշեղ արեղա Պետիկյանը։ Երևանից և այլ շրջաններից սուրբ պատարագին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ։

***

Մայիսի 3-ին ի Տեր հանգչավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան արժանապատիվ Տ. Նիկոլ ավագ քահանա Թավեյանը։ Մայիսի 6-ին կատարվեց հանգուցյալի լվացման կարգը և ապա մարմինը հուղարկավորության հանդիսավոր թափորով տեղափոխվեց Ս. Գայանեի վանքը, որտեղ մայիսի 7-ին, շաբաթ օրը, բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ կատարվեց վերջին օծման արարողությունը, հոգեհանգիստը և թաղումը, հանդիսադրությամբ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի սգակիր միաբանության։

Թողանդակալից դամբանական խոսեց գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը՝ վեր հանելով հանգուցյալ Տ. Նիկոլի վարքն ու բարեմասնությունները։

Թաղմանը ներկա էին նաև հանգուցյալի բազմաթիվ ծանոթներն ու բարեկամները, որոնք եկել էին իրենց վերջին հարգանքն ու սերը մատուցելու նրան։

Հանգուցյալի մարմինը ամփոփվեց Մայր Աթոռի միաբանական գերեզմանոցում, Ս. Գայանեի վանքի հյուսիսային կողմում։

***

Մայիսի 16-ից, երկուշաբթի օրվանից սկսվեցին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տարեվերջի ստուգումներն ու քննությունները։ Արդյունքները ցույց տվեցին, որ ստուգումներին և քննություններին ուսանողները պատրաստվել են ժրաջանությամբ։

Քննություններին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը, Սահակ սրբազանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, միաբան հայրեր, Ճեմարանի վերատեսուչը և դասախոսներ։

***

Մայիսի 19-ին, Քրիստոսի հրաշափառ և սուրբ Համբարձման տոնի օրը, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Ս. Հռիփսիմեի տաճարում։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։ «Հայր մերի» ժամանակ օրվա տոնի նշանակության մասին քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Քարոզիչ սրբազան հայրը ժողովրդին պարզ ու հասկանալի լեզվով բացատրեց Քրիստոսի Համբարձման կրոնա-բարոյական վեհ իմաստը։ Միաժամանակ որոշանալ անդրադարձավ Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու (1441 թ.) պատմական խոշոր նշանակություն ունեցող դեպքին և ցանկություն հայտնեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի միջև ստեղծված հարաբերությունները ավելի սերտանան և Հայ Եկեղեցու միասնականությունն է՛լ ավելի ամրապնդվի։

***

Քրիստոսի Համբարձման սուրբ տոնի կապակցությամբ Ս. Էջմիածնից մի քանի միաբաններ մեկնեցին Արալի լեռան ստորոտում գտնվող Ծաղկավանքը, այնտեղ ևս կատարելու օրվա հանդիսությունները, ի մխիթարություն հայ հավատացյալների։

Մաղկավանք ուխտի էին գնացել բազմաթիվ ուխտավորներ Հայաստանի համարյա բոլոր շրջաններից։

Ժողովուրդը այդ օրը, Մրայի լեռան հովասուն լանջերում, իր նվիրական ավանդույթների համաձայն, տոնեց Համբարձման ժողովրդական մեծ տոնը, զանազան գյուլումաներով, «վիճակի» վերաբերյալ խաղերով ու երգերով։

***

Մայիսի 21-ին Հոգևոր ճեմարանի ուսանողները կատարեցին հետաքրքիր արշավ դեպի Թալինի, Թալիշի, Ագարակի, Աշտարակի, Մուղնիի, Կարբիի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Օշականի պատմական վայրերն ու հուշարձանները։

Ուսանողների հետ էին Հոգևոր ճեմարանի վերատեսուչը, դասախոսներն ու վերակացուները։

***

Մայիսի 28-ին Երևանից Ս. Էջմիածին ժամանեց Ճապոնիայի գիտնականների դելեգացիան, որին գլխավորում էր Ճապոնիայի Գիտական խորհրդի նախագահ, Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Կայա Սեյձին։

Դելեգացիայի կազմի մեջ էին Ճապոնիայի Գիտությունների ակադեմիայի անդամներ, համալսարանի պրոֆեսորներ, գիտության տարբեր բնագավառների ականավոր ներկայացուցիչներ։

Հյուրերին ուղեկցում էին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատակիցները։

Հյուրերին դիմավորեց Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, միաբանության անդամների հետ, որը ողջույնի ճառից հետո մանրամասն բացատրություններ տվեց Տաճարի շինության և պատմական մեծ նշանակության մասին։

Տաճարի վերանորոգությունը և մանրանկարները դիտելու ժամանակ, հյուրերը ծանոթացան Տաճարի մանրանկարչական աշխատանքների ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ, հայ մանրանկարչության անվանի վարպետ Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովայի և նրա աշխատակիցների հետ։ Հուզիչ էր այն րոպեն, երբ դելեգացիայի ղեկավարը խոսք ուղղելով Դուռնովային, սրտագին շնորհակալություն հայտնեց մեծ արվեստագիտուհուն՝ նրա շնորհալի աշխատանքների համար։

Հյուրերը դիտեցին նաև թանգարանը և Մայր Տաճարի գավթում կաթողիկոսների շիրիմները, որոնց մասին հակիրճ բացատրություններ տրվեցին։

Թանգարանում հարգանքի խոսքերով ելույթ ունեցավ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը և բարեմաղթեց, որ բարի դրացիական հարաբերություններն ավելի խորանան։ Սրբազանի ճառին պատասխանեց դելեգացիայի ղեկավար պրոֆ. Կայա Սեյձին՝ շնորհակալություն հայտնելով գտած սրտագին և ջերմ ընդունելության համար։

Հյուրերը Վեհարանում ներկայացան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսին։ Վեհարանում պրոֆ. Կայա Սեյձին և Վահան սրբազանը փոխանակեցին ճառեր։

Պատգամավորության անդամները գոհ հեռացան Ս. Էջմիածնից, տանելով իրենց հետ անմոռանալի հիշողություններ։

***

Մայիսի 29-ին, Հոգեգալստյան (Պենտեկոստեի) տոնի կապակցությամբ, Ս. Հռիփսիմեի տաճարում մատուցվեց հանդիսավոր պատարագ։ Պատարագիչն էր բարեկրոն Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Օրվա տոնի կապակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հռիփսիմեի վանքն էին ժամանել բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՐՎԵՍՏԳԵՏ ԼԻԴԻԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ ԴՈՒՌՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 6-ի երեկոյան Երևանի Արվեստի աշխատողների տան դահլիճը լեփ-լեցուն էր մայրաքաղաքի առաջավոր մարդկանցով՝ գրողներով, գիտնականներով, արվեստի աշխատողներով և ուսանողներով։

Այսօր այստեղ նշվում էր հին հայկական արվեստի հետազոտության ականավոր մասնագետ, հայկական մանրանկարչությանն ու որմնազարդությանը լավատեղյակ, ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովայի ծննդյան 70-ամյակը։

Ժողովի նախագահությանը կազմում տեղ են գրավել Սովետական Հայաստանի անվանի մարդիկ՝ բանաստեղծ-ակադեմիկոս Ավետիք Իսահակյանը, գեղանկարչության ակադեմիկոս Մարտիրոս Սարյանը, ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանը, Նուկուսի մինիստրության Արվեստի գործերի գլխավոր վարչության պետ Հակոբ Խանջյանը, նկարիչ Խաչատուր Ենայանը և ուրիշները։

Ներկաները հոտնկայս երկար ու բուռն ծափահարում են ալեհեր այդ կնոջը, որն այնքա՜ն շատ բան է արել հայ ժողովրդի նախնիքների մեծ ժառանգությունը ժրաջան կերպով հետազոտելու, ուսումնասիրելու և հրապարակելու համար։

Իր մանրամասն զեկուցման մեջ ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Դրամբյանը ծանոթացնում է մեր ժողովրդի հին արվեստի ուսումնասիրությանն իր կյանքը նվիրած այդ ռուս կնոջ բեղմնավոր կյանքին ու գործունեությանը։

Լ. Ա. Դուռնովան մեր կերպարվեստի մեջ մուտք է գործել իբրև հին ռուսական արվեստի կազմակերպված հետազոտող ու լավատեղյակ մի անձ։ Մոսկվայի հռչակավոր Թանգարանը՝ Տրետյակովյան պատկերասրահը զարդարված է Վլադիմիր, Պսկով, Կիև, Չեռնիգով քաղաքների և Ռուսաստանի այլ վայրերի եկեղեցիներից, տաճարներից ու պալատներից նրա հանած հին ռուսական արժեքավորագույն պատճենահանումներով։ Արվեստագետի իր բարառիկ վարպետությամբ, համբերատարությամբ ու բարեխղճությամբ նա լայն մասսաների սեփականությունն է դարձրել ռուսական ճարտարապետության կարկառուն կոթողների որմերը զարդարած հին ռուսական նկարիչների հրաշակերտությունները։

26 տարի առաջ, 1929 թվականին, Լ. Ա. Դուռնովան առաջին անգամ Հայաստան եկավ հին հայկական արվեստն ուսումնասիրելու։

— Լսելով Երևանի Մատենադարանում պահպանվող հին ձեռագրերի անգերազանցելի նմուշների և գեղանկարչական գործերի մասին, ես վճռեցի մեկնել Սովետական Հայաստան՝ ծանոթանալու նրանց հետ. բայց Մատենադարանում իմ տեսած գանձերն ինձ այնքան հրապուրեցին, որ երբ ինձ հրավիրեցին Երևանում մշտական աշխատանքի՝ ես հաճույքով հանձն առա։ Այո՛, այստեղ ինձ հրապուրեց հին հայկական գեղանկարչության վարպետների հոյակապ երկերի

անգերազանցելիորեն բարձր որակը,— հպարտությամբ ասում է արվեստագիտուհին։

Այսպիսով, Լ. Ա. Դուռնովան տեղափոխվելով Երևան հիմնական աշխատանքի, իր կյանքն ընդմիշտ կապեց Սովետական Հայաստանի հետ։

1937 թվականին Լ. Ա. Դուռնովան մենմենակ մեկնում է Ախթալա և պատճենահանում տաճարի անզուգական որմազարդարդությունների նմուշները։ Հետագա տարիներին նա մասնակցում է դեպի Աղատան, Արուճ, Հաղբատ, Ախթալա կազմակերպված գիտարշավներին և իր դաստիարակած հայ երիտասարդ նկարիչների հետ միասին պատճենահանում գիտական ու գեղարվեստական մեծ նշանակություն ունեցող սքանչելի որմազարդությունները։

— Ժողովրդի պահպանած հին ձեռագրերն ու գրքերը խնամքով պահպանվում են Մատենադարանում. իսկ ինչպե՞ս կարելի է չպահպանել որմազարդագրությունները, որոնք, այնուամենայնիվ, ենթարկված են փչացման։ Ժամանակը նրանց չի խնայի։ Այժմ արդեն մեր Պետական պատկերասրահում երկա՞ր ժամանակ և շա՞տ ու շա՞տ սերունդների համար կմնան այդ որմանկարների ու որմազարդագրությունների պատճենները,— ասում է արվեստագիտուհին։

Չի կարելի առանց հուզմունքի ու մեծ զարմանքի դիտել վիթխարի որմազարդագրություններից Լ. Ա. Դուռնովայի կատարած պատճենահանումները. նույնիսկ փոքրագույն նրբագեղությունները, ճեղքերը արված են այնպիսի վարպետությամբ, որ կարծես այդ տաճարներում կանգնած ակընդետ նայում ես այդ չքնաղ գործերը։

Հոբելյար Լ. Ա. Դուռնովան բռնաստեղծ Ա. Իսահակյանի և նկարիչ Մ. Սարյանի հետ

Այդ ստեղծագործությունները պերճախոսորեն վկայում են այն մասին, որ մեր ժողովուրդը մինչև հելլենիստական շրջանը ունեցել է զարգացող կերպարվեստ։ Բայց չէ՞ որ գոյություն ուներ և ունի այն կարծիքը, թե հայերը հայկական մանրանկարչությանը զուգընթաց այլ արվեստ չեն ունեցել։ Անցյալ դարից եկող ու մինչև մեր օրերը հասած ժխտողական այդ կարծիքը, որ լրջորեն քննադատության ենթարկվեց Անիի պեղումներից հետո, վերջնականապես սնանկացավ Լ. Ա. Դուռնովայի և նրա հետևողների գիտական ուսումնասիրություններով։

Արվեստագետ ու գեղագետ Լ. Ա. Դուռնովան հին հայկական մանրանկարչություններից փայլուն վարպետությամբ կատարել է պատճենահանությունների չափազանց շնորհակալ ու չափազանց գնահատելի աշխատանք։ Այդ շնորհակալ աշխատանքը պսակվեց հին հայկական մանրանկարչության մի հոյակապ ալբոմով, որն այժմ հանդիսանում է ամեն մի արվեստագետի սեղանի զարդը։ Այդ ալբոմում զետեղված են մեր հին վարպետների ստեղծագործությունների բազմակողմանի նմուշները, որոնց մասին տրված են տեքստերի անհրաժեշտ ծանոթագրություններ։

Ոչ նվազ արժեք է ներկայացնում Դուռնովայի կազմած նաև «Հայկական զարդարված կտորեղենի» ալբոմը։

Չնայած իր պատկառելի տարիքին, Լ. Ա. Դուռնովան ներկայումս զբաղված է այնպիսի գործունեությամբ, որը շնորհակալությամբ կհիշեն բոլոր նրանք, որոնց համար թանկ է ընդհանրապես մեր ժողովրդի գեղարվեստական ժառանգությունը, որոնց համար թանկ է ճարտարապետության այնպիսի մի կոթող ու այնպիսի մի սրբավայր, ինչպիսին իրենից ներկայացնում է Էջմիածնի Տաճարը։ Լ. Ա. Դուռնովան դիտավորում է ու ղեկավարում Էջմիածնի կաթողիկեի զարմանահրաշ որմանկարների վերանորոգման ու վերականգնման աշխատանքները։

Կանցնի ևս մի փոքր ժամանակ, և մեր Էջմիածնի Տաճարի պատերը կճաճանչափայլեն այն լիակատար հոյակերտությամբ, որպիսի հոյակերտությամբ, ծիածանի բոլոր գույներով, շողշողացել են նրանք անցյալի նշանավոր հայ գեղանկարիչ Նաղաշ Հովնաթանի վրձինը վերջին անգամ քսելուց հետո։ Այդ հսկայական մեղվաշան ու չափազանց շնորհակալ աշխատանքից ազատ ժամանակ, Լ. Ա. Դուռնովան աշխատում է մի մեծ մենագրության՝ 13-րդ դարի հայ նշանավոր նկարիչ Թորոս Ռոսլինի կյանքին ու գործունեությանը նվիրված հետազոտության վրա։

Մեծ են այդ համեստ, սակավախոս ռուս կնոջ վաստակները հայ ժողովրդի արվեստի՝ մեր ժողովրդի առջև։ Լ. Ա. Դուռնովան ներկայացնում է հայ ժողովրդի, նրա հիանալի արվեստի նկատմամբ եղբայրական ռուս մեծ ժողովրդի տածած հոգատարության ու սիրո կենդանի մարմնավորումը։

Գլխավորելով Երևանի Պետական պատկերասրահի հին հայկական արվեստի բաժինը, Լ. Ա. Դուռնովան ի հայտ է բերել հայկական արվեստի խորհուն հետազոտողի, լավատեղյակի, գնահատողի հիանալի ցուցանիշներ։

Իր մեջ զուգակցելով հետազոտողի ու գեղանկարչի փայլուն ձիրքեր, Դուռնովան իր աշակերտների օգնությամբ ստեղծել է ռուսական, վրացական ու հայկական արվեստների կարկառուն գործերի բազմաթիվ փաստական պատճեններ, որոնք այժմ զարդարում են Սովետական Հայաստանի մեր շատ թանգարաններ և ծառայում են իբրև արժեքավորագույն նյութ՝ այդ ժողովուրդների անցյալի ժառանգությունն ուսումնասիրելու համար։

Ազգային մեր գանձարանը, մեր հին ձեռագրերի, հեռավոր անցյալի մեր մատենագիրների ու նկարիչների շանասեր, ստեղծագործող ձեռքերով գրված միջնադարյան հոգևոր, գիտական գրքերի պետական պահեստարանը (Մատենադարանը) այցելած տասնյակ հազարավոր մարդիկ խանդավառ գրառումներ են թողել։ Դրանց մեջ չափազանց ուշագրավ է ֆրանսիացի հայտնի գրող Հանրի Բարբյուսի գրառումը, ուր նա ասել է. «Ես երջանիկ եմ, Միտքս հարստացավ այս դրադարանի սքանչելի ձեռագրերին ծանոթանալուց հետո»։

Լիդիա Դուռնովայի անխոնջ, անձնվեր գործունեության, մեղվաջան հետազոտությունների շնորհիվ շա՞տ հայ սերունդներ է՛լ ավելի երջանիկ կզգան իրենց։ Նրանց մտքերն է՛լ ավելի կհարստանան, որովհետև այս սքանչելի ռուս կինը չափազանց մեծ պարզությամբ մտցրեց անցյալի մեր հին վարպետների, մատենագիրների, նկարիչների ստեղծագործությունների մեջ, այդ հրաշալիքներն է՛լ ավելի մատչելի դարձրեց լայն զանգվածների համար։

Լ. Ա. Դուռնովայի ծննդյան 70-ամյակի հանդիսավոր մեծարանքին հրապարակված ողջույնի հարյուրավոր հեռագրերը պերճախոս կերպով վկայում են նրա հիանալի գործունեության մասին և նրան բնութագրում են որպես մի իսկական դիտնական՝ ազնիվ ու մեծ ռուս ժողովրդի ազնիվ դավակ։

«Թանկագին, մեծարգո Լիդիա Ալեքսանդրովնա՛»,— Լենինգրադից գրում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, հայտնի գիտնական Հովսեփ Օրբելին Դուռնովային,— երբ մենք դեռ երիտասարդ էինք և ուսանում էինք Լենինգրադում, ես սովորեցի բարձր գնահատել Ձեր հիանալի ծառայությունները հին ռուսական արվեստի գործում։ Այժմ ես երջանիկ եմ, որ կարող եմ Ձեզ շնորհավորել Ձեր փառապանծ հոբելյանի օրը՝ սովորած լինելով է՛լ ավելի բարձր գնահատել Ձեր բացառիկորեն մեծ ծառայությունները հին հայկական արվեստի ուսումնասիրման գործում, որը կրկնակիորեն բարձր ու հարազատ է ինձ՝ թե՛ մասնագիտությանս և թե՛ նույն ազգի դավակը լինե-

լուս տեսակետից։ Փա՜ռք ու պատի՜վ Ձեզ՝ սովետական արվեստագիտության և արվեստի օգտին կատարած Ձեր գործերի համար։ Ձեզ հավատարիմ՝ Հովսեփ Օրբելի»։

Երեկոյին, բուռն օվացիայի ներքո, հրապարակվեցին ողջույնի հեռագրերը Սովետական Միության տարբեր ծայրերից, քաղաքներից, գիտական հիմնարկներից, թանգարաններից, պատկերասրահներից, գիտնականներից, նկարիչներից, արվեստագետներից՝ փառաբանված հոբելյարի նկատմամբ տածվող հարգանքի ու սիրո շատ դրսևորումներով։

Ներկաները մեծ գոհունակությամբ լսեցին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը՝ հայկական արվեստի ուսումնասիրման ու զարգացման բնագավառում մատուցած ծառայություններին համար Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովային ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի պատվոգրով պարգևատրելու մասին։

Երեկոյի վերջում, համառոտ պատասխան խոսքով, ելույթ ունեցավ Լ. Ա. Դուռնովան և սրտագին շնորհակալություն հայտնեց Սովետական կառավարությանը՝ արվեստի աշխատողների նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար։

Հոբելյանական երեկոն եզրափակվեց մեծ համերգով, որին մասնակցեցին մայրաքաղաքի արտիստական լավագույն ուժերը։



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Բառացիպ խանդավառությամբ անցավ Մայիսի 1-ի տոնակատարությունը Սովետական Հայաստանի գյուղերում և քաղաքներում։ Աշխատավորների միջազգային համերաշխության այդ ավանդական օրը վերածվեց իսկական համաժողովրդական տոնի, ցնծության։

Ամենուրեք քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան հանդեսներ, հավաքույթներ, ժողովներ, տոնախրմբություններ։ Մայիսի 1-ին Երևանում, Լենինի հրապարակում տեղի ունեցավ Երևանի կայազորի զորքերի զորահանդես։ Զորահանդեսից հետո սկսվեց մայրաքաղաքի աշխատավորների տոնական շքերթը, որը տևեց մի քանի ժամ։ Լենինի հրապարակով անցան մոտ 200.000 աշխատավորներ։ Աշխատավորների տոնական շքերթներ տեղի ունեցան նաև Լենինականում և Կիրովականում։

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ.— Մայիսի 9-ին լրացավ գերմանական ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտման 10 տարին։ Հայ ժողովուրդը, սովետական ողջ ժողովուրդների հետ միասին, Հաղթանակի օրը նշեց մեծ ուրախությամբ և օրինական հպարտությամբ։ Այդ օրը տեղի ունեցավ Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝ մասնակցությամբ հասարակական կազմակերպությունների և Սովետական Բանակի ներկայացուցիչների։ Երևանյան մայրաքաղաքում կայացավ հրավառություն և տրվեց սալյուտ հրետանային 30 համազարկով։

Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի զավակները, իրենց փառապանծ նախնիների օրինակով, հերոսաբար մարտնչեցին բոլոր ռազմաճակատներում, արիաբար պաշտպանելով սովետական հողը օտարի թշնամուց, չխնայելով իրենց կյանքը Հայրենիքի ազատության և անկախության համար։ Իրենց փայլուն սխրագործություններով հայ մարտիկները փառքով պսակեցին հարազատ ժողովրդի անունը։

Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը տվեց ավելի քան 50 զորավար (գեներալ), որոնց թվում այնպիսի անվանի մարդկանց, ինչպիսիք են Սովետական Միության մարշալ Ի. Բաղրամյանը, նավատորմի ադմիրալ Ի. Իսակովը։ 106 հայ զինվորականներ մարտական սխրագործությունների համար արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչման և մոտ 67.000 հոգի պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։

Պատերազմի տարիներին, բուն Երկրի ժողովրդի հետ միասին, ընդհանուր թշնամու դեմ ամենագործուն պայքար էր մղում Սփյուռքի հայության սուվար մասը։ Արտասահմանի հայության միջոցներով ստեղծվեցին «Սասունցի Դավիթ» և զորավար Բաղրամյանի անվան տանկային շարասյուները, որոնց անցան փառահեղ մարտական ուղի՝ սկսած Կովկասից մինչև Բեռլին։

Սփյուռքի հայության այս հայրենասիրական խանդավառության կազմակերպման գործում մեծ դեր խաղաց այն ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգնուիր Տեղապահ, քաջաշուք հայրենասեր Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ. Կաթողիկոսը։

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.—Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ստեղծված է Տերմինաբանական կոմիտե։ Տեղի ունեցավ կոմիտեի նիստը, որտեղ քննարկվեց և հաստատվեց կոմիտեի կանոնադրությունը, ինչպես նաև մշտապես գործող հանձնաժողովների կազմը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ.—Երևանի երաժշտական կյանքում կարևոր իրադարձություն հանդիսացան Պետական երգեցիկ խմբի համերգները, որոնք տեղի ունեցան մայիսի կեսերին։ Խմբի գեղարվեստական ղեկավար, դիրիժոր, արվեստի վաստակավոր գործիչ Արամ Տեր-Հովհաննիսյանը մեծ աշխատանք է թափել երաժշտական այդ մեծ կոլեկտիվի կատարողական վարպետությունը բարձրացնելու համար։

Նամբը բացառիկ հաջողությամբ, միանգամայն ուրուն հմայքով ու երանգով է կատարում անմահ Կոմիտասի և Կարա-Մուրզայի մշակած հայ ժողովրդական երգերը։ Այդ երգերի մեծ մասը, ինչպես օրինակ՝ «Լաչագյազ», «Լեռներ լե լեռ», «Կուժն առա», «Լա լոր», «Գնացեք տեսեք», «Ջինջ ու դինջ» և այլն, շնորհիվ տաղանդավոր խմբավարի երաժշտական ինքնուրույն մեկնաբանման հնչում են նոր, առանձին գրավչությամբ։

Խմբի ծրագրի մեջ մտցված է նաև գերմանական կոմպոզիտոր Բախի համաշխարհային երգեցիկ արվեստի խոշորագույն ստեղծագործություններից մեկը՝ «Սի մինոր մեսսան», որը Երևանում առաջին անգամն է կատարվում։

Երգեցիկ խմբի համերգներն անցնում են մեծ հաջողությամբ։

ՆՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ.— Վերջին ժամանակներս Հայաստանի Պետական մատենադարանը հարստացավ մի շարք նոր ձեռագրերով, որոնք ձեռք են բերվել Երևանում, Դոնի Ռոստովում, Կրասնոդարում և Արմավիրում։ Նոր ձեռագրերի թվում են 11-րդ դարի մատաղաթյա ձեռագրերի մի պատառիկ, միջնադարյան աշխարհիկ տաղերի մի ժողովածու, 15-րդ դարի ավետարան, որը հետաքրքիր է իր մանրանկարչությամբ և արտագրողների ու այլ անձանց հիշատակարաններով։

Ձեռք է բերված նաև 14—15-րդ դարերի հայ խոշորագույն գիտնական Գրիգոր Տաթևացու աշխատությունների ժողովածու, ինչպես նաև 18-րդ դարի մի բժշկարան։

Մատենադարանը ստացել է նաև մի քանի հարյուր հատ զանազան փաստաթղթեր, որոնց մեջ կան հետաքրքիր տեղեկություններ Միքայել Նալբանդյանի դեմ Հնդկաստան կատարած ճանապարհորդության մասին։

Ձեռագրեր են ստացվում նաև տրամատրամանից։ Վերջերս Լոնդոնից ստացվեցին երկու տարբական և մեկ հատ պարբական ձեռագրեր։ Հիշյալ ձեռագրերը Ֆեոդալ մատենադարանին էին հանձնվել Կոմիտասի անվան երաժշտական կվարտետի անդամների միջոցով, երբ վերջիններս Լոնդոն էին մեկնել համերգներ տալու։

ՉԻՆ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Մայիսի 14-ին Երևան ժամանեց Չին-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը, որը Սովետական Միությունն է եկել Արտաստանի հետ կուլտուրական կապի համամիութենական ընկերության հրավերով։ Պատվիրակությանը գլխավորում էր Պեկինի քաղաքապետի տեղակալ Վան Կան-լունը։

Երևանի օդանավակայանում չին մեծ ժողովրդի ներկայացուցիչներին դիմավորեցին Ատտաստանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության նախագահ Բ. Աստվածատրյանը, Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Ստեփանյանը, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչները։

Չինացի հյուրերը Երևանում մնացին մի քանի օր։ Այդ ժամանակամիջոցում նրանք ծանոթացան քաղաքի շինարարությանը, եղան մի շարք կուլտուր-լուսավորական հաստատություններում, այցելեցին գործարաններ։

ՋԵՆՈՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ.—Մայիսի 8-ին Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Չեխոսլովակիայի ազատագրման 10-րդ տարեդարձին։ Երեկոն կազմակերպել էին Արտաստանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը, Հայաստանի պրոֆիությունների խորհուրդը, Կուլտուրայի մինիստրությունը և Գիտությունների ակադեմիան։

Չեխոսլովակյան ռեսպուբլիկայի նվաճումների մասին զեկուցումով հանդես եկավ լուսավորության մինիստր Ե. Սիմոնյանը։ Թատրոնի նեմասրահում փակցված էր ցուցահանդես՝ նվիրված չեխոսլովակյան ժողովրդի ձեռք բերած հաղթություններին։

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.—Մայիսի 26-ին Մոսկվայից Երևան ժամանեց Ճապոնիայի գիտնականների պատվիրակությունը, որը Սովետական Միությունն էր եկել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության հրավերով։ Պատվիրակությանը գլխավորում էր Ճապոնիայի Գիտական խորհրդի նախագահ, Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Կայա Սեյչին։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էին Ճապոնիայի Գիտությունների ակադեմիայի անդամներ, համալսարանների պրոֆեսորներ, գիտության տարբեր բնագավառների ականավոր ներկայացուցիչներ։

Հյուրերին ցույց տրվեց շրջանությունը։ Նրանք Երևանում մնացին 3 օր, որի ընթացքում ծանոթացան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և գիտա-լուսավորական հաստատությունների աշխատանքներին, հանդիպում ունեցան հայ գիտնականների հետ, դիտեցին Երևանի տեսարժան վայրերը։

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ.—Տարեցտարի ընդարձակվում են Երևանի շրջակայքի անտառները։ Կանաչ օազին այժմ գրեթե հասել է մարզ քաղաքը։ Այս գարնան նոր տնկումներ կատարվեցին Հրազդանի ալափնյա դռներում, որոնք դեռ լրիվ անտառապատված չեն։ Ընդամենը տնկվեցին մոտ 100 հեկտար նոր անտառներ։ Այժմ Երևանի շրջակայքի անտառների ընդհանուր տարածությունը հասնում է շուրջ 1.600 հեկտարի։ Այդ անտառները զարդարվում են նոր կառուցված շրջաբար առուների միջոցով։

ԵՐԵՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 20 ՏԱՐԻՆ.—Լրացավ Երևանի Ռուսական մանկավարժական ինստիտուտի գոյության 20 տարին։ Այս ինստիտուտը մայրաքաղաքի բավական բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է, որտեղ սովորում են հայ, ռուս և այլ ազգի երիտասարդներ։ Այն պատրաստում է ռուսական լեզվի և գրականության, պատմության, մաթեմատիկայի և ֆիզիկայի դասատուներ ռեսպուբլիկայի հանրակրթական դպրոցների համար։

Իր գոյության 20 տարվա ընթացքում ինստիտուտը տվել է 2.334 մանկավարժ։ Նրանց մեծ մասն աշխատում է Սովետական Հայաստանի, իսկ որոշ մասը՝ Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների դպրոցներում։ Ինստիտուտն ունի որակյալ դասախոսական կադրեր ավանդվող բոլոր առարկաների համար։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԵՑ ԷՇՐԵՖԻԵԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՎՈ ՕԹՈՒՄԻՆ

Մաղկաղարդի առավոտ, Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս, առաջնորդությամբ Բեյրութի Էշրեֆիե թաղամասի թաղականության անդամներուն, ուղղվեցավ դեպի Ս. Հակոբ նորաշեն եկեղեցին, նախագահելու համար անոր օծման արարողություններուն։

Հայկական ոճով կառուցված գեղեցիկ այս եկեղեցին, որ իրրև փառքի արձան մը կկանգնի ողբացյալ Հակոբ Ապաճյանի հիշատակին, անհրաժեշտություն մըն էր Բեյրութի զարգացած այդ թաղամասին մեջ, ուր մեր համայնքը կգրավե ուշագրավ դիրք մը քրիստոնյա ա՛յլ համայնքներու կարգին։

Ուրախ բազմություն մը փութացած էր՝ ներկա գտնվելու համար եպիսկոպոսական հանդիսավոր պատարագին, մատուցված Լիբանանի թեմի առաջնորդ գեղաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանի կողմե և տեսնելու եկեղեցվո մեծահանդես օծումը։

Ուրախությունը մասնավոր կերպով կճառագայթեր թաղեցիներու դեմքին վրա, որոնք պիտի կարենային իրենց պաշտամունքը կատարել պատշաճ ու ներշնչիչ աղոթատեղիի մը կամարներուն ներքև։

Հավարտ սուրբ պատարագին ու օծման կարգին, բոլոր հավատացյալներու սրտին ու շրթներուն վրա կար երախտագիտության մրմունջ մը՝ ողբացյալ բարերարին հանդեպ. «Աստված լուսավորե հոգին»։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո. Անթիլիաս, 1955 թ., ապրիլ)

ԼԱՆՋԱԽԱՁԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՃԵՄՅԱՆԻ

Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյան գնահատելով Կաթողիկոսարանիս դիվանապետ՝ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանի անխոնջ գործունեությունը, լանջախաչ կրելու իրավունք շնորհեց անոր։

Ապրիլի 2-ի առտվան ժամերգությենեն ետք Տեղապահ սրբազանը իր մոտ կանչեց հայր սուրբը և հայտնեց, թե «մշակը արժանի է իր վարձքին», և թե Ս. Աթոռը դիվանապետը իր բարվոք ու աթոռանվեր ծառայություններուն համար եղած է մին այն մշակներեն, որոնց նկատմամբ արժանի է, որ գործադրվի Ավետարանի վարձատրությունը։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., ապրիլ)

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ ԷՎԸՆԱՏՈՆԻ ՄԵՋ

Հովիվին և հոգաբարձության հրավերով, առաջնորդ Տ. Մամբրե սրբազանը քաղաքս ժամանեց փետրվար 26-ին, որուն դիմավորելու դացած էին օդակայան տեր հայրը և հոգաբարձության ատենապետը և փոխատենապետը՝ պարոն Վոլտբը Վարդան և Գառնիկ Մինասյան։ Հաջորդ օրը կիրակի, սրբազան հայրը սուրբ պատարագ մատուցց

և քարոզեց Ս. Հակոբ Հայաստանյայց Եկեղեցվո մեջ, ուր փութացած էին Չիկագոյեն և Էվրնստոնեն կոկիկ բազմութիւն մը։

Հավարտ սուրբ պատարագին, սրբազանը առաջնորդվեցավ Էվրնստոնի Ֆերբստ Գանկրիկեյշընը եկեղեցվո սրահը՝ նախագահելու համար եկեղեցվո ծոման տասնամյա տարեդարձի ճաշկերույթ-հանդիսին։ Ներկա էին ավելի քան 200 հոգիներ և Տ. Արթուն քահանա Սմբատյան և երեցկինը իրրև պատվո հյուրեր Ռեյսինեն։

Խոսեցան սեղանապետ Վ. Վարդանի հրավերով, տիկին Սուրեն Սարգիսյան, եկեղեցասերի ատենապետուհին, Այրին Վարդան, Օննիկ Նորհատ, տեր հայրը և սրբազան հայրը։ Հանդեսին փայլ տվավ օրիորդ Լիլիրն Զուգասրզյան, անվանի երգիչը։

Հանդեսի ընթացքին, ցույց տրվեցավ պատկերը եկեղեցվո կառուցվելիք նոր սրահին։

Երբ առաջնորդ հոր աղոթքով հանդեսը փակվեցավ, ամենքն ալ ուրախ էին հաջողած ըլլալու գոհունակությամբ։

Սրբազան հայրը երեքշաբթի, մարտ 1-ին գնաց Սաութ Միլվոքի, ուր իր երկու օրերը անցուց Սաութ Միլվոքիի ու Ուեստ Այիսի համայնքներուն հետ ունենալով հոգաբարձական ժողովներ և հրապարակային հավաքույթներ և կարգադրելով տեղական և հովվական այլ հարցեր։ Իսկ հինգշաբթի օր Ռեյսին անցնելով հոն ալ հոգաբարձության հետ ժողով ունենալով կարգադրություններ ըրավ։

Ուրբաթ, մարտ 4-ին վերադարձավ Չիկագու Շաբաթ երեկո առաջնորդ հայրը հանդիպում մը ունեցավ առաջնորդարանի ծոմանդակ միության Չիկագոյի և շրջակայքի մասնաճյուղին հետ ընթրիքի մը, որ տրված էր ի պատիվ իրեն։ Էվրնստոնի հովիվը ի պաշտոնե ներկա էր։ Առաջնորդ հոր հրահանգով վերահաստատվեցավ հին վարչությունը մեկ տարվան համար։ Իսկ կիրակի օր, մարտ 6-ին, սուրբ պատարագ մատույց և քարոզեց Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ։ Կեսօրե հետ, ան նախագահեց Վարդանանց տոնի հանդիսաորության, տրված Չիկագոյի Ս. Գրիգոր, Էվրնստոնի Ս. Հակոբ և Հայ Ավետարանական եկեղեցիներու կողմեն։ Առաջնորդ հայրը իր փակման խոսքին մեջ անդրադառնալով Հայաստանի մշակութային վերելքին, ակնարկեսի վկայություններ տվավ և ցույց տվավ, թե ինչպես Վարդանանց ոգին ծաղկումը կար մեր երկրին մեջ։ Ժողովուրդը իանդավառությամբ ոգևորվեցավ սրբազան հոր խոսքերեն։

Երկուշաբթի օր, մարտ 7-ին, սրբազան հայրը ընկերակցությամբ Տ. Վարդանի, այցելեց Վոքիկոնի համայնքը։ Ներկա եղավ հավաքույթին Վոքիկոնի հայոց սեփականությունը եղող սրահին մեջ, ուր ևս խոսեցավ և քաջալերեց այդ փոքրիկ համայնքը, որ այդ օր կայրեր պարտամուրհակը գնված շենքին և ոգևորեց դիրենք նոր եկեղեցի մը կառուցանելու։

Մարտ 8-ի կեսօրե հետ, սրբազան հայրը մեկնեցավ Ֆլորիդա։ Օդակայան գացած էին իր հետ ողջերթի համար Էվրնստոնի Տ. Վարդան հայրը, Ռեյսինի Տ. Արթուն քահանան և Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո հոգաբարձության ատենապետ՝ պարոն Խաչիկ Ճերանյան։

Թեև սրբազան հայրը եկած էր Էվրնստոնի Հայաստանյայց Եկեղեցվո հրավերով, բայց ան իր մեկ օրը հատկացուց շրջակա հայ համայնքներուն, որոնք իրենց պետին ներկայությամբ նորոգվեցան մեծապես և քաջալերվեցան հայտնապես։

(ՆՅՈՒ-ՅՈՐՔ. «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ առաջնորդարանի հայոց Ամերիկայի, 1955 թ., մայիս)

ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ԲՐԱԶԻԼԱՀԱՅ ԹԵՄ.— Փետրվար 7 թվակիր նամակով, Հայրապետական պատվիրակի Բրազիլահայ թեմի փոխանորդ՝ արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյան կհաղորդե թե, հունվար 28-ին, թեմը ընտրած է իր Կեդրոնական վարչական խորհուրդը, որ, փետրվար 4-ին, իր անդրանիկ նիստը գումարած և դիվանը կազմելով, հղած էր Պատվիրակ սրբազան հոր՝ առ ի վավերացում։

Պատվիրակ սրբազան հայրը, նկատի ունենալով Բրազիլահայ թեմի կանոնագրին 22-րդ հոդվածը,— որուն համաձայն, Կեդրոնական վարչական խորհուրդի 7 անդամներեն երկուքը եկեղեցական պետք է ըլլան, մինչդեռ ղրկված ցանկին մեջ ոչ մեկ եկեղեցական կար,— հանձնարարեց Բրազիլահայ թեմի իր փոխանորդին՝ մատնանշված կետը սրբագրել և ապա նորընտիր Կեդրոնական վարչության ցանկը ներկայացնել առ ի վավերացում։

Արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյան փետրվար 21 թվակիր բացատրականով մը եկավ լուսաբանել Պատվի-

ռակ սրբազան հայրը, թե եկեղեցականները ի պաշտոնե արդեն կանոնադրական վարչության կազմին, թեմի կանոնագրի 7-րդ հոդվածի տրամադրության համաձայն, և թե, վարչական անդամներու թիվը 7-են 5-ի իջեցնելու համար զանց առնված է քահանա հայրերու անվան հիշատակումը։ Սրբազան հայրը բավարար նկատելով բացատրագիրը, վավերացուց Բրազիլահայ թեմի նորընտիր կեդրոնական վարչության խորհուրդը,— ըստ կանոնագրի,— հետևյալ կարգով. արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյան՝ նախագահ, Տ. Աստվածատուր քահանա Գասպարյան՝ եկեղեցական անդամ, տիար Անդրեաս Ճաֆերյան՝ առաջին ատենապետ, տիար Բետրո Նազարյան՝ երկրորդ ատենապետ, տիար Գարեգին Թյուֆենքճյան՝ առաջին ատենադպիր, տիար Աբրահամ Դավթյան՝ երկրորդ ատենադպիր, տիար Ռուբեն Քյուրքճյան՝ առաջին գանձապահ, տիար Միհրան Գոյաճյան՝ երկրորդ գանձապահ, տիար Երվանդ Գալեմքյարյան՝ խորհրդական։

Հաստատելով նորընտիր կեդրոնական վարչական խորհուրդը, Գատվիրակ սրբազան հայրը կոչնեց բոլոր անդամները, մաղթելով անոնց իմաստություն, որպեսզի հեռատեսությամբ վարեն Բրազիլահայ մեր թեմի կրոնական, կրթական և ազգային գործերը, հոգատար մեր սիրելի ժողովուրդին և նոր սերունդի հայեցի դաստիարակության, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո և ի փառս Աստուծոյ։

ԳՈՐԳՈՐԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.— Գորգորայի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Երվանդ քահանա Դարբինյան, հանուն Գորգորայի հայ գաղութին, նորին Սրբազնության կհղեր ներկա շրջանի համար ընտրված վարչական կազմի անվանացանկը՝ առ ի վավերացում։

Մարտ 17 թվակիր հաստատագրով, Գատվիրակ սրբազան հայրը վավերացուց Գորգորայի Հայ գաղութային միության նորընտիր վարչության կազմը, հետևյալ կարգով. արժանապատիվ Տ. Երվանդ քահանա Դարբինյան՝ նախագահ, տիար Թորոս Օրնեքյան՝ ատենապետ, տիար Նազարեթ Էվխանյան՝ փոխ ատենապետ, տիար Ասատուր Ապրազյան՝ ատենադպիր, տիար Սուրեն Թորգոմյան՝ փոխ ատենադպիր, տիար Ավետիս Մյուրեքյան՝ գանձապահ, տիար Կարապետ Ազատյան՝ խորհրդական, տիար Միհրան Քյորողլյան՝ խորհրդական։

Գատվիրակ սրբազան հայրը կոչնեց նորընտիր վարչության բոլոր անդամները, մաղթելով, որ համերաշխ սիրով ու եռանդով աշխատին Գորգորայի մեր սիրելի ժողովրդին կրոնական, հոգևոր ու կրթական գործին հառաջդիմության համար։ Եվ կակնկալե, որ նորընտիր վարչությունը աշխատի իրագործել տեղվույն հայ դպրոցի շինության ծրագիրը, որուն համար անցյալ նոյեմբերին սրբազան հոր ներկայության եղան ավելի քան 42.000 պեսոյի խոստումներ, կմաղթե պատվարժան վարչության աստվածային օրհնություններ և հաջողություն իրենց եկեղեցանվեր և ազգանվեր ծառայության մեջ։

(Բուենոս-Այրես, ՀԱՅ ԿԵԴՐՈՆ,
1955 թ., մայիս)

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

(Գրական-հասարակական 35-ամյա գործունեության առթիվ)

Վերջերս Սիդնեյում նշվեց հայտնի բանասեր-հայագետ Արամ Երեմյանի բանասիրական-գրական, հասարակական-ուսուցչական բեղմնավոր գործունեության 35 տարին։

Արամ Երեմյանը մեր հին սերնդի այն ներկայացուցիչներից է, որոնք ստացել են հիմնավոր լուրջ կրթություն և պատրաստություն։ Բավական է ասել, որ նա իր ժամանակին սովորել է Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում, որտեղ նա օգտվել է ճեմարանի մատենադարանի հարուստ ձեռագրերից, ապա հետևել է Վիեննայի համալսարանի պատմա-բանասիրական դասընթացին, հանգամանորեն ուսումնասիրելով Մխիթարյան հայրերի մատենադարանի հայկական հարուստ ձեռագրերը։

1915 թվականից Երեմյանը հաստատվել է Իրանի Սպահան նահանգի Նոր-Ջուղա հայաբնակ քաղաքում։

Հաստատվելով հայ ազգագրագետին և բանասերին հարուստ նյութ մատակարարող Պարսկաստանի այս նշանավոր հայկական անցյալ ունեցող քաղաքում, երիտասարդ և ավյունով լեցուն Երեմյանը մեծ խանդավառությամբ լծվում է գիտական-բանասիրական լուրջ որոնումների և աշխատանքների։ Նա մտնում է ժողովրդի մեջ, ուսումնասիրում նրա բարքերը, սովորությունները, մասնակից լինելով նրա ուրախություններին, ցավերին, նրա առօրյա կյանքին և աշխատանքին։ Անխոնջ բանասերը իր մեղվաջան աշխատանքի շնորհիվ կարողանում է այդ

տարիներին երկու ստվար հատորների մեջ ամփոփել հայ ժողովրդի անգիր բանահյուսության թանկագին գանձերը՝ «Զարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունից» (տպ. Վիեննա, 1923 թ.) և «Փշրանքներ Ջուղահայ բանահյուսությունից» (տպ. Վիեննա, 1930 թ.)։ Այս ստվարածավալ դիտական-բանասիրական աշխատությունները արժանացան հայ առաջավոր մտավորականության անկեղծ հիացմանը և գովասանքին։

Երեմյանը սակայն չի բավարարվում միայն ժողովրդական բանահյուսության նմուշների հավաքումով։ Նա ուսումնասիրում է Պարսկաստանի իր ապրած հայաշատ շրջանի ազգագրական հետաքրքիր և հարուստ նյութերը, հրատարակելով «Սպահանի Զարմահալ գավառը» հատորը, որը նույնպես արժանանում է բարձր գնահատանքի։ Այս շրջանում Երեմյանի կատարած երկրորդ ամենալուրջ աշխատանքը կարելի է համարել նրա հայ աշուղների գործերի ուսումնասիրությունը, որը հեղինակի համառ պրպտումների և հետազոտման տքնաջան աշխատանքի արդյունքն է։ Մեկ առ մեկ հավաքելով ժամանակի մոռացության փոշու տակից մինչ այդ անհայտ մնացած հայ բանաստեղծ-աշուղների գործերը, նա դրանք դարձրեց ընթերցող հասարակության սեփականություն։ Երեմյանի այս աշխատության կապակցությամբ չի կարելի մոռանալ մի կարևոր հանգամանք, այն, որ Երեմյանը կարողացավ ապացուցել իր գիտական, պատմաբանական համեմատական մեթոդով, որ հայ աշուղական բանահյուսությունը միանգամայն ինքնուրույն, ինքնատիպ է, ունեցել է իր զարգացման ուրույն օրինաչափությունը և չի ենթարկվել պարսկական կամ թյուրքական բանահյուսության ազդեցությանը, ինչպես ոմանք պնդում են, պաշտպանելով սխալ տեսակետ այդ հարցում։

Արամ Երեմյանը 1928 թվականին փոխադրվում է Հայաստան։ Նրա վրա խորունկ տպավորություն է թողնում հայրենի երկրի մշակութային բազմակողմանի կյանքը։ Երևանում նա վարում է տարբեր պաշտոններ. մեկ նրան տեսնում ենք Պետական թանգարանի գիտական հսկիչ, մեկ խմբագրում է «Սևան» երաժշտական ժողովածուն։

Արամ Երեմյանի պատմա-բանասիրական երկերի գլուխ գործոցը նրա «Ռուսահայ թատրոնի պատմությունը» խորագրով 754 էջանոց պատկառելի հատորն է, որն իսկապես հավաստում է հեղինակի մեծ արժանավորությունները որպես բազմահմուտ անխոնջ բանասերի։

Արամ Երեմյանի գրիչը ոիղուն է և վաստակը՝ բազմազան. նրա երկերի թիվը 30-ից ավելի է, բազմաթիվ պարբերականներում, հանդեսներում, թերթերում հրատարակվել են նրա հոդվածները, որոնց նյութերը բազմազան են, նրանք ընդգրկում են ժողովրդական ստեղծագործության, անցյալի որևէ գրողի, երաժշտի, մանրանկարչի, ծաղկողի գործի ծանոթությունը, վերագնահատումը, արժեքավորումը։

Արամ Երեմյանը պարբերաբար իր շահեկան հոդվածներով աշխատակցում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին, հարստացնելով նրա պատմա-բանասիրական բաժինը։

Իր կյանքի վերջին 35 տարիների ընթացքում Երեմյանը աշխատակցել է բազմաթիվ հայ պարբերականների, որոնք հրատարակվել են Թիֆլիսում, Բաքվում, Վիեննայում, Վենետիկում, Փարիզում, Կոստանդնուպոլսում, Իրանում, Անթիլիասում, Էջմիածնում։

Երեմյանը երկար ժամանակ զբաղվել է նաև ուսուցչական-մանկավարժական գործունեությամբ։

Երեմյանը կյանքի խրախուսելի և փառավոր ուղի է անցել։ Վեր դասելով հասարակական օգտավետ աշխատանքը ամեն ինչից, նա զարմանալի աշխատասիրությամբ, հայ Հայրենիքին և հայ ժողովրդին նվիրված սիրով իր արժանավոր լուման է մտցրել գրականության, պատմության, արվեստի, բանահյուսության այն մեծ, հարուստ և գեղեցիկ գանձարանը, որը պատկանում է հայ ժողովրդին։

Ստեղծագործական նոր հաջողություններ ենք ցանկանում հայ ժողովրդի հայրենասեր, անխոնջ և մեղվաշան մշակին՝ իր պատմա-բանասիրական հետագա աշխատանքներում։

Ռ. Մ.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

„ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՄԽԻԹԱՐԻ ԳՈՇԻ"

(Հրատարակություն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Երևան, 1954 թ.)

„Армянский Судебник Мхитара Гоша"

(издательство АН Армянской ССР, Ереван, 1954 г.)

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ ռուսերեն լեզվով լույս է տեսել հայ միջնադարյան կուլտուրայի նշանավոր հուշարձանը՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»։

Հին հայ գրականության մեծանուն ու արժեքավոր գործերից մեկի ռուսերեն նոր հրատարակությունը նշանակալից ավանդ է հայ մատենագրության ուսումնասիրության ասպարեզում։ Գրքի լույս ընծայումը հնարավորություն է տալիս դարավոր ու հարուստ կուլտուրայի արժեքավոր երկերից մեկը ծանոթացնել Սովետական Միության ժողովուրդներին և կարելիություն տալ ազատագրծելու իրավունքի պատմությամբ զբաղվող մասնագետներին։

Գրքի ներկա ռուսերեն թարգմանությունը կատարված է ըստ առ այժմ միակ հայերեն տպագրական տեքստը հանդիսացող «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց»ի, որը հրատարակել է Էջմիածնի միաբան և Գայանեի վանքի վանահայր Վահան վարդապետ Բաստամյանցը Վաղարշապատում, 1880 թվականին։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» իր ժամանակին ամենատարածված գրավոր հիշատակարաններից մեկն է եղել։ Բավական է նշել, որ ներկայումս միայն Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարանում պահպանվում են 33 ձեռագրեր, որոնք ներկայացնում են Գոշի նշանավոր աշխատության լիակատար կամ ոչ լիակատար օրինակներն ու առանձին հատվածները, որոնցից հնագույնը հանդիսանում է № 488 ձեռագիրը։ Բացի այդ, Վենետիկի Մխիթարյան հայերի գրադարանում պահպանվում են աշխատության տասից ավելի ձեռագրեր։ Աշխատության բազմաթիվ ձեռագրեր այժմ գտնվում են Երևանում, Փարիզի, Վիեննայի և այլ գրադարաններում։





Գրախոսվող աշխատության առաջաբանի հեղինակ Բ. Մ. Հարությունյանը, հենվելով Վահան վարդապետ Բաստամյանցի և պրոֆ. Սամվելյանի հետազոտությունների վրա, ցույց է տալիս, որ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի հիմքում բնկած է Գոշի Դատաստանագիրքը, որը ժամանակին զգալիորեն վերամշակվել է Կիլիկիայի տեղական պայմաններին համապատասխան։

Հայտնի է, որ Գոշի «Դատաստանագիրք Հայոց»ը իր ժամանակին լայն տարածում է գտել նաև Լեհաստանի և Ղրիմի հայաբնակ գաղութներում։ 1862 թվականին պրոֆ. Բիշոֆֆի կողմից հայանաբերվեց «Հին

Գրախոսվող աշխատության առաջաբանի հեղինակ Բ. Մ. Հարությունյանը, հենվելով Վահան վարդապետ Բաստամյանցի և պրոֆ. Սամվելյանի հետազոտությունների վրա, ցույց է տալիս, որ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի հիմքում բնկած է Գոշի Դատաստանագիրքը, որը ժամանակին զգալիորեն վերամշակվել է Կիլիկիայի տեղական պայմաններին համապատասխան։

Հայտնի է, որ Գոշի «Դատաստանագիրք Հայոց»ը իր ժամանակին լայն տարածում է գտել նաև Լեհաստանի և Ղրիմի հայաբնակ գաղութներում։ 1862 թվականին պրոֆ. Բիշոֆֆի կողմից հայանաբերվեց «Հին

հայկական իրավունքը լեմբերգումն աշխատությունը, որը ներկայացնում է Գոշի Դատաստանագրքի թարգմանությունը լատիներեն։ Դատաստանագիրքը թարգմանվել է նաև լեհերեն, ինչպես և դրիմա-թաթարական լեզուներով։ Թաթարական թարգմանության հնագույն օրինակը ներկայացնում է 1563 թվականի ձեռագիրը։ Գոշի Դատաստանագիրքը ժամանակին լայն տարածում է գտել նաև Վրաստանում։ Հայտնի է, որ 18-րդ դարի սկզբում, Վրաստանի թագավոր Վախտանգ 6-րդի հանձնարարությամբ, Վրաստանի համար դատաստանագիրք կազմողները լայնորեն օգտվել են Գոշի աշխատությունից, իսկ Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Գոշի մշակած հայկական իրավունքի նորմաների մի մասը մտավ ռուսական կայսրության օրենսդրության մեջ։

Գոշի «Դատաստանագիրքը» կարևորագույն աղբյուր է 10—12-րդ դարերում հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի, և մասնավորապես հայ իրավունքի պատմության ուսումնասիրության համար։ Գաղափարները, հենվելով Դատաստանագրքի հոդվածների վրա, բազմակողմանի գաղափար կարող է կազմել 10—12-րդ դարերում Հայաստանում գոյություն ունեցող ավատական հարաբերությունների մասին։ Գրքի այն բազմաթիվ հոդվածները, որոնց մեջ բացահայտվում են սոցիալական-իրավական հարաբերությունները, բացառիկ մեծ արժեք են ներկայացնում նշված շրջանի հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձությունները հասկանալու համար։

Իրավունքի հարցերում Գոշը պաշտպանում է այսպես կոչված «ինաուորական օրենքը», որը ըստ նրա գերագույն, ատյանային բանականության արտահայտությունն է մարդու մեջ։ Դատական գործերը հիշտ լուծելու համար նա խորհուրդ է տալիս դիմել ատյանական բանականության, կրոնի վերաբերյալ գրքերին, իսկ հոգևոր հարցի պատասխանը չգտնելու դեպքում՝ դիմել սովորույթներին, որոնք գարերով արմատացած են մարդկանց մեջ։ Նա գտնում է, որ մարդկային բնավորությունը հակված է դեպի վիճելի հարցերի արդարացի լուծումը, որն իր արտացոլումն է գտնում սովորույթների մեջ։

Գոշը սահմանում է երկու տեսակ կանոններ, որոնցից մեկը կոչված է ուղղելու հոգին, իսկ մյուսը դատական օրենքներն են, որոնք կոչված են ուղղելու մարմինը։ Գոշը գտնում է, որ պետք է գոյություն ունենան երկու տեսակի դատարաններ՝ հոգևոր և աշխարհիկ։ Եվ որովհետև 12-րդ դարում Հայաստանը զրկված էր քաղաքական իրավունքներից, ուստի նա եզրակացնում է, որ աշխարհիկ դատարանի իրավասությունն ևս պետք է հանձնել եպիսկոպոսներին, մինչև այն ժամանակ, երբ կվերականգնվի թագավորի և իշխանների տիրապետությունը։

Այն հանգամանքը, որ Գոշը Դատաստանագրքում մտցրել է մի ամբողջ շարք օրենքներ, որոնք վերաբերում են թագավորի իրավունքներին, վկայում է, որ նա անխախտ հավատ ուներ, որ Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը, վաղ թե ուշ, կվերականգնվի։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ժամանակին ծառայել է իբրև ղեկավարող իրավական ձեռնարկ հայ դատական օրգանների համար։

Ինչպես հայտնի է, «Դատաստանագիրքը», աշխարհիկ օրենքների հետ մեկտեղ, իր մեջ պարունակում է մեծ թվով հայ Եկեղեցու կանոններ, որոնցով ժամանակին ղեկավարվել է դաղութահայությունը։

Գրախոսվող գրքի թարգմանությունը դրաբարից ռուսերեն կատարել է Ա. Ա. Գապովյանը։ Աշխատությունը խմբագրել և նրա առաջաբանն ու ծանոթագրությունները գրել է Բ. Մ. Հարությունյանը։ Գատասխանատու խմբագիրն է Լ. Ս. Խաչիկյանը։

Ս. ՄԵԼԻՔ-ՈՍԿԵՓԱՆՅԱՆ

ՀԱՆԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. ՆԻԿՈԼ ՍԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԲԱՎԵՑՅԱՆԻ
(1879—1955)

Մայիսի 3-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, խոր ծերության հասակում ի Տեր հանգչավ Մայր Աթոռի սիրված ու հարգված միաբան արժանապատիվ Տ. Նիկոլ (Տ. Նիկողայոս) ավագ քահանա Բավեյանը։

Հանգուցյալը ծնվել է Նոր-Բայազետում 1879 թվին։ Նա իր սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում և հետագայում շարունակել Երևանի թեմական դպրոցում։

Քսան տարեկան հասակում, 1899 թվականին, ընտանեկան հոգսի ծանրության տակ, նա գալիս է Թբիլիսի և աշխատում Ս. Սարգիս եկեղեցում, որպես տիրացու։ Կարճ ժամանակում, այստեղ իր գեղեցիկ ձայնով, գրավում է թե՛ հոգևոր իշխանության, թե՛ քահանայության և թե՛ ժողովրդի համակրությունն ու ուշադրությունը։ Նրա մանկության տարիների երազն է լինում հոգևորական դառնալ և անշահախնդիր ոգով ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն։ Բայց թերի ուսումը թույլ չի տալիս նրան Թբիլիսիի նման տեղում հոգևոր կոչում ստանալ և քահանայագործել։ Հաջորդ տարիները Տ. Նիկոլի համար լինում են ինքնակրթության և վերապատրաստման աշխատանքներին նվիրված համառ ճիգի տարիներ։ Ինքնակրթությամբ հաջողվում է ձեռք բերել կայուն գիտելիքներ հոգևոր ասպարեզում ծառայելու համար և վերջապես Թբիլիսիի մոտ գտնվող Լիս գյուղի եկեղեցու համար ձեռնադրվում սարկավագ։

Թբիլիսիի հասարակությունը չէր ուզում զրկվել իր քաղցրախոս խոսնակից, և ահա շուտով նա Թբիլիսի է գալիս և սպասավորում Վանք կոչված առաջնորդանիստ Մայր եկեղեցում։

1915 թվականին Թբիլիսիի առաջնորդական փոխանորդ Տ. Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանից ձեռնադրվում է քահանա։ Իր եկեղեցական երգեցողությամբ նա նվաճում է Թբիլիսիի հասարակության համակրանքն ու բարեկամությունը։ Արդարև երաժշտական մեծ վայելք էր լսել նրա «Տէ՛ր, ողորմեա՛»-ն, մեղեդիներն ու մենակները։ Իր քաղցր ու պարզ բնավորությամբ Տեր Նիկոլը գրավում է բոլորի սերն ու համակրանքը։ Թբիլիսիի Վերա կոչված գերեզմանատան եկեղեցին նրա օրով դառնում է մի ժողովրդական ուխտավայր։ Ամեն կողմից գալիս են լսելու Տ. Նիկոլի անուշ ձայնը։ Նրա շնորհիվ բարեկարգվում է գերեզմանատունը։

Երկար տարիներ նա պաշտոնավարել է նաև Թբիլիսիի Նորակառույց Քամոյանց եկեղեցում, որը, շնորհիվ Տ. Նիկոլի երգեցողության, դառնում է Թբիլիսիի հայ հասարակության ամենահաճախվող եկեղեցիներից մեկը։

1930-ական թվականներին, Բաքվի հայ հասարակության հրավերով, Տեր Նիկոլը տեղափոխվում է Բաքու՝ քահանայագործելու տեղի մայր եկեղեցում։ Այստեղ ևս նա գրավում է ընդհանուրի սերն ու համակրությունը։

Ուր էլ որ գնացել է, իր հոգևորական, նա գտնվել է իր դիրքի և աստիճանի համապատասխան բարձրության վրա և օրինակելի նախանձախնդրությամբ ծառայել է իր հոտին և եկեղեցուն։ Տ. Նիկոլը աչքի էր ընկնում հայ քահանաների մեջ հայ շարականների իմացությամբ և անթերի կատարմամբ։ Նա եկեղեցական երգեցողության զարդն էր։

1932 թվականին Թբիլիսիում, Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի տեղակալության օրոք, Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի հրամանով,

հրավիրվում է Ս. Էջմիածին՝ որպես Մայր Տաճարի ավագ դասապետ։ Մայր Աթոռում երկար տարիներ նա պատվով ու ձեռնհասությամբ կատարում է իր պաշտոնը մինչև իր կյանքի վերջին օրերը, երբ անողոք հիվանդությունը նրան նետեց անկողին։

Իր երկարամյա և ժողովրդանվեր պաշտոնավարության համար հանգուցյալը պարգևատրվել է ծաղկյա փիլոնով, քահանայական լանջախաչով, ավագ քահանայությամբ։ Գեորգ Զ. Կաթողիկոսը նրան պարգևատրել է վարդապետական ականակուռ լանջախաչով։

Մայիսի 6-ին կատարվեց հանգուցյալի լվացման կարգը և հուղարկավորությունը դեպի Ս. Գայանեի վանքը, իսկ հետևյալ օրը՝ թաղումը, հոծ բազմության ներկայությամբ։

Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որը և դամբանական խոսեց՝ դրվատելով հանգուցյալի բեղմնավոր գործունեությունը հայ եկեղեցական անդաստանում։

Զանազան քաղաքներից հանգուցյալի հարազատների և Գերագույն Հոգևոր Խորհրդի անունով ստացվել էին հարյուրավոր ցավակցական հեռագրեր։

Հանգուցյալի մարմինը ամփոփվեց իր տիրուհու գերեզմանի կողքին, Ս. Գայանեի միաբանական գերեզմանատանը։

Տ. Նիկոլի մահով Մայր Աթոռը կորցրեց իր հարազատ և հավատարիմ միաբանին, իսկ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր հավատավոր և օրինապահ սպասավորներից մեկին։

Ապրելով բավականին երկար և շփվելով մեր ազգային-եկեղեցական շատ դեմքերի հետ, նա նրանց կյանքից, գործունեությունից պատմում էր շատ համեղ և արժեքավոր, հաճախ անմոռանալի դեպքեր, պատմում էր ժողովրդական բառ ու բանով, համով ու հոտով, և գեղագիտական վայելք էր լսել նրան։

Թարի էր սրտով և ազնիվ, ընկերասեր, զվարճախոս. բաց էր նրա սեղանը բոլորի առաջ։ Ահա թե ինչու թաղման օրը շատեր էին եկել հեռու տեղերից իրենց վերջին հարգանքը մատուցելու Տ. Նիկոլին և խոնարհվելու նրա թարմ հողակույտի առաջ։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ է։»

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

«ՀԱՄԱՊԱՏՈՒՄ»

Զուտ ավետարանական պատուանակությունը շարադրելով և ճամանցնելով և բացատրելով պատմված։ Պարզաբանեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նախկին պատրիարք։

(Ցպատահ Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո. Անթիլիաս, Լիբանան, 1953 թ., 1104 էջ)

Օրմանյան սրբազանի հանրաճանաչ այս գիրքը, որը լավագույն ձեռնարկն է հայ հոգևորականության և եկեղեցական հասարակության համար և միակը Ավետարանի փրկարար պատգամները հասանելի հայ հոգիներին հասցնելու գործում, հրատարակվել է նորից, շնորհիվ ամերիկաբնակ Կյուրեղյան եղբայրների նյութական օժանդակության, Կիրակնօրյա վարժարանների նախկին տնօրեն պարոն Լևոն Զենյանի նոանդան գործունեության և Անթիլիասի Կաթողիկոսարանի տպարանի աշխատողների անդուլ ջանքերի։

Հատորը նվիրված է Կյուրեղյան եղբայրների հանգուցյալ մոր՝ Օվսաննա Կյուրեղյանի հիշատակին։

Գիրքը կազմված է խնամքով։ Առաջին էջում տեղավորված է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի նվաիրը։ «Համապատում»-ի այս նոր հրատարակության առթիվ Կաթողիկոսական տեղապահ Եսդ արքեպիսկոպոսի համատոհ նախաբանից հետո, տեղավորված է Թյուրքիա Հայոց Պատրիարք Գարեգին արքեպիսկոպոսի համատոհ առաջաբանը։ Սրբազանը գրում է այն մեծ ու կենսարար ազդեցության մասին, որ ունեցել է Օրմանյան սրբազանի գործը («Համապատումը») Հայ սերունդների դաստիարակման գործում։ «Այս գիրքը տեղ պետք է ունենա,— գրում է նա,— ամեն հայ տունի ներս և բոլոր գիրքերեն վեր, ոչ միայն իբրև զարդ անվողոպտելի, այլ նաև ու մանավանդ որպես ներշնչարան հոգեպարար խոհերու և կենցաղական կրոնազգած մաքուր զգացումներու...»

Հատորի վերջում տեղավորված են բազմաթիվ ցուցակներ, որոնց ամեն կերպ դյուրացնում են «Համապատում»-ից օգտվելու կարգը, բացատրում են համատատությունները և այլն։ Գրքի վերջում տեղավորված են տեղանունների և անձնանունների ցանկերը։

«ԱՄԻՏԱՅԻ ԱՐՔԱԳԱՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱԿՈՉՈՒՄՆ» Բ. ՀԱՏՈՐ

ՏԻԳՐԱՆ ՄԿՈՒՆԴ

(Ուիճոմբ. Նյու-Ջերզի. Միացյալ Նահանգք Ամերիկայի. ի ԺԴ հոր ՌՆԴ. սեպտեմբեր 24. 1953 թ.. 413 էջ)

Հարգա հեղինակի կազմած այս հատորը իր մեջ ամփոփում է Ամիտայի (Տիգրանակերտի) կյանքի և քաղաքական հասարակական անցուդարձերի վերաբերյալ զանազան նյութեր։ Գիրքը սկսվում է Ամիտայի տնտեսական վիճակի նկարագրությամբ, բնութագրվում են այն արհեստները, որ տարածված են եղել այդ շրջանում, ապա հեղինակը Ամիտայի կրթական վիճակի մասին տալիս է մի քանի տեղեկություններ։

Շարունակությունն մեջ բավականին տեղ է հատկացված Սամվել Հ. Զորյանի հուշերին. այդ հուշերը ականատեսի լավագույն նոթերն ու հիշողություններն են թյուրքական բռնակալ իշխանության վարած դաժան հարկային քաղաքականության։

Հուշերին վերաբերյալ գլխում, «Սարի հայրենակիցներու կյանքին» խորագրի տակ, տեղեկություններ են տրված սարերցիների, որպես հայերին բախտակից քրիստոնյա ժողովրդի, ծանր վիճակի մասին սուլթանական թյուրքիայի դաժան տեռիզմի տակ։

«Հեղափոխական փոստակցություններն Ամիտայի մեջ» խորագրի տակ նկարագրվում է բռնակալ ռեժիմի տակ հեծող հայ ժողովրդի ընդվզման կազմակերպման գործում հանդես եկող հայվական փոստակցությունների ծավալած պայքարն ու գործունեությունը։

«Եղեռահանությունն, — ականատեսի պատմվածքը — խորագրի տակ հեղինակը ամենասարսռազդեցիկ գույներով նկարագրում է մղձավանջային օրերի սոսկալի դեպքերը, ինչպես և հայ եղեռնից հրաշքով ազատված մի շարք ականատեսների ապշեցնող պատմությունները։

«Վերջաբան»— Ամփոփումն է հատորի. բայց ինչպես հեղինակն է ասում, եղեռնի օրերի այդ պատմվածքները անվերջանալի են. անհատնում։ «Աննկարագրելի այս ողբալի քաղաքակիրթ ազգաց պատմության մեջ նմանը չունի»,— գրում է հեղինակը և եզրակացնում՝ «Ազգերու ամենեն թշվառն ու ամենեն եղկելին, լքված ամենքեն, միմիայն ռուսական հզորագույն զորության տակ կենդանություն ստանալ...»

413 էջից բաղկացած Տիգրան Մկունդի կազմած այս գնահատելի գործը կազմված է վերին աստիճանի խնամքով, լավագույն թղթի վրա։ Հատորում կան բազմաթիվ նկարներ Տիգրանակերտի կյանքից, ինչպես նաև դիմանկարներ ազգային-հասարակական գործիչների և տիպեր, սրտաճմլիկ, սարսռազդեցիկ պատկերներ հայկական կոտորածների շրջանից։

---

* *Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վերջերս արտասահմանից ստացվել են բազմաթիվ հայերեն հրատարակություններ։ Անհրաժեշտ ենք համարում մեր ընթերցողներին ծանոթացնել այդ հրատարակություններից նորագույնների՝ 1953 թվականից հետո տպագրվածների հետ։— ԽՄԲ.։*

«Ամիսների արձագանքներու» վերտառությամբ գրքի Բ. հատորում հեղինակը իրականությունն զնահատել է իր վերահիշյալ նույնանուն աշխատության Ա. հատորի վերաբերյալ Սիփոնի հայ մամուլում (տասնութներեք, օրաթերթեր) լույս տեսած գրախոսականները, որոնք բոլորն էլ անխտիր դրվատում են հարգելի հեղինակի շնորհալի երկասիրությունը։

«ՀԱՅՐԵՆԻ ԱՊԳՈՒՄՆԵՐ»

(Լրատարակություն Հայ ուսուցչական միության. Բեյրութ, 1954 թ.)

Գատեներգարդ ապրում է սույն հրատարակությունը, Բոսֆորակում է երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղման և հուղարկավորման տեսարաններն ու նկարագրությունները, ինչպես նաև հայրենի երկրի (Սովետական Հայաստանի) բնական գեղեցկությունները, շինարարությունը, պատմական կոթողները, գիտության, արվեստի և մշակույթի խոյանքները, լիքանանից մեկնած պատվիրակության ակտիվաբար վիպայությունները և հաղորդված գեղեցիկ նկարներով։

Ժողովածուի առաջին էջում տեղավորված է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աշտարհյանի շնորհակալական խոսքը տպված Ուսուցչական միությանը՝ վերահիշյալ ազգակար գործի գաղափարը հղանալու և իրագործելու համար։

Ժողովածուի նկարները տրամադրված են երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի թաղման առթիվ լիքանանից մեկնած պատվիրակության կողմից։ Գլխավոր պատասխանությունը՝ «Ցիլիկոզրաֆ Տիտոս», տպագրությունը՝ «Տպարան «Ճիրակի», տպագրանակը՝ 2.000 օրինակ։

«ԺԱՂԿՅԱ ՓՈՒՆՋ»

Պատմություններ, պատկերներ, ոտանկներ։

ԱՐՓԻԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(«Նոր դար» տպարան, Ֆրեզնո, 1954 թ., 287 էջ)

Հարգելի հեղինակը իր հրատարակած գրքի առաջաբանում տալիս է իրեն բնորոշում է այն։

Գիրքը պարունակում է իր իսկ հեղինակի կյանքի 30 տարիների ընթացքում կատարված գործնական ու բարոյական դասերը և իր կյանքի հարուստ փորձը, ինչպես և իր հորից և որդիներից քաղած պատմությունները, իր կյանքի հուշերը, տպավորությունները, հանդիպումները։

Հեղինակը գիրք գրելու հավակնություն չի ունեցել և այս նրա առաջին փորձն է, մի համեստ դրվագ ու մտքի գործ, որը խրախուսելի է։

Գրքի վերջում տեղավորված են հեղինակի չափազանց բանաստեղծությունները և իր անձնական կյանքին վերաբերող նկարներ։

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԵՄԸ»

ԱՐՄԵՆԱԿ ԳՐԱՁՅԱՆ (Ա. ՄԱՆԿԱՍԵՐ)

(Բեյրութ, 1954 թ., 327 էջ)

Հեղինակը ձեռնարկել է մի դժվարին և պատասխանատու աշխատանքի՝ տալ մանուկներին հասանելի մի գրական երկ, մշակելով մանկական գրականության այնքան անհրաժեշտ պահանջից։ Ներկա հատորի մեջ եղած նյութերը մեծ մասամբ մշակված են մանավորապես բեմի համար, որպես մանկական թատերգություններ։ Բավական տեղ է հատկացված նաև լավագույն ստեղծագործություններին, որոնցից շատերը ձայնագրված են նվագական ձայնանիշերով։ Մանկական այս հատորի նյութերը քաղ իրենց թեմաների բաժանված են հետևյալ կարգի՝ ամանորի և Ս. Մեսրոպյան, հայրենասիրության, գարնան և բնության զարթոնքի, ձեռքական սիրո և դպրոցական կյանքի վերաբերյալ։

Գրքի վերջում տեղավորված են զանազան նյութեր վերջերս մանուկների առարկա կյանքից և կենցաղից։ Գիրքը պատկերազարդ է և գեղեցիկ է խնամքով։

«ՀԱՅ ԿԻԴՐՈՆ»

ՏԱՐԵՑՈՒՅՑ, 1955

(Եմրազրեց Հարությունյան վարդապետ Մուշյան. Գ տարի, 334 էջ)

«Հուշարձան.— Տարեցույցիս այս երրորդ բիվը սիրով կնվիրեմ 1915-ի կոտորածին զոհվող մեկ միլիոն ճանաչակներուն՝ անոնց մեծվան մոռացելակը ճանաչելու մխիթարությամբ»։

Գիրքը կազմված է տարեցույցների հայտնի հեղինակ Քեռդիկի հետևողությամբ։ Կազմող հեղինակը գնահատելի աշխատանք է կատարել, այն կարողացել է սփյուռքահայությանը ներկայացնել գեղեցիկ, գեղարվեստական նրբությամբ օժտված մի ժողովածու։

Տարեցույցում տեղ են գտել ինչպես սփյուռքահայ գրողների, այնպես և սովետահայ գրողների գրվածքները (Խաչատրյան, Շիրազ և այլն)։ Տեղ է հատկացված երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի կյանքին և գործունեությանը—Զգոն ծայրագույն վարդապետի խոսած ճառը (էջ 29)։ Տարեցույցում ընդհանրապես տեղ են գտել ազգային-կրոնական, աշխարհագրական, պատմա-գրական բնույթ ունեցող մի շարք հոդվածներ, պատմվածքներ և այլն, ինչպես և բժշկական, կենսաբանական նորություններ և հետաքրքիր համառոտ տեղեկություններ։

«Հայրենի վերնագրի տակ տրված են Սովետական Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, արվեստի, ճարտարապետության և շինարարության վերաբերյալ տեղեկություններ։

Տարեցույցում տեղ են գտել ընտիր ճաշակով մի շարք հետաքրքիր նկարներ Սովետական Հայաստանի տեսարժան վայրերից։

Գիրքը կազմված է ճաշակով և գեղարվեստորեն։